



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՄԻՆԱՍ ԳԱՐԱՄԱԶԵԱՆ

ՆՈՐ ԳԱՍՏԱԳԻՐՔ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Ի. ՊԵՏԱ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

محارف عموميہ نظارت جلیل سٹک و خصتیله طبع او لشادر،



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԱՇԱԽԵԱՆ

(Urmilur 6)

1888


1830

M 42

30

1281

1367. 447A.



Կ. Հ. Հայոց ուսուցչութեան
ՄԻԱՍՆԻԿ ԳԱՐԱՄԱՔԵԱՆ

Կ. Հայոց

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ 1803

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏԱ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

1830

معارف հայութ նظարտ Ջլիլ Ստ քհմտիւն Թայ օլ լուշնդր.



Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՇՏԱՆԵԱՆ
(Արամեան)

1888



Իմ ազնիւ բարեկամ Մեծ Գարեգին Եպիսկոպոս Պահտառ-
լեան առաջարկած լինելով մեզ յօրինել մի Համաս Հայ
Ազգային Պատմութիւն, պատրաստեցինք զայս գործ, որ
իւր դիւլմրոնելի ոճով, պարզ ու մեկին բացադրութեամբ,
նիւրոց ճոխութեամբն, ազգային ժամանակակից դեպքերու և
անցից նոխ ու նշարիտ պարունակութեամբը, ամենակարեւոր
տեղեկութեամբքն, և մանաւանդ՝ զեոյ անհաւատալի աժամու-
թեամբ կը յուսանք քէ կարեւոր տեղ մը բռնէ մեր ազգային
կրթական գործին մէջ և զգալի պակաս մը լիցնէ :

Սյստ կ'ամբողջանայ ընթացքը մեր յօրինած Հայ-Ազգային
Պատմութեան, որ միայն վասն օգտի եւ պիտոյից ազգային
մանկաւոյն, որոյ սրտի եւ մտաց կրթութեան աշխատողներէ
մին գտնուած ենք քառորդ դարէ ՚ի վեր :

Մեք երբէք չենք ուզեր համեստութեան շրջանէն դուրս
ենելով՝ պարծի մեր գործոցը վրայ, գովեստ շաղային եւ
պարսաւով այլոց գովծերն ու աշխատութիւնները՝ փառա-
ւորին :

Կը բողունք որ ձեռնհասք զնահատեն մեր գործերն
եւ ազգային մանկան եթէ դոյզն ինչ օգտուի, մենք լիուի
փարձատրուած կը համարինք զմեզ :

Ա. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

2 Սեպտեմբեր 1888, Կ.Պոլիս



ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ ԵՒ ՕԳՈՒՏԸ

ՀԱՅՑ. Ի՞նչ կը սորվեցնէ Հայոց պատմութիւնը:

ՊԱՏ. Հայոց պատմութիւնը կը սորվեցնէ Հայ-Ազգին ծագումը, պարագաները, ծագման ժամանակը, բարքը, սովորութիւնները, յատկութիւնները, առաքինութիւնները, կրօնքը, քաղաքականութիւնը, քաղաքակրթութիւնը, ազգային՝ բարոյական՝ կրթական՝ ընկերային ու ընտանեկան կեանքը, ներքին վիճակն ու օտարաց հետ յարաբերութիւններն ու դաշինքները, դէպքերն ու անցքերը, արհեստները, վաճառականութիւնը, երկրին գիրքն ու սահմանները, օդը, ջուրը, կիման, բերքերն ու արտադրութիւնները, եւն. եւն.:

Հ. ի՞նչ բանի կը ծառայէ Պատմութեան ու
սումը :

Պ. Պատմութիւնը կարդալով՝ ճշմարտութիւնը
կը գտնենք, մեր միտքը կը պատրաստուի ճանչ-
նալ ու միրել ճշմարիտը, գեղեցիկն ու օգտա-
կարը եւ խորշիլ ստութենէ, ագեղէ ու վնասա-
կարէ, և ըստ այնմ՝ յարդել ու պատուել յի-
շատակը մեր այն նախահարց՝ որ Ազդին և Եկե-
ղեցւոյն համար բարի եւ օգտակար գործեր
ունեցած են, այսինքն, երախտագէտ ըլլալ Ազ-
դային-Բարերարաց :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ՀԱՐՑՈՒՄ. Հայոց պատմութիւնը քանի շր-
ջան կը բաժնուի :

ՊԱԾՈՍԽԱՆ. Հայոց պատմութիւնը գլխաւո-
րաբար հինգ շրջան կը բաժնուի, Պ. Հայկա-
զանց, Բ. Արշակունեաց, Գ. Բագրատունեաց,
Դ. Ռուբինեաց եւ Ե. Ժամանակ հպատակու-
թեան :

Հ. Հայկազանց իշխանութիւնը Երբ կ'սկսի :

Պ. Հայկազանց իշխանութիւնը կ'սկսի Քրիս-
տոսէ Երկու հազար Երեք հարիւր յիսուն տա-
րի առաջ :

Հ. Հայը քանի տարուան պատմական ազդէ:

Պ. Չորս հազար Երկու հարիւր Երեսուն եւ

ութը տարուան պատմական ու պատուական
հնութիւն ունեցող Ազդ մ'է :

Հ. Հայկազանց իշխանութիւնը Երբ կը վեր-
ջանայ :

Պ. Քրիստոսէ Երեք հարիւր յիսուն տարի ա-
ռաջ, 1800 տարի տեւելով :

Հ. Արշակունեաց իշխանութիւնը Երբ կ'սկսի :

Պ. Արշակունեաց իշխանութիւնը կ'սկսի Քրիս-
տոսէ հարիւր յիսուն տարի առաջ :

Հ. Երբ կը վերջանայ :

Պ. Քրիստոսէ չորս հարիւր Երեսուն Երեք
տարի յետոյ, 583 տարի տեւելով :

Հ. Բագրատունեաց իշխանութիւնը Երբ կ'ըս-
կըսի :

Պ. Բագրատունեաց իշխանութիւնը կ'սկսի
Քրիստոսէ ութը հարիւր ութսուն եւ հինգ
տարի ետքը :

Հ. Երբ կը վերջանայ :

Պ. Հազար քառասուն եւ վեցին, 160 տարի
տեւելով :

Հ. Ռուբինեանց իշխանութիւնը Երբ կ'սկսի :

Պ. Քրիստոսէ հազար ութսուն տարի ետքը :

Հ. Երբ կը վերջանայ :

Պ. Քրիստոսէ հազար Երեք հարիւր եօթա-
նասուն և հինգ տարի ետքը, 295 տարի տե-
ւելով :

Հ. Հայկազանց իշխանութեան կործանումէն
մինչև Արշակունեաց իշխանութեան ծագումը
որչափ ժամանակը անցած է:

Պ. Հարիւր ութսուն տարի :

- Հ. Այդ ժամանակը ինչ կը կոչուի :
- Պ. Ա. շրջան հպատակութեան :
- Հ. Հայք առաջին անգամ որի հպատակեցան:
- Պ. Առաջ Մակեդոնացւոց և երբը Պարթեաց, որք երբեմն Հայ ու Պարսիկ կուսակալեցով կը կառավարէին երկիրը :
- Հ. Արշակունեաց իշխանութեան կործանումէն մինչև Բագրատունեաց իշխանութեան հաստատումը որչափ ժամանակ անցած է :
- Պ. Չորս հարիւր յիսուն և հինգ տարի, որ է Բ. շրջան հպատակութեան : Այս երկրորդ շրջանի մէջ Հայք հպատակած են Յունաց, Պարսից և Արաբացւոց :
- Հ. Բագրատունեաց իշխանութեան կործանումէն մինչև Ռուբինեանց իշխանութեան կործանումը որչափ ժամանակ անցած է :
- Պ. Երեսուն և չորս տարի, որ է Գ. շրջան հպատակութեան : Այս ժամանակամիջոցի մէջ Հայաստանի տիրեցին հետզհետէ Յոյնք, Արաբացիք, Սելճուկեանք և Մելիուքք :
- Հ. Ռուբինեանց իշխանութեան կործանումէն ետք ինչ վիճակ ունեցաւ Հայաստան :
- Պ. Ռուբինեանց իշխանութեան կործանումէն մինչև մեր ժամանակը՝ հազար ութը հարիւր ութսուն և ութը՝ 513 տարի՝ սկսած է Գ. շրջանն հպատակութեան : Այս ժամանակամիջոցի մէջ Հայաստան աշխարհը բաժնուած է Օսմանեան տէրութեան ու Պարսից և Ռուսաց մէջ :

- ԲԱԺԱՆՄՈՒԽՔ ԱՇԽԱՐԴԻԽՆ ՀԱՅՈՑ
- Հ. Հին ատենը երկրին ընդարձակութիւնը որքան կը հաշուուէր :
- Պ. Հին աշխարհագիրներէ ոմանք աւելի ու ոմանը պակաս կը գնէին, բայց արդի ճիշդ հաշիւներուն համեմատ՝ քան հազար քառակուսի աշխարհագրական մղոն (իտալական) է :
- Հ. Գլխաւոր լեռները ո՞րոնք են :
- Պ. Արարատ կամ Մասիս լեռը, Կորդուաց լերինք, Տաւրոս լերանց մէկ մասը և Անտիտաւրոս՝ որ Փոքր-Հայաստանի մէջ է :
- Կան ասոնցմէ զատ փոքր լեռներ ալ, որ են Արագած, Սուկաւէտ, Նպատ, Ծաղկաց լեռան, Վարազ, Սիմ, և այլն :
- Հ. Ի՞նչ գլխաւոր գետեր կան և ո՞րոնք են :
- Պ. Եփրատ կամ Արածանի, Տիգրիս կամ Դլկ-լստ, Երասխ, Կուր և Ճորոխ, որ մեծ գետեր են, իսկ փոքրերն են Ալիս ու Մելրոս, Գայլ, Ախուրեան, Քասախ և Տղմուտ գետերը :
- Հ. Ո՞ր լիճերը կը յիշուին :
- Պ. Բզնունեաց կամ Աշտունեաց լիճը՝ որ կ'ըսուի ծով վանայ և Գեղամայ լիճ՝ որ նոյնպէս իր մեծութեան համար ծով կը կոչուի . կայ նաև կապուտան լիճը կամ Որմիայ ծովը :
- ՍԱՅՍԱԿՔ
- Հ. Հայաստան աշխարհը հին ատենը քանի՞ մաս կը բաժնուէր :
- Պ. Գլխաւորաբար երկու, այսինքն, Մեծ-Հայք և Փոքր-Հայք :

Հ. Ո՞րն էր Հայաստանի սահմանը :

Պ. Հայաստանի սահմանն էր Արեւելքէն կասպից ծովու ու Պարսից Երկիրը, Հարաւէն՝ Ասորեստան, Միջագետք, Ասորիք ու Կիլիկիա. արեւմուտքէն՝ Փոքր-Ասիա, և Հիւսիւսէն՝ Խաղտիք, Կողքիս, Վիրք և Աղուանք :

Հ. Ի՞նչ էր Մեծ-Հայոց սահմանը :

Պ. Մեծ-Հայոց սահմանն էր Արեւելքէն կասպից ծովու ու Պարսից (յառաջադոյն Մարաց) Ատրպատական նահանգը, Արեւմուտքէն՝ Փոքր-Հայք, Հիւսիսէն՝ Կողքիս, Վիրք ու Աղուանք, և Հարաւէն՝ Ասորիք, Միջագետք ու Ասորեստան :

Հ. Մեծ-Հայք քանի նահանգ կը բաժնուէր :

Պ. Տաննեհինգ, Երեք Հիւսիսային՝ Արցախ, Գուգարք, Տայք, Երեք Հարաւային՝ Մոլք, Կորճայք, Պարսկահայք, Երեք Արեւելեան՝ Սիւնիի, Ուտի, Փայտակարան, Երեք արեւմուեան՝ Բարձր-Հայք, Չորրորդ Հայք, Աղճիի, և Երեք՝ միջին՝ Տուրութեան, Վասպուրական և Այրարաս :

Հ. Այս նահանգները քանի գաւառներու կը բաժնուէին :

Պ. Սոքա կը բաժնուէին այլևայլ գաւառներ :

Հ. Բարձր Հայք Երկրին ո՞ր մասին մէջ կ'կյայ :

Պ. Մեծ-Հայոց հիւսիսային-արեւմուեան ծայրը :

Հ. Դիրքն ինչպէս է :

Պ. Դիրքը շատ բարձր և լեռնոտ է, և ամեն կողմ մեծ ու փոքր գետեր կը պարունակէ, որոց գլխաւորներն են Եփրատ, Երասխ ու Ճորոխ :

Հ. Ո՞յք էին Բարձր Հայոց գաւառները:

Պ. Բարձր Հայոց գաւառներն էին Դարանազի, (⁽¹⁾ Առիւծ, Եկեղեց, Մնձուր, Մանազի կամ Մանանազի, Շատդոմք, Կարին, Դերջան, Սպեր :

Հ. Ո՞րոնք էին Չորրորդ-Հայոց գլխաւոր գաւառները :

Պ. Խորձեան, Հաշտեանք, Պաղնատուն, Ծովք, Բալահովիա, Հանձիթ, Դորէք, Դէգիք :

Հ. Ո՞րոնք էին գաւառներն Վասպուրականի:

Պ. Աշտունիք, Տոսք, Աղիովիտ, Արտազ, Գողթն, Նախճուան, Մարանդ եւն :

Հ. Ո՞րոնք էին Սիւնեաց, Գուգրաց եւ Արարատայ գաւառները :

Պ. Հայոց Չոր, Գեղարքունի, Բաղք և այլն: Գուգարքով՝ Տաշիր, Արտահան և այլն: Արարատին՝ Բասէն, Արշարունիք, Բագրեւանդ, Ծաղկոսն, Շիրակ, Վանանդ, Աշոցք և այլն :

Հ. Ի՞նչ գլխաւոր քաղաքներ կային Մեծ-Հայոց մէջ :

Պ. Արմաւիր, Արտաշատ, Վաղարշապատ և Դուին քաղաքներն Արարատեան նահանգին մէջ. Շամիրամակերտ՝ Վասպուրականի մէջ. Ամիգ՝ Ծոփաց աշխարհին մէջ Տիգրանակերտ, որ աւերակ է ու տեղն անդամ անյայտ, Թէոդուլովիս՝ ի Բարձր-Հայս: Համբաւաւոր էին Անի՝ (Բագրատունեաց մնյագագագ՝ որ այժմ աւերակ է), Կարս, Երեւան՝ Արարատ նահան-

(1) Աստ է Մանեայ կոչուած այրն եւ Սեպուհ լեռը ուր հանգեաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ:

Դիմէջ, Բաղէշ, Մանագկերտ, Արծէշ և Մուշ
ի Տուրուբերան, Բերկիմ՝ ի Վասպուրական,
Արծն՝ ի Բարձր Հայս, Խարբերդ՝ ի Չորրորդ
Հայս, Շամիզդէ, Լոռի՝ ի Գուգարս : Այս բա-
ղաբներէ ոմանք աւերակ են :

Հ. Ո՞րո՞նք են երեւելիք գիւղերը և աւանները:

Պ. Աշտիշատ ի Տարոն, Երեղն, Թորպան,
Թիլ՝ ի Բարձր-Հայս, Նախճուան, Ջուղայ՝ ի
Վասպուրական, Ամարաս՝ յԱրցախ: Նշանա-
ւոր էին ի վերջնումն Երազքաւորք Կամ Շիրակա-
ւան յԱրարատ և Թո՞նդրակ ի Տուրուբերան :

Հ. Ի՞նչ երեւելիք բերդերու անուններ կը
յիշուին :

Պ. Անի՝ Մեծ-Հայոց մէջ. Արտագերք, Դա-
րոնք՝ յԱրարատ, Ողկան՝ ի Տուրուբերան,
Վանայ բերդը: Յիշատակելի են նոյնպէս ի յե-
տին դարս Բիւրտական, Կապոյտ բերդ, Բջնի՝
յԱրարատ, Երնջակ՝ ի Սիւնիս, և Կայան ի Գու-
դարս :

Հ. Որո՞նք էին երեւելիք դաշտերը :

Պ. Զիրաւ Արարատեան նահանգին մէջ և
Շարուրայ ու Աւարայրի դաշտերը :

ՀԱՆՔ ԲԵՐՔ ԿԵՆԴԱՆԻՔ ԵՒ ԱՆՍԱՌՔ

Հ. Երկրին մէջ ո՞ր գլխաւոր հանքերը կը յիշ-
ուին :

Պ. Երկաթի, պղնձի, կապարի, բիւրեղի
(կամ սառնատեսակ) եղնդաքարի (կամ սար-
տիօն) շափիւղի, զմբուխտի, ակատի, սև սաթի,

մարմարինի, նաւթի և զառեկի: Կան նաև
գյոնզգոյն ու զանազան հրաբուխի քարեր :

Հ. Ի՞նչ տեսակ բերքեր կ'արտադրուին :

Պ. Ցորեն, հաճար, գարի; Վուշ, բամպակ,
Թուզ, սերկեւիլ, նուռ, պիստակ, շագանակ,
նուշ, վարունդ, գլտոր, մեղր, ձիթենի, յաս-
միկ, մուրտ ծառը, տօսախ ծառը, լոշտակ
բոյսը, ընտիր գինի, և ծիրան :

Ասոնցմէ զատ տեսակ տեսակ ինկեղէններ
ալ կը յիշուին, ինչպէս են քարախունկ և պըտ-
դատունկ, գաղրէ՝ որ մանանայի պէս քաղցր է
և կը գտնուի հիմա մի բանի ծառոց տերեւնե-
րու վրայ . գաղրէն կարնոյ ու Սասունի երկրաց
մէջ կը գտնուի :

Հ. Ի՞նչ տեսակ կենդանիք կը յիշուին :

Պ. Շատ ընտիր է ձին գեղեցկութեան և ու-
ժեղութեան կողմանէ, մանաւանդ նժոյգը .
յիշատակութեան արժանի է Որդան կարմիր
կոչուած ճճին, որ աւելի Արարատ նահանգին
մէջ կը գտնուի . Ճկանց մէջ անուանի են կար-
մրախայտը, տառեխը և գեղարքունին :

Բաց ասոնցմէ կան առիւծ, ինձ, վագր, ըն-
ձուղտ, գայլ: Խոկ թունոց մէջ անուանի են .
ագռաւ, կաքաւ, սաղ, բաղ, փոր կամ կա-
րապ և ուրիշ զանազան թուչուններ՝ մանաւանդ
Արարատայ, Բարձր Հայոց և Չորրորդ Հայոց
մէջ :

Հ. Ո՞ր անտառները անուանի են :

Պ. Սիւնեաց եւ Գուգարաց անտառները՝ որ
ընական են, ասոնցմէ զատ կը յիշուին ար-

ուեստական անտառներ՝ զորս տնկել տուած
են Հայ-թագաւորք :

Կ Լ Ի Մ Ա Յ

Հ. Ի՞նչ է երկրին դիրքն ու կիման :

Պ. Երկրը թէպէտ ընդհանրապէս բարեխառն
է⁽¹⁾ բայց որովհետև կան տեղեր որ բարձր են,
և կան ալ որ ցած՝ այս պատճառաւ զանազան
տեղեր օդն ու կիման իրարմէ տարբեր են :

Տ Ա Տ Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք Հ Ա Յ Ո Ւ Ց

Հ. Ի՞նչ է Հայուն յատկութիւնը ընդհան-
րապէս :

Պ. Հայուն յատկութիւնն են տոկունութիւն,
հաստատամութիւն, վեհանձնութիւն, հա-
մեսութիւն, հիւրասիրութիւն, ընդունակ
միտք, յղացող հանճար, ծանրաբարոյութիւն,
կրօնափրութիւն և յարմարութիւն յառաջա-
դիմութեան և զարգացման յուսմունս, յար-
հեսոս և յաղատական յարուեստս, մանաւանդ
ի վաճառականութեան՝ յորում առաջին տեղը
բռնած էր Հայն, ընդ որ կը զարմանար աշ-
խարհ համայն և կը նախանձէր :

Հ. Ի մասնաւորի ի՞նչ կրնայ ըսուիլ:

Պ. Հայաստանի կիմային այլ և այլ տեղեր
ունեցած տարբերութիւնը երկրին ընակչացը
վրայ զանազան ներգործութիւն ըրած է, ինչ-
պէս ըրած է տնկոց և կենդանեաց վրայ, զոր

(1) Զի Հայաստան աշխարհը բարեխառն գոտի-
ին տակ կլինայ :

օրինակ՝ Մոկաց աշխարհի բնութիւնն ու եր-
կինքը աստղաբաշխութեամբ և ուրիշ գիտու-
թիւններով պարապելու ներգործութիւն ըրած-
էին ժողովրդեան վրայ, Գողթն գաւառքի կիման
և գինին բնակչաց սրտին ու մոտաց բանաստեղ-
ծութեան ոգի ներշնչած էին, և որ ի կարգին :

Կ Ր Օ Ւ Ք

Հ. Ի՞նչ էր Հայոց առջի կրօնքը :

Պ. Զուտ Աստուածպաշտութիւն, յետոյ սկսան
աւելորդապաշտութեան ու եաքը յարեցան հե-
թանոսական կրօնին, որ տեւեց մինչև Քրիս-
տոսի աշխարհ գալը. Քրիստոսի 34 թուակա-
նին մուտ գտաւ Քրիստոնէութիւնն ի Հայաս-
տան թագէս եւ բարթուղիմէսս առաքելոց
ձեռքով, այն օրէն մինչև հիմա կայ ու կը մնայ
Հայաստանեայց աղատ ու անկախ անդրանիկ
եկեղեցին :

Հ. Ե՞րբ կ'սկսի Հայոց մէջ աւելորդապաշ-
տութիւնը :

Պ. Արմենակայ Արմաւիրի մէջ տնկած սօսի-
ներու անտառի ժամանակէն, վասնզի սօսեաց
տերեւներու շարժումէն հմայութիւններ կը-
նէին :

Հ. Այս անտառը ի՞նչ կը համարուէր :

Պ. Սօսեաց անտառը նուիրական կը համար-
ուէր, ուստի, անոր նուիրեալն սուրբ և գիւ-
ցազն կը սեպուէր :

Հ. Աւելորդապաշտութիւնը ո՞րքան ատեն
տեւած է:

Պ. Վեց հարիւր քառասուն տարի, ապա
սկսած է հեթանոսական կրօնը :

Հ. Հայոց հեթանոսական կրօնը ո՞ր կրօնին
նման էր:

Պ. Պարսից և Մարաց Զրադաշտական կրօնին,
ըստ որում Հայք սկիզբէն մեծ կապակցութիւն
և յարաբերութիւն ունէին Արեաց ազգերու
հետ:

Հ. Հայք գերադոյն էակին Բնչ անուն կու-
տային:

Պ. Հայք գերադոյն էակին Արամազդ անունը
կուտային. բաց աստի՝ ըստ Արեաց ազգերու՝
Հայք եւս հոգեղէն երկու էութիւն կը դաւա-
նէին, բարի և չար, կամ հրեշտակ ու գեւ:

Հ. Հայք Բնչ մեհեաններ (կուտայն) ունէին:

Պ. Հայք ի սկզբան մեհեաններ չունէին,
վասնզի աստուածութիւնը մեհեաններու մէջ
փակելն արգելուած էր, բայց ետքը խառն
պաշտամունքներ ալ մուտ գտան հեթանոսա-
կան նախնի պարզ վարդապետութեան մէջ:

Հ. Հեթանոսական պարզ վարդապետութիւ-
նը Երբ խառնակեցաւ:

Պ. Արշակունի թագաւորաց ժամանակ, որք
Յունաց չաստուածներուն պատկերներն Հա-
յաստան բերին, անոնց համար հոյակապ մեհ-
եաններ կանդնեցին և փառաւոր պաշտամունք,
քրմական նուիրապետութիւն ու կարգեր հաս-
տատեցին:

Հ. Հայք զոհ կը մատուցանէին չաստուած-
ներուն:

Պ. Անուանի բագիններու եւ չաստուածոց
ուխտի կ'երթային ու զոհ կը մատուցանէին,
զորորինակ՝ ցուլ նոխազ, ձի և ջորի, որ սպիտակ
պէտք էին ըլլալ և ոսկւով ու արծաթով զարդար-
ուած. նաև, կը մատուցանէին ոսկի պսակ, ա-
գամանդազարդ անօթներ և երբեմն ծաղկեայ
պսակներ ու ծառի թարմ ոստեր կը նուիրէին:
Հ. Ո՞վ էր Հայոց առաջին գլխաւոր չաստ-
ուածը:

Պ. Հայոց գլխաւոր չաստուածն էր Արամազդ,
որ հայր չաստուածոց կը համարուէր եւ որոյ
հոյակապ պատկերն Անի ամրոցը դրուած էր,
ուր կը նստէին քրմապետք և ուր կը թաղուէին
Արշակունի թագաւորք, իսկ քրմապետք կը
թաղուէին բագաւանի մէջ:

Հ. Ո՞վ էր երկրորդ չաստուածը:

Պ. Անահիտ չաստուածուհին՝ որ ծնունդ էր
Արամազդայ, և կը համարուէր մայր զդաստու-
թեան, փառք Հայոց ազգին, կեցուցիչ, եւ
շունչ ու կենդանութիւն աշխարհին Հայոց :

Հ. Ո՞ւր էր Անահիտայ մեհեանը:

Պ. Անահիտ երկու պատկեր ունէր, մին Եկեղ-
եաց գաւառի երիզ աւանը կը գտնուէր եւ
միւրը Տարօն գաւառի Աշտիշատ գիւղը:

Հ. Ո՞վ էր երրորդը:

Պ. Վահագն, որ էր չաստուած արութեան,
և որոյ մեհեանն ու պատկերը Աշտիշատայ մէջ
էր, պատկերը կը կոչուէր Վիշապաքաղն Վա-
հագնի, ու մեհեանը՝ տեղի Հաշտենի:

Հ. Ո՞վ էր չորրորդը :

Պ. Տիւր չաստուածը, որ էր մեկնող երազոց եւ պաշտպան ուսմանց ու դպրութեանց, եւ որոյ մեհեանը Աշտիշատ քաղաքի մօտ ճանրու վրայ էր և կը կոչուէր երազամոյն և միանդամայն դիւան գրչի Արամազդայ, կամ մեհեան ուսման եւ ճարտարութեան :

Հ. Ո՞վ էր հինդերորդը:

Պ. Մհրական դիք, որ էր Հայոց համար՝ ինչ որ էր Աթենաս Յունաց համար, և որոյ մեհեանն էր ի թիւն աւանի :

Հ. Կայիշն ուրիշ չաստուածներ ալ:

Պ. Աստղիկ՝ որ հոմանիշ էր Յունաց Ավրորդիտէսին և մեհեանն էր յԱշտիշատ. Բարշամեան դիք՝ որ նաև Սպիտակափառ դիք կը կոչուէր, վասնզի փղոսկրէ, բիւրեղէ ու արծաթէ շինուած էր. կար նաեւ Թարաթա անուն չաստուած մը, զոր Արդար թագաւորը կը պաշտէր :

ԲԱԺԱՆՄՈՒՆՔ ՀԱՅԿԱԶԱՑԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ

Հ. Հայկազանց իշխանութիւնը քանի շրջան կը բաժնուի:

Պ. Երեք. Ա. Տանուտիրական Նահապետութիւն, Բ. Զինուորական Նահապետութիւն կամ կիսարքայք, և Գ. Թագաւորութիւն :

Հ. Ե՞րբ կ'սկսի Տանուտիրական Նահապետութիւնը:

Պ. Հայկայ օրով, Քրիստոսէ 2350 տարի առաջ եւ կը տեւէ մինչեւ Արամ:

Հ. Ե՞րբ կ'սկսի Զինուորական Նահապետութիւնը:

Պ. Արամէն, Քրիստոսէ 1300 տարի առաջ, եւ կը տեւէ մինչեւ վահէ, Քրիստոսէ 350 տարի առաջ, որ ատեն կ'սկսի Ա. Հաղատակութեան շըլանը :

ՄԱՍՆ Ա.

ՀԱՅԿԱԶԱՑԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱ

(Նախ յան գթրիսու 2350 տարի)

Հ. Ի՞նչպէս եղած է Հայ ազգին ծագումը:

Պ. Երկրորդ Ջրհեղեղէ մ'ազատուելու համար բազում հսկայք ժողվուեցան Բաբելոն, ուր կ'ուղէին մեծ աշտարակ մը շինել, սակայն գործը չյաջողեցաւ. այս միջոցիս թէլ անուն հսկայ մը կ'ուղէր ամենուն վրայ տիրել ու իրեւ Աստուած պաշտուիլ. Հայկ (Նոյ նահապետին Յաբեթ որդւոյն թռուանը որդին) չուզեց հնազանդիլ ու իր ընտանեզրը եկաւ վանայ կողմերը բնակիցաւ:

Հ. Ի՞նչ եղած վախճանը:

Պ. Բէլ բազմաթիւ զօրքով անոր վրայ եկաւ, պատերազմեցաւ, բայց պատերազմին մէջ Հայ-

կէն սպաննուեցաւ, իր զօղքերը ցրուեցան, ու
Հայկ ալ աղատ և ինքնագլուխ մնաց :

Հ. Ի՞նչ ըրաւ Հայկ:

Պ. Իր թշնամին մարմինը զմռսել տալով
բարձր տեղ մը թաղեց ի նշան իւր յաղթու-
թեանը. պատերազմին տեղը քաղաք մը շինեց,
որ Հայք կոչուեցաւ, նոյն գաւառին անունն
Հայոց-ձորը ըսուեցաւ. Բէլայ մեռած տեղը գե-
րեզմանք դրաւ (ասկէ մնացած է գերեզման
անունը), երկիրը շինութեամբք զարդարեց,
բարեկարդութիւններ ըրաւ և օրէնքներ հաս-
տատեց :

Հ. Ի՞նչպէս մարդ էր Հայկ:

Պ. Հաստաբազուկ, քաջարի, երկայնահասակ,
Աստուածապաշտ, իմաստուն և արդարասէր էր,
որուն անունովը մեր ազգը ՀԱՅ եւ երկիրն
ՀԱՅԱՍՏԱՆ կոչուեցաւ :

Հ. Հայկ ի՞նչպէս կառավարեց:

Պ. Հայրաբար կառավարեց իր ազգը, և մե-
ռաւ խաղաղութեամբ՝ աշխարհի վրայ թողով
բարի եւ յաւերժական յիշատակաց արժանի
մեծ անուն մը :

ԱՐՄԵՆԱԿԻՆ ՄԻՒԶԵՒ ԱՐԱՄ

(Նախ յան գՔրիստո 2300—2000)

Հ. Հայկայ ովլ յաջորդեց:

Պ. Իր անդրանիկ որդին Արմենակ, որ իր
խոր, Մանաւաղ եղբայրներն և ասոր Բաղ ա-
նուն որդին Հայք գաւառը թողլով՝ ինք հիւ-
սիսային-արեւելքան կողմերը գնաց ընտան-

եօք, ու այն կողմերը շինութեամբք զարդա-
րեց, և հոն գտնուող բարձր լերան անունն
ալ Արագած դրաւ: Խակ իւր եղբարյամէ ու Բա-
ղէն սերեցան Խորխոռունեաց, Մանաւաղեանց
ու Բգնունեաց նախարարութիւնները (¹) :

Հ. Արմենակայ ովլ յաջորդեց:

Պ. Իր Արմայիս անդրանիկ որդին, որ Արմա-
ւիր բաղաքը շինեց, և նոյն տեղի գետին անու-
նը երասխ դրաւ իր Արաստ թոռան անունովը.
Խակ իր Շարայ որդին՝ որ սաստիկ շատակեր
էր և ունէր բաղմաթիւ զաւակներ՝ Շիրակ բա-
րեբեր գաւառը դրկեց :

Հ. Շարայի շատակերութեան համար ի՞նչ
կըսուի:

Պ. Շարայի շատակերութիւնն առածի կարգ
անցած էր և շատակեր մարդոց համար կըս-
ուէր՝ «Թէ յո Շարայի որկորն է, մեր Շիրակայ
ամբարֆն չեն» :

Հ. Արմայիսի ովլ յաջորդեց:

Պ. Իր որդին Ամասիա, որ Հարաւային կող-
մերը գնաց իր նախորդացը նման շնչցնելու և
գաղթականութեամբք երկիրը ճոխացնելու հա-
մար. սա երեք որդի ունէր՝ Գեղամ, Ցոլակ եւ
Փառուխ. վերջին երկորին համար մէյմէկ քա-
ղաք շինեց, մին կոչուեցաւ Փառախոտ և միւ-
սը Ցոլակերտ. հոն գտնուող բարձր լերան
անունն ալ յանուն իւր Մասիս անուանեց :

Հ. Ամասիայի ովլ յաջորդեց:

(1) Հայկայ Պատքամ անուն մէկ թոռնէն ալ սե-
րած է Անգեղ տան նախարարութիւնը :

Պ. Գեղամ, որ արեւելեան-հիւսիսային կողմէրը գնաց, շենցուց բնակչօք ու շինութեամբք, այն տեղերն իր անունովը Գեղաքունի, լիճը ծով Գեղամայ և լեռան անունն ալ Գեղ անուանեց : Գեղամ ունէր Սիսակ անուն որդի մ'ալ, որ իր քաղցր նայուածքին ու խօսուածքին համար Աղու կոչուեցաւ, և որմէ սերեցաւ Սիւնեաց մեծ նախարարութիւնը :

Հ. Գեղամայ ով յաջորդեց:

Պ. Իր Հարմա որդին, որ շատ տարիներ կառավարելէ ետքը՝ տեսնելով որ դրացի ազգեր իր վրայ կը յարձակին և ինք դէմ գնելու անկարող է, քաշուեցաւ իշխանութենէ, զոր իր Արտամ որդւոյն յանձնեց :



ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆԱՀԱՄԵՏՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԿԻՍԱՐՔԱՅՔ

Նախ յան գթիւսու 2000—1870

Ա. Բ. Ա. Մ

Հ. Ի՞նչ ըրաւ Արամ:

Պ. Նախ ձեռնարկեց զինուորութիւն հաստատելու և երկիրն զօրացնելու, և այսպէս զինուորական ոյժը զօրացնելէ և ոյժերը միացնելէ ետքը՝ ոչ միայն փախուց յարձակող թշնամիներն՝ որ տիրէր էին երկրին մէկ մասին՝ այլ ընդունակեց իւր երկրին սահմանները աշխարհակալութեամբ :

Հ. Որո՞նք էին այդ տիրող ու յարձակող թշնամիք :

Պ. Նիւքար անուն Մարտաց իշխանն, որ Հա-

յաստանի արեւելեան կողմն յարձակած ու տիրած էր, Բարշամբարելացւոց իշխանն, որ Հայաստանի հարաւային կողմը տիրած էր և Պայապիս կապադովկիոյ իշխանն, որ արեւմտեան կողմը դրաւած էր :

Հ. Ի՞նչ ըրաւ Արամ:

Պ. Նիւքարը պատերազմին մէջ գերի բռնեց, բերաւ Արմաւիր, ու հոն աշտարակի մը ծայրը ճակտէն գամել տուաւ՝ տիրելով անոր երկիրներէ մէկ մասին: Բարաշամին յաղթեց և անոր ալ դրաւած երկիրները ետ առաւ, իսկ Պայապիս իշխանն հալածեց մինչև Միջերկրականի կղզիներէն մէկը ու անոր ալ երկիրներուն մէկ մասին տիրեց, և իւր երկիրը տարածեց մինչեւ Փոքր-Ասիոյ սահմանը :

Հ. Արամ ի՞նչ ըրաւ իւր դրաւած երկիրները.

Պ. Կարդ, կանոն, բարեկարգութիւն և ապահովութիւն հաստատեց իւր կողմէ կուսակալներ կարգելով. Բարշամին տիրած ու անկէ առած երկիրներու կառավարութիւնը կադմոսից եղին յանձնեց. Կապադովկիոյ մասին վրայ Մշակ անուն կուսակալ մը դրաւ, և խստիւ պատուիրեց որ իր իշխանութեանը ներքեւ երկիրներուն մէջ ամենն ալ հայերէն խօսին :

Հ. Մշակ ի՞նչ ըրաւ:

Պ. Մշակ քաղաք մը շինեց և իւր անունով Մշակ անուանեց, զոր սակայն բնակիչ Յոյնք ըկրնալով Մշակ անուանել, Մաժաք կը կոչէին որ է Քայսէրի (Կեսարիա) քաղաքը, իսկ Քայսէրի կոչուելուն պատճառն ալ այն է որ Օգոստոս

կեսար եպքը նորոգեց այս քաղաքը :

Հ. Արամայ աշխարհակալած երկիրներն Բնչ
կոչուեցան :

Պ. Փոքր , Առաջին , Երկրորդ , Երրորդ , Չոր-
րորդ Հայք : Արամ այնքան նշանտոր հանդի-
սացաւ , որ օտարք կ'ակնածէին իրմէ , կը վախ-
նային և սկսան իրեն անունով մեր Ազգն Ար-
մէն և Երկիրն Արմէնիա կոչել :

Այս օրէն մնացած են Արմէն և Արմէնիա
անունները :

Հ. Արամայ օրով յիշատակութեան արժանի
Բնչ դէպք պատահած է :

Պ. Ասորեստանի Նինոս թագաւորը կ'ուզէր իր
նախահօր՝ Բէլայ վրէժը լուծել Արամէն , բայց
անոր քաջութենէն վախնալով՝ փափագեցաւ
որ շահի անոր բարեկամութիւնը . ուստի ա-
նոր մարդարտազարդ պասակ մը նուէր դրկեց ,
զոր միայն Ասորեստանի թագաւորները կը
դորձածէին :

Ահա այս պատճառաւ Արամէն մինչեւ Պա-
րոյր կիսարքայը ըսուեցան . իսկ Արամայ հա-
տատած զինուորական կարգին համար ալ կա-
ռավարութիւնը կոչուեցաւ Զինուորական նա-
հապետութիւն :

Հ. Ո՞վ յաջորդեց Արամայ :

Պ. Իր որդին Արայ Գեղեցիկ , որոյ գեղեցկու-
թիւնը լսելով Ասորեստանցւոց Շամիրամ թա-
գուհին (Նինոսի կինն ու յաջորդը) , ուզեց
անոր հետ կարգուիլ , բայց Արամ արդէն ա-
մուսնացած ըլլալով՝ մերժեց անոր ինդիրը .

Շամիրամ⁽¹⁾ քաղցրութեամբ համոզելու ամեն
ջանք ընելէն ետքը՝ պատերազմեցաւ , յո-
րում Արայ գեղեցիկ քաջութեամբ մեռաւ :

Հ. Արայի ո՞վ յաջորդեց :

Պ. Շամիրամ , կը փափաքէր որ կախարդա-
կան միջոցներով կենդանացնէ Արան , երբ
չյաջողեցաւ , անոր սիրոյն համար անոր կար-
գոս որդին Արայ անուամբ իշխան կարգեց
Հայաստանի վրայ : Պատերազմի մէջ Արայի
մահուամբը Հայաստան Ասորեստանցւոց հար-
կատու եղաւ , բայց Երկիրը , յաջորդութեան
կարգաւ գարձեալ Հայ իշխաններով կը կա-
ռավարուէր :

Հ. Շամիրամայ վրայ յիշատակութեան ար-
ժանի Բնչ կայ :

Պ. Շամիրամ հաւնելով Հայաստանի օդին ու
ջուրին՝ բզնունեաց ծովին մօտ վան քաղաքն
ու բերդը շինեց , որուն վրայի սեպաձև ար-
ձանագրութիւնները մինչև հիմայ կեցած են :

Հ. Կարգոսի վախճանն Բնչ եղաւ :

Պ. Մեռաւ այն պատերազմին մէջ , զոր ը-
րաւ Շամիրամ իրմէ ապստամբած որդւոյն՝ Նին-
ուասայ դէմ . Շամիրամ մեռաւ ու Նինուաս
տեղը անցաւ : Կարգոս ալ մեռաւ :

Հ. Կարգոսին ո՞վ յաջորդեց :

Պ. Իր որդին Անուշաւաւն , որ թէպէտ Նին-

(1) Մինչեւ հեթանոսութեան ժամանակ միակնու-
թիւնը տիրող օրէնք էր ի Հայաստան . բազմա-
կնութեան գաղափարը մուտ գտաւ միայն հեթանո-
սութեան ատեն , որ սակայն ընդհանրացած չէր :

ուասայ պալատը կը մնար իբր գերի, բայց
իւր իմաստուն ընթացքով ու խոհական բնաւ-
որութեամբը գրաւելով Նինուասայ սիրտը՝
աղատեցաւ գերութենէ, պատուով դարձաւ
Հայաստան եւ իր հօրը տեղ իշխանութեան
դլուխ անցաւ :

Հ. Անուշաւան ուրիշ Բնչ կը կոչուէր:

Պ. Իր ծնած առենը նուիրեալ ըլլալով Արմե-
նակայ տնկած սօսեաց անտառին, նաև Սոս կը
կոչուէր :

Հ. Անուշաւանին ո՞վ յաջորդեց :

Պ. Անուշաւան անզաւակ մեռնելով՝ Հայկայ
անդրանիկ ցեղին յաջորդութիւնը դադրեցաւ.
ուստի նախարարաց հաւանութեամբը Պարէտ
անուն քաջ մէկը յաջորդ գրուեցաւ :

Հ. Պարէտին ո՞վ յաջորդեց :

Պ. Պարէտէն մինչև Ակայորդի 27 իշխաններ
յաջորդեցին որոնց երկուքին յիշատակութիւնը
չկայ, իսկ միւսներն են Արբակ, Զաւան, Փառ-
նաս, Սուր, Հաւանակ, Վաշտակ, Հայկակ, Ամ-
բակ, Առնակ, Շաւարշ, Նորայր, Վաստա, Կար,
Գոռակ, Հրանտ, Ընձակ, Գլակ, Հաւրոյ,
Զարմայր, Պերճ, Արրուն, Հոյ, Յուսակ, Կայ-
պակ, Ակայորդի :

Հ. Այդ իշխանաց մէջ ո՞րոնք յիշատակութեան
արժանի են :

Պ. Հայկակ Ա. որ ուզելով Ազգն աղատել
Ասորեստանի լուծէն՝ ապատամբեցաւ, բայց ըլ
յաջողեցաւ ու մեռաւ պատերազմին մէջ: Փառ-
նակի օրով Քանանացիք Յետուէն յաղթուելով

եկան ի Հայս, և որոնցմէ սերեցաւ Գնդունեաց
նախարարութիւնը. Զարմայր, որ Տրովական
Պատերազմին օդնեց Ասորեստանի Տեւտամու-
թագաւորին՝ ընդդէմ Հելենացւոց, բայց Ա-
քիւլէսէն վիրաւորուելով մեռաւ, և Սկայորդի,
որուն ապաստանեցան Ասորեստանի Սենեքե-
քերիմթագաւորին Ագրամելէք ու Սանասար
Հայրասպան որդիքը, որոնցմէ սերեցաւ Արծ-
րունեաց ու Գնունեաց նախարարութիւնը :

ԺԱՄԱՆԱԿ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԵԱՆ

ՊԱՐՈՅՏԷՆ ՄԻՆՉԵՒ ՎԱՀԵ

(Նախ յան գթիսուն 870—330)

Հ. Ո՞վ եղաւ Ա. թագաւորը Հայկադանց :

Հ. Ակայորդիի որդին ու յաջորդը Պարոյր,
որ Մարաց կիաքսար իշխանին հետ դաշնակ-
ցելով պատերազմեցաւ Ասորեստանցւոց Մար-
դանարաղ թագաւորին դէմ և երկուքը միա-
բան գործողութեամբ յաղթեցին: Պարոյր եղաւ
անկախ թագաւոր Հայաստանի և կիաքսար ալ
Ասորեստանի ու Մարաց վրայ :

Հ. Ո՞վ յաջորդեց Պարոյրի :

Պ. Իր որդին Հրաչեայ, որ Բաբելացւոց Նա-
բուրողոնոսոր թագաւորին հետ դաշնակցու-
թեամբ երուսաղէմի վրայ գնաց, յաղթեցին,
և անկէ բազում Հրեայներ գերի բերաւ, յորս
էր Շամբատ անուն երեւելի իշխան մը, որմէ

սերեցաւ թագրատունեաց մեծ նախարարութիւնը։ Այս նախարարութեան կը վերաբերէր Հայ թագաւորաց գլուխը թագ դնելու արտօնութիւնն։

Հ. Հրաչեայի ովլ յաջորդեց։

Պ. Իրարու յաջորդեցին հետզհետէ ֆառնաւազ Պաճոյճ, կոռնակ, ֆաւոս, Հայկակ և Երւանդ Ա. սակաւակեաց։

Հ. Երուանդի ովլ յաջորդեց։

Պ. Տիգրան Ա. որ Հայկազուն թագաւորաց մէջ ամենէն երեւելին եղաւ, երկրին վիճակը կերպարանափոխեց, պայծառութիւն եւ կենդանութիւն տուաւ, զինուորական վիճակը բարձրացուց ու կատարելագործեց, արհեստները, երկրագործութիւնը, վաճառականութիւնն և ուսումները ծաղկեցուց, նաւարկութիւն հաստատեց գետերու մէջ և մեծամեծ աշխարհակալութեամբք երկրին սահմաններն ընդարձակեց։

Հ. Տիգրան որ ազգաց հետ պատերազմեցաւ։

Պ. Տիգրան Ա. երեմիա մարգարէին խնդրանօք թարելացւոց գէմ գնաց, Մարաց Աժդահակ թագաւորին գէմ պատերազմեցաւ, յաղթեց ու սպաննեց, տիրեց, Տիգրանակերտ քաղաքը շինեց, զոր իր Տիգրանունի քրոջը տուաւ՝ որ Աժդահակայ կինն էր, փառօք վերադարձաւ Հայաստան եւ իւր հետ բերած գերիները զանազան տեղեր բնակեցուց, և յորոց սերեցաւ Վիշապազունք կամ Մուրացան կոչուած մեծ նախարարութիւնը։

Հ. Տիգրանի ովլ յաջորդեց։

Պ. Իր որդին Վահագն, զոր՝ իր սաստիկ քաջութեանն համար Հայք չաստուածոց կարգը դասեցին եւ իր մահուանէն ետքը՝ իր արձանը կը պաշտէին Հայք և Վրացիք . Վահագնի ցեղէն սերած է Վահնունեաց նախարարութիւնը։

Հ. Յիշատակութեան արժանի մասնաւոր ինչ կայ։

Պ. Հայոց հին բանաստեղծներն անոր վրայ երգեր շինած են։

Հ. Վահագնի ովլ յաջորդեց։

Պ. Իրեն յաջորդեց իր որդին Առաւան, սորաներսէ և հետզհետէ Զարեհ, Սրմոդ, Բագամ և Վան, որ Շամիրամնկերտ քաղաքը նորոգեց և յանուն իւր Վան կոչեց։

Հ. Վանայ ովլ յաջորդեց։

Պ. Իր որդին Վահէ, որ Պարսից Դարեհ թագաւորին օդնութեան գնաց Մակեդոնացւոց Աղէքսանդր թագաւորին գէմ, քաջութեամբ կռուեցաւ, բայց ետքը Աղէքսանդր Հայաստանի վրայ արշաւեց եւ այս պատերազմին մէջ Վահէ մեռաւ, իր հետ վերջացաւ Հայկազանց հարստութիւնը, որ տեւեց իւր 1800 տարի, և երկիրը նուաճեցաւ Մակեդոնացւոց իշխանութեան ներքեւ։

Ա. ՇՐՋԱՆ ՀՊԱՏԱԿՈՒԹԵԱՆ

ԿՈՒՍԱԿԱԼՔ

(նախ յան գթրիսու 330—450)

Հ. Վահեկ մահուընէ յետոյ երկիրը ողբան
ատեն օտար իշխանութեան տակ մնաց :

Պ. Իբր 180 տարի երբեմն Մակեդոնացւոց և
երբեմն Սելեւկիացւոց իշխանութեան ներքեւ
մնաց : Մեծն Աղէքսանդր Միհրան անունով
կուսակալ մը զրկեց, որ վեց տարի կառավարեց
երկիրը :

Հ. Միհրանայ ով յաջորդեց :

Պ. Մեծին Աղէքսանդրի մահուամբ անոր
յաջորդը իր երկիրները մէջերնին բաժնեցին.
Հայաստան աշխարհը Նէոպտղոմէսոսի վիճակե-
ցաւ, որ զՀայս սաստիկ կը նեղէր :

Հ. Այս միջոցիս Բնէլ պատահեցաւ :

Պ. Կապադովկիոյ թագաւորին որդին՝ Արիա-
րաթ յերեսաց Մակեդոնացւոց Պերդիկաս
մեծ իշխանին Հայաստան ապաստանած էր,
խորհուրդ տուաւ Հայոց որ զՆէոպտղոմէսոս
վանեն. Սիւնեաց Ագուարդ իշխանը կատարեց
այս խորհուրդը, և ինք անցաւ իշխանութեան
գլուխ, ու կառավարեց երկիրը :

Հ. Աղուարդին ով յաջորդեց :

Պ. Արտաւազդ կամ Արտաւազան իշխանն,
որուն գէմ մեծն Սնտիքոս Սելեւկիացւոց թա-
գաւորը պատերազմի ելաւ, բայց Արտաւազդ
առանց պատերազմելու հնազանդեցաւ, և Հա-
յաստան Սելեւկիացւոց հպատակեցաւ :

Հ. Արտաւազդին ետքը ինչ եղաւ:

Պ. Արտաւազդայ մահուանէն ետքը Անտիո-
քոս Հայաստանի կուսակալութիւնը երկուքի
բաժնեց, Մեծ-Հայոց վրայ Արտաշէս անուն
մէկը դրաւ և Փոքր-Հայոց ու Ծոփաց նահան-
գին վրայ ալ Զահրան կամ Զարեհ անուն իշ-
խանը կարգեց :

Հ. Այս միջոցիս Բնէլ պատահեցաւ :

Պ. Այս միջոցիս կարգեդոնացւոց համբաւա-
ւոր Սննիբաղ զօրափարն որ Հռովմայեցւող գէմ
ապստամբած ու յաղթուած էր՝ Սելեւկիացւոց
Սնտիքոս թագաւորին քով գնաց յապաստան,
բայց հոն յապահովի չգտնելով զինք՝ փախաւ
ի Հայաստան, ապաւինեցաւ Արտաշէսի, որում
օգտակար խորհուրդներ տուաւ. Արտաշէս Ան-
նիբաղայ խորհրդով Արտաշատ քաղաքը շինեց
երասմի գետին վրայ :

Հ. Արտաշէսի ով յաջորդեց.

Պ. Իր որդին՝ Արտաւազդ, որոյ օրովը Պար-
թեւք տիրեցին Հայաստանի Քրիստոնէ իբր
150 տարի առաջ :

ԲԱԺԱՆՄՈՒՆՔ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ

Հ. Արշակունեաց իշխանութիւնը քանի շրջան
կը բաժնուի :

Պ. Երեք, Ա. Թագաւորութիւն, Բ. Հարկատու-
թագաւորութիւն և Գ. Ժամանակ Քրիստոնէ-
ութեան :



ՄԱՍՆ Բ.

ԱՐԵՎԱԿՈՒՆԵԱՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

~~~~~

Վ. Ա. Դ. Ա. Բ. Շ. Ա. Կ.

(Նախ բան գրիստոնելութիւն 150—128)

Հ. Երբ և Բնչպէս եղաւ Արշակունեաց իշխանութիւնը :

Պ. Պարթեւաց Արշակ մեծ թագաւորը Սելեւկիացւոց ձեռքէն զչայաստան առնելէ ետքը՝ իր ընդարձակ տէրութիւնը թշնամեաց դէմ ապահովելու համար Հայաստանի զատ թագաւորութիւն տուաւ, և իր Վաղարշակ եղբայրը թագաւորեցուց, որ Արշակունի էր, որով սկսաւ Արշակունեաց իշխանութիւնը Քրիստոսէ 150 տարի առաջ: Բայց ստակ կարելու իրաւունքը Արշակ իրեն պահեց:

Հ. Ի՞նչպէս մարդ էր Վաղարշակ:

Պ. Հեղ, մարդասէր, պատերազմական արուեստին աղէկ հմտւ, ուսեալ եւ վեհանձն մէկն էր, որ շատ սիրեց զչայս և զչայաստան, ձեռք զարկաւ Երկրին բարելաւութեանը. Հայ Ազգին հին պատմութիւնը վնտուել ու գրել տուաւ Մարտրաս կատինէ անուն Ասորի գիտունի մը ձեռքով, զինուորական ոյժը միացուց, բանակը զօրացուց, պատերազմական կարգ ու կանոն դրաւ և զօրքելը պատերազմական խիստ օրինաց վարժեցուց:

Հ. Ի՞նչ պաշտօններ հաստատեց :

Պ. Թագաւորին գլուխը թագ գնելու իշխանութիւնը Բագրատունեաց ցեղին, թիկնապահութիւնը՝ Խոռիսունեաց, Հանդերձապետութիւնը՝ Գնդունեաց, գրօշակակրի պաշտօնը՝ Գնունեաց, սենեկապետութեան պաշտօնը՝ Աբեղեան ցեղին, քրմապետութեան պաշտօնը՝ Վահունեաց և թագաւորին երկրորդը կոչուելու պատիւը Մուրացան ցեղին տուաւ:

Հ. Երկիրը Ի՞նչպէս ապահովուց :

Պ. Չորս զինուորական կուսակալութիւն հաստատեց Երկրին սահմաններուն վրայ. Հարաւային սահմանի պաշտպանութիւնը Աղձնեաց ցեղին, հիւսիսային սահմանինը՝ Գուգարաց, Արեւելեան սահմանինը՝ Սիւնեաց եւ արեւմըտեան սահմանինը Անդեղ տան նախարարութեան յանձնեց. այս կուսակալք նաև կը կոչուէին բգեշի:

Հ. Ի՞նչ ներքին բարեկարգութիւն ըրաւ:

Պ. Երկրին մէջ աեղ աեղ գտնուած ճահիճները ցամքեցուց, Ջրանցքներ փորել, թանձրանտառներ կտրել, ճամբաններ բանալ տուաւ, գողութիւնն և մարդասպանութիւնը՝ զոր կը գործէին օտարք՝ բնաջինջըրաւ, եւ արհեստից, մշակութեան, ուսմանց եւ կրթութեան մեծ հոդ տարաւ:

Հ. Ի՞նչ պատերազմ ըրաւ:

Պ. Յաղթեց ու սպաննեց կապադովկիոյ Մորփիւղիկս թագաւորը՝ որ իր վրայ կուգար

և աիրեց կապագովկիոյ, ինչպէս հետզետէ  
տիրեց Պոնտոսի, Լազիստանի, Խաղսեաց ու  
Եղերացւոց երկիրներուն :

- Հ. Վազարշակ քանի տարի թագաւորեց:  
Պ. Քսաներկու տարի:

Ա. Բ Շ Ա. Կ Ա.

(Նախ խմ գթրիսոս 128—115)

Հ. Վազարշակին ովլ յաջորդեց:  
Պ. Իր անդրանիկ որդին Արշակ Ա. որ ապրս-  
տամիրեալ Պոնտացիները նուաճեց եւ ի նշան՝  
Պոնտոսի եղերքը յաղթութեան կոթող մը  
կանգնեց, զոր Պոնտացիք երկար ատեն պաշ-  
տեցին, բայց յետոյ ծովը նետեցին :

Հ. Արշակ ուրիշ ինչ ըրաւ :

Պ. Ստիպեց ու չարշարեց թագրատունիները՝  
որ Աստուածապաշտ էին, թողուլ Հրէութիւնը  
եւ կուռք պաշտել, որք ապա հարկադրեցան  
զիջանիլ մի քանի պայմաններով: Արշակ նաեւ  
իր հօրը նման ներքին բարեկարգութեան մեծ  
հոգ տարաւ, եւ թագաւորեց 13 տարի:

Ա. Բ Տ Ա. Շ Ա. Ա.

(Նախ խմ գթրիսոս 115-90)

Հ. Արշակ Ա. ի ովլ յաջորդեց :

Պ. Արտաշէս Ա. որ մեծագործութեամբ ու  
աշխարհակալութեամբ երեւելի եղաւ. Պար-  
թեւաց Արշակ թագաւորէն նախագահութիւնն  
ու ստակ տպելու իրաւունքն առաւ, որով Պար-  
թեւաց թագաւորներն երկրորդ եղան. իր  
Միհրդատ փեսին հետ նուաճեց Փոքր-Ասիան,  
անցաւ Եւ բոպան, տիրեց Թրակիոյ, Յունաստա-

նի ու Լիւդիոյ. Հռովմայեցիք դէմ ելան, բայց  
Արտաշէս սովոր պատճառաւ ետ քաշուկի ստիպ-  
ուեցաւ, իրեն հետ Հայաստան բերելով Յունաց  
շաստուածոց ճարտարարուեստ արձանները:

Հ. Ի՞նչպէս մեռաւ Արտաշէս :

Պ. Յունաստանէ վերադարձին զօրացը մէջ  
խոռովութիւն իյնալով՝ զարմուեցաւ ու մեռաւ՝  
25 տարի թագաւորելէ ետքը. իր զօրաց բազ-  
մութիւնը անհամար էր :

ՏԻԳՐԱՆ Բ. ՄԵԾ

(Նախ խմ գթրիսոս 90-36)

Հ. Ովլ յաջորդեց Արտաշէսի :

Պ. Իր որդին Տիգրան Բ. Մեծ, որ իր Միհրդ-  
դատ քեռայրին օդնութեամբը Հռովմայեցւոց  
դէմ մշած երեսնամեայ պատերազմովը խիստ  
նշանաւոր հանդիսացաւ: Հռովմայեցիք երեք  
խիստ երեւելի զօրապետներ զրկեցին Միլլա,  
Ղուկուղզոս եւ Պոմպէոս. Միլլա կապագովկիոյ  
մէջ յաղթուեցաւ. Ղուկուղզոս յաղթութիւն-  
ներ ունեցաւ, բայց յետոյ յաղթուեցաւ Տիգ-  
րանէն և եկաւ Պոմպէոս. Միհրդատ իւր կրած  
պարտութեանը վրայ սրտին ցաւէն թոյն առաւ  
ու մեռաւ :

Հ. Ի՞նչ վախճան ունեցաւ պատերազմը :

Պ. Պոմպէոս Միհրդատայ մահուանը վրայ  
ուրախացած Հռովմ գնաց, Գարիխանոս զօրա-  
վարը անցաւ Ասորւոց բանակին գլուխը, բայց  
Համարձակեցաւ Տիգրանայ հետ պատերազ-  
միլ, գնաց Եղիպատոս. Կրասոս անցաւ, բայց

Տիգրան առաջնութիւնը դարձեալ Պարթեւաց տալով՝ դաշնակցեցաւ և Հայոց ու Պարթեւաց բանակները կրասոսի գէմ ելան. կրասոս սպաննը եցաւ. ապա գացին Երուսաղէմ, գերի բրոնեցին զհիւրկանոս Հրէից թագաւոր-քահանայապետը եւ ուրիշ բազմաթիւ գերիներ, զորս Տիգրան վանայ մէջ եւ ուրիշ քաղաքներ բնակեցուց :

Հ. Տիգրան քանի՞ տարի թագաւորեց :

Պ. 54 տարի և մեծ անուն թողուց պատմութեան մէջ :

Ա. Բ. Տ. Ա. Զ. Դ. Ա.

(Նախ խան գթիւսու 36-34)

Հ. Տիգրանայ ով յաջորդեց :

Պ. Իր որդին Արտաւազդ Ա. որուն օրովը Հռովմայեցիք իրենց վրէմը հանելու համար Անտոնիոս զօրավարը զրկեցին, որ խարդաւանութեամբ բռնելով զԱրտաւազդ՝ ոսկի շղթայի զարկաւ ու եղիսպոս կղէոպատրա թագուհուոյն զրկեց, ուր նա քիչ մատեն ի բանտ դնելէ ետքը սպաննեց :

Հ. Ի՞նչպէս մարդ էր Արտաւազդ :

Պ. Իր հօրը քաջութիւնն ու արիութիւնը չունէր, թոյլ եւ աւելի գրական մարդ էր. ունի գրած շատ ողբերգութիւններ, պատմութիւններ ու ճառեր :

Ա. Բ. Շ. Ա. Մ.

(Նախ խան գթիւսու 33-3)

Հ. Արտաւազդին ով յաջորդեց :

Պ. Արտաւազդայ բռնուելէն երկու տարի

ետքը Հայոց զօրքը թագաւոր ընտրեցին Արտաւազդայ եղբօրորդին Արշամը, որ Պարթեւաներէ օգնութիւն չգտնելուն համար Հռովմայեցոց հարկատու եղաւ՝ Միջագետաց համար տուրք տալով անոնց, որով Հայաստան հարկատու եղաւ Հռովմայեցուց :

Հ. Արշամ ուրիշ ինչ ըրաւ :

Պ. Իր աթոռը, արքունական գիւաններն ու կուռքերը եղեսիա փոխադրեց, և 30 տարի թագաւորեց :

Ա. Բ. Գ. Ա. Ր.

(Նախ խան գթիւսու 3 և յետ խան գթիւսու 34)

Հ. Արշամայ ով յաջորդեց :

Պ. Արշամայ յաջորդեց իր որդին Արդար, որոյ թագաւորութեան Գ. տարին ծնաւ Յիսուս Քրիստոս Փրկիչն աշխարհի. Արդար խաղաղեցրնելու համար Պարթեւաց երկիրը գնաց, սակայն Հռովմայեցիք կասկածեցան. պատճառը բացատրելու համար իր մեծամեծներէն երեք հոգի Հռովմայեցոց Մարիոս զօրավարին զըրկեց, որ կուսակալ էր Ասորւոց. ասոնք ի գարձին Ս. Երուսաղէմ հանդիպելով՝ տեսան Քրիստոսի հրաշքները, զորս պատմեցին. Արդար հաւատաց, աղաշանաց թուղթ գրեց Քրիստոսի, որ գայ եղեսիա ու զինքը բժշկէ :

Հ. Եկաւ Քրիստոս :

Պ. Ո՛չ, պատասխանեց Արդարին թէ իր համբառնալէն ետքը աշակերտներէն մէկը պիտի զրկուի, ինչպէս որ ալ եղաւ, եւ թագէոս ա-

ուաքեալը զրկուեցաւ, որ բժշկեց զԱրդար իւր հիւանդութենէն, մկրտեց անոր հետ շատեր, և թագաւորին խոյրարարը՝ զԱդդէ՛ եպիսկոպոս ձեռնադրեց . այսպէս սկսաւ Քրիստոնէութիւնն ի Հայաստան : Հոռվմայեցւոց Տիբեր կայսեր, Պարթեւաց Արշէս և Ասորւոց Ներսէն թագաւորաց նամակ գրեց Արդար որպէս զի հաւատան ի Քրիստոս : Արդար 38 տարի թագաւորեց :

Ա. Ա. Ն. Ո. Ւ. Ե. Խ. Ս. Ա. Տ. Ր. Ո. Ւ. Կ.

(Ցես յան գրիստոս 34-35-65)

Հ. Արդարին ո՞վ յաջորդեց :

Պ. Արդարին յաջորդեց իր որդին Անանուն, որ թողուց զՔրիստոնէութիւն, եւ երր պալատին մէջ սիւն մը կանդնել կուտար, վրան կյալով՝ մեռաւ և տարիէն :

Հ. Ո՞վ էր Սանատրուկ :

Պ. Արդարու Աւգէ քրօջը որդին՝ որ Միջակետաց վերին մասերուն վրայ կը թագաւորէր. յետ մահուան Անանունի՝ թագաւորեց նաեւ եղեսիոյ վրայ. նորոգեց զՄծրին և հրապարակին վրայ կանդնեց իր պատկերը՝ ձեռքը դրամով մը՝ որ նշան էր թէ իր գանձն սպառած և այն դրամը միայն մնայած է :

Հ. Ի՞նչ հալածանք հանեց :

Պ. իր խոստմանն հակառակ՝ Քրիստոնէութեան դէմ ելաւ, նահատակեց զթագէոս առաքեալ և իր Սանդուխտ կոյս աղջիկը, բայց չկրցաւ բնաջինջ ընել Քրիստոնէութիւնը՝ որ մանաւանդ Հայաստանի հարաւային մասանց

մէջ խոր արմատ ձգած էր, և հաւատացեալք՝ որոց թիւը կ'աճէր օր ըստ օրէ՝ գաղտնի պաշտօն ու պատարագ կը մատուցանէին այրերու մէջ : Այս վիճակ տեւեց մինչև Ա. Գրիգոր Լուսաւորիչ :

Հ. Ուրիշ ի՞նչ ըրաւ :

Պ. Արդարին բոլոր արու զաւկները սրէ անցուց, զՀեղինէ՝ Արդարու կինը՝ Ասորւոց թագուհի անուանեց եւ խառան քաղաքը անոր բնակութեան յատկացուց, բայց Հեղինէ չկեցաւ, երուսաղէմ գնաց և մեծ սովին ատենը շատ օդնութիւն ըրաւ : Սանատրուկ որսի մէջ դիպուածով սպաննունցաւ ու մեռաւ 30 տարի թագաւորելէ յետոյ :

Կ. Ա. Ա. Վ. Դ. Գ. Բ.

(Ցես յան գրիստոս 65-85)

Հ. Սանատրուկի յաջորդեց :

Պ. երուանդ անունով թշնան մը՝ որ մօր կողմէ միայն Արշակունի էր, բռնութեամբ եղեսիոյ վրայ թագաւորեց. Բագրատունիք իրեն չհնազանդեցան, Սանատրուկի որդւոց կողմը բռնեցին, սա ալ զանոնք սրէ անցնել տուաւ, միայն Արտաշէս անուն որդին ազատեցաւ զոր իւր ստնտուն եւ Սմբատ թագարատունի Պարթեւաց երկիրը տարին, ուր Դարեհ թագաւորը մեծ պատուով պահեց զանոնք :

Հ. Ի՞նչ ըրաւ երուանդ :

Պ. Վախնալով որ չըլլայ թէ Արտաշէս մեծնալով գայ օր մը տիրէ Հայաստանի վրայ, ուղեց Հոռվմայեցւոց հաճելի ըլլալ, ուստի Մի-

Հագետքն անոնց անոնց տուաւ, ինք Արմաւիր եկաւ. իր պաշտպանութեանը համար երասխ գետին եղերքը երուանդաշատ ամուր քաղաքը չինեց, բայց Սմբատ Բագրատունի Պարթեւաց թագաւորին մատուցած ծառայութեանցը փոխարէն՝ անոր կողմէ բազում զօրօք եկաւ ի Հայաստան, իր կողմը շահեցաւ Հայ նախարարներէ զոմանս. և զարկաւ ու սպաննեց երուանդը, որ 20 տարի թագաւորեց. և Արտաշէսը նստեցուց :

Ա. Բ. Տ. Ա. Շ. Է. Բ.

(Յետ յան զբիստոն 85-126)

Հ. Ի՞նչ ըրաւ Արտաշէս :

Պ. Մօր կողմանէ Արշակունի ըլլալուն համար փառաւոր յուղարկաւորութիւն կատարեց ու շիրիմ կանգնեց երուանդի. Սմբատայ մեծ պարզեւ ու թագադիր ասպետութեան և ընդհանուր սպարապետութեան պատիւ տուաւ, Մուրացան նախարարութեան գլուխ՝ Արդամին՝ իր առջի պատիւէն զատ՝ յակնթակապ պատկ կրելու արտօնութիւն շնորհեց, Գիսակը՝ որ իր ստընտուին որդին էր և պատերազմին մէջ դէմին կէսը կորսնցնելուն համար նախարարութեան կարգ անցուց՝ որ Դիմաքսեան կոչուեցաւ, եւ Տուրն անուն մէկու մը որդւոյն ալ նախարարութեան պատիւ տուաւ, որ կոչուեցաւ Տրունիք :

Հ. Ետքը Ի՞նչ ըրաւ Արտաշէս :

Պ. Արտաշատ քաղաքը նորոգեց, պատերազմեցաւ Ալանաց դէմ՝ որ ուրիշ լեռնական աղդաց հետ Հայաստանի վրայ արշաւեցին,

Արտաշէս յաղթեց ու գերի բռնեց Ալանաց թագաւորին որդին, բայց ետքը հաշտութիւնը ըրաւ Ալանաց թագաւորին Սամինիկ անուն աղջկանը ինդրան զքը, որ իրեն կնութեան առաւ և շատ փառաւոր հարսնիք ըրաւ։ Հայոց բանաստեղծք կ'ըսեն թէ՝ ոսկի ու մարգարիտ կը տեղար Արտաշէսի փեսայութեան ու Սամինիկի հարսնութեան ատենը։

Հ. Ի՞նչ խորհուրդ յղացաւ :

Պ. Ուզեց ազատել զՀայաստան Հռովմայեցւոց հարկատուութենէն, ուստի գաղթեցուց հարկը. Հռովմայեցիք զօրք զրկեցին, որ սակայն յաղթուեցան, բայց երբ լսեց թէ Տրայիանոս կայսրն ահագին բանակաւ կուգայ, Արտաշէս ընծաներ ու գիղեալ հարկերը տալով սիրտն առաւ եւ երկիրն ապականութենէ ազատեց։

Հ. Ի՞նչ բարեկարգութիւններ ըրաւ :

Պ. Զանազան գաղթականութիւններ հաստատեց, գիւղերու եւ ագարակներու սահմանները որոշեց, երկրագործութիւնը շատ առաջ տարաւ, վաճառականութիւնն ու արհեստները ծաղկեցուց, գետերն ու ծովակները նաև լեռով լեցուց, ճանքաներ ու կամուրջները շինել տուաւ, ուստինքն ու քաղաքակրթութիւնը ծաղկեցուց, և շաբաթներու, ամիսներու ու տարիներու շրջանը կարգի դրաւ, և 41 տարի թագաւորելէ ետքը մեռաւ, որուն յուղարկաւորութիւնը խիստ փառաւոր և մեծահանդէս եղաւ։

ԱՐՏԱԿՈՉԻ Բ. ՏԻԳՐԱՆ Ա. ԵՒ ՏԻԳՐԱՆ Գ.

(Յետ յան գրիստու 126-130-151-193)

Հ. Արտաշէսին ովլ յաջորդեց :

Պ. Իր որդին մօլի Արտաւազդ , որ շատ կարծատե իշխանութիւն վարեց , վամ զի որսի եւլած ատեն անդունդ մը ինկաւ ձիով ու անհետեղաւ :

Հ. Արտաշէսի վրայօք ի՞նչ կը պատմուի :

Պ. Հայ վիպասանք երկու բան կը պատմեն .  
Ա. թէ՝ որովհետեւ Արտաւազդ բնութեամբ կատաղի էր , կը կարծուէր թէ՝ Մարաց վհուկներն Աժդահակայ ցեղէն կախարդած էին զԱրտաւազդ , ուստի՝ Հայ վիպասանք կ'ըսեն «վիշապազունք գողցան Արտաւազդ մանուկը ու փոխանակ անոր՝ դե դրին» : Բ. Արտաշէս անիծէր է զինքը ըսելով՝ «թէ Մասիս լերան վրայ որսի ելես , քաջերը (դեւերը) բռնեն քեզի ու Մասիս լեռը տանին , հոն մնաս ու աղբնաւ լոյս չտեսնես» :

Հ. Արտաւազդի ովլ յաջորդեց :

Պ. Անորդի ըլլալով՝ եղբայրն յաջորդեց Տիգրան Ա. որուն թագ ու ծիրանի զրկեց Հոռվայեցւոց Անտոնիոս զօրապետը . յիշատակաց արժանի գործ մը չունեցաւ . 21 տարի թագաւորեց :

Հ. Տիրանի ովլ յաջորդեց :

Պ. Իր կրտսեր եղբայրն Տիգրան Գ. որ Պարթեւաց Պերող թագաւորին հետ Հոռվայեցւոց յաղթեց . Տիգրան յետոյ Փոքր-Ասիոյ վրայ քալեց , այն կողմերը տիրող թագուհի մը

բռնեց զայն ու բանտ դրաւ , բայց ազատեցաւ Ղուկիոս Վէրոսի միջոցաւ , որ նմա կնութեան տուաւ իր Ռոփի անուն աղջիկը , յորմէ չորս զաւակ ունեցաւ , զորս նախարարութեան կարգ անցուց , որ Ռոփոեան կոչուեցաւ : — Տիգրան Գ. 42 տարի թագաւորեց :

Վ. Ա. Ա. Ա. Ե. Ե. Խ. Խ. Խ. Խ. Խ.

(Յետ յան գրիստու 193-213-261)

Հ. Տիգրան Գ. ի ովլ յաջորդեց :

Պ. Իր որդին Վաղարշ , որ շինեց երասխ գետին մօտ Վաղարշաւան ու Վաղարշակերս (Ալաշկերս) քաղաքները . հաստատեց Ամանորա տօնը՝ որ կը կատարուէր Հայոց տարեգլխուն , նաւասարդ ամսոյ լին :

Վաղարշ հիւսիսային ազդաց դէմ պատերազմի մէջ նետահար մեռաւ . 21 տարի թագաւորելէն վերը :

Հ. Ո՞վլ յաջորդեց Վաղարշի :

Պ. Իր որդին Խոսրով Ա. մեծ , Ս. Տրդատայ Հայրը , որ իր հօրը մահուան վրէժը լուծելու համար հիւսիսային ազդաց վրայ գնաց , յաղթեց , անոնցմէ բազում պատանդ առաւ և ինչան յաղթութեան՝ կոմոզներ կանդնեց սահմանադլուխները :

Հ. Եաքը ի՞նչ ըրաւ :

Պ. Խոսրով լսելով որ Պարսից Մասանեան ցեղէն Արտաշիր անուն իշխան մը սպաններ է Պարսից Արտաւան Արշակունի թագաւորը՝ որ նաև իրեն ազդական էր , և յափշտակեր է տէրութիւնը , անոր վրայ քալեց ու փախուց զայն

մինչև Հնդկաստան . Խոսրով ի վրէժ մահուան  
Արտաւանայ՝ 10 տարի Արտաշերի դէմ պատե-  
րազմեցաւ , բայց այս վերջնոյն խորհրդովը՝  
խարդաւանութեամբ սպաննուեցաւ Անակէն .  
Խոսրով 48 տարի թագաւորեց :

Հ. Ո՞վ էր Անակ :

Պ. Պահլաւ ցեղէ երեւելի իշխան մը , աղքա-  
կան Արտաշերի և Խոսրովի ու հայր Ս. Գրիգոր  
Լուսաւորչի . սա երբ կը փախէր ի Հայաստանէ,  
Նախարարք հասան , բռնեցին ու սպաննեցին  
ընտանեօքը , յորոց ստատուին ձեռքովը ազա-  
տեցաւ կաթնէներ տղայ մը , զոր կեսարիա փա-  
խուց , և այս տղան էր Ս. Գրիգոր Լուսաւորիչը  
ու հոն սորվեցաւ Քրիստոնէութիւնը :

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՌԱՋ ԹԱԳԱՒՈՐԻ

(Յետ յան գթիւսու 261-286)

Հ. Խոսրովայ մահուանէն ետքը ի՞նչ եղաւ :

Պ. Հայաստան 25 տարի մնաց առանց թա-  
գաւորի , վասն զի , Արտաշեր վերադառնալով  
Հնդկաստանէ՝ անցաւ իւր գահը և անհամար  
զօրքով եկաւ տիրեց Հայաստանի , Խոսրովի  
ցեղը սրէ անցուց և միայն անոր Տրդատ որդին  
ու Խոսրովիդուխտ աղջիկը աղատեցան . Ար-  
տաւազդ Ամատունի նախարարն զջրդատ Հռովմ  
փախուց , ուր մեծաց ու կրթուեցաւ և իր  
սաստիկ քաջութեանն համար մեծ անուն հա-  
նեց և անդամ մ'ալ Հռովմայ Դիոկղետիանոս  
կայսրը վտանգէ մ'ազատեց , որոյ համար կայսրը  
զօրքով ի Հայաստան դրկեց զինքը :

(Յետ յան գթիւսու 286-342)

Հ. Ի՞նչ ըրաւ Տրդատ :

Պ. Տրդատ Հայաստան գալու ժամանակ Կե-  
սարիայէն անցաւ . Ս. Գրիգոր տեղեկանալով  
որ իր հայրն սպաններ է Տրդատայ հայրը , հա-  
տուցում ընելու համար անոր ծառայութեան  
մուաւ . Տրդատ եկաւ ի Հայաստան , ցրուեալ  
նախարարք ժողովուեցան ու իբր թագաւոր  
Հայոց սիրով ընդունեցին զջրդատ , որ վոնտեց  
պարսիկները և Ասորեստանի ու Պարսից նա-  
հանդներէն շատերուն տիրեց :

Հ. Տրդատ ի՞նչ կրօնք կը պաշտէր :

Պ. Կռապաշտ էր . Եկեղեցաց երիշա գիւղը  
գնաց հոն Հայոց երեւելի չաստուածոյն Անահ-  
տայ զոհ մատուցանելու իր յաջողութեանցը  
չորհակալութեան համար . ուզեց որ Ս. Գրի-  
գոր ալ նուերներ մատուցանէ , որ յանձն չա-  
ռաւ , վասն զի քրիստոնեայ էր . Տրդատ նախ  
ջանաց քաղցրութեամբ համոցել , բայց երբ  
անկարելի եղաւ , սոսկալի գառն տանջանքներ  
տուաւ , ու երբ լսեց որ Անակայ որդին է ,  
Խորդիւրապ (۱) նետեց , ուր մնաց 15 տարի :

Հ. Տրդատ որոյ հետ ամուսնացաւ :

Պ. Ալանաց Աշխատար թագաւորին Աշխէն  
դուերն հետ . երկու հրովարտակ հանեց , ո-  
րոցմով մահ կ'սպառնար ամեն անոնց որ Քը-  
րիստոնէութիւն կը գաւանէին , խստիւ կը

(۱) Մահասպարտից յատկացեալ տեղի էր :

պատուիրէր որ չերմեռանդութեամբ պաշտօն մատուցանեն Արամազդայ, զգաստ Անահատայ և քաջ Վահագնի: Այս միջոցիս Գայիխանեանք և Հոկիսիմեանք Դիոկղէտիխանոսի ձեռքէն եկան Հայաստան ապաստանելու, ուր սակայն հանգիստ չգտան. Տրդատ բռնադատեց որ ուրանան զբրիստոնէութիւն, բայց որքա յանձն չառին ու նահատակեցան:

Հ. Տրդատ ի՞նչ պատիժ կրեց:

Պ. Գայիխանեանց և Հոկիսիմեանց նահատակութենէն վեց օր ետքը երբ Տրդատ վաղարշապատէն բազմութեամբ դուրս կ'ելնէր որսի երթալու, յանկարծ դիւահարեցաւ եւ ի խոզ փոխուելով՝ գնաց լեռները, յորս վայրի խոզերու հետ կ'արածուէր. նոյնպէս այսահարեցան իշխաններն ու քաղաքին մարդիկը:

Հ. Ի՞նչպէս ազատեցաւ Տրդատ:

Պ. Տրդատայ Խոսրովիդուխտ քոյրն երկու անգամ իր երազին մէջ տեսնելով հրեշտակ ցեառն որ կ'ըսէք՝ այս պատիճներէն միայն Ս. Գրիգոր կրնայ ազատել զՏրդատ Աստուծոյ հրամանաւը՝ և յայնեց իր տեսիլքը մեծամեծներուն, որ աշաշնօք բերին զԱ. Գրիգոր. ազօթիւք ու զօրութեամբն Աստուծոյ բժշկեց զՏրդատ ու բոլոր այսահարները, քարոզեց ու լուսաւորեց համայն ազգը, որ դարձաւ ի Քրիստոնէութիւն և այս մեծ գործին համար Ս. Գրիգոր կոչուեցաւ Լուսաւորի:

Հ. Ի՞նչ ըրաւ Ս. Գրիգոր:

Պ. Ս. Գրիգոր Լուսաւորի՝ Տրդատայ, բոլոր

նախարարաց և իշխանաց հաւանութեամբն ու մեծ պատուով կեսարիա գնաց, ուր Ղեւոնդեպիսկոպոսէն կաթողիկոս Հայոց ձեռնադրուեցաւ, դարձաւ ի Հայաստան և կործանեց կուռքերն ու մեհեանները. Եկեղեցիներ, վանքեր ու դպրոցներ շինեց, և Հայաստանի հարաւային մասէն բազում Եկեղեցականներ բերել տուաւ ու 500 ի չափ եպիսկոպոսներ ձեռնադրեց, և բազում կարգեր ու կամոններ հաստատեց:

Հ. Ի՞նչ մեծ դէպք պատահեցաւ:

Պ. Արիոսի հերետիկոսութիւնը հերքելու համար 325 ին ի Նիկիա գումարեցաւ Տիեզերական ժողով: Ս. Գրիգոր Լուսաւորիչ նկատելով որ իր կրած չարչարանացն ու դործոցը համար իրեն մեծամեծ պատիճներ պիտի արուին և նախագահէլու պիտի հրաւիրեն զինքը, եւ նկատելով որ արդէն շատ տեղերէ և Հուվմէ իրեն շնորհակալութեան թուղթեր կուգան, զգուշացաւ ժողովին անձամբ երթալէ, և զըրկուեցաւ իր որդին Ս. Արիստակէս հայրապետը, եւ ինք վաւերացուց ժողովին որոշումը՝ «Հաւատամբ» ին վրայ աւելցնելով «Իսկ մեր փառաւրեսցուր» ը:

Հ. Ետքը ի՞նչ ըրաւ Ս. Գրիգոր:

Պ. Ազգին լուսաւորութեանն համար պէտք եղած բաններն ընելէ և իր որդին Ս. Արիստակէսը իրեն յաջորդ անուաննելէ ետքը՝ ինք հրաժարեցաւ կաթողիկոսական իշխանութեամբ քաշուեցաւ Մանեայ այլն, ուր ճգնութեամբ ապրեցաւ մինչեւ իր մահը (333):

Հ. Տրդատ Բնէլ ըրաւ :

Պ. 319ին Տրդատ Հոռվմ գնաց և մեծ ընդունելութիւն գտաւ կոստանդիանոսէն, որ էր կայսր Հոռվմայ և նոր դարձած ի Քրիստոնէութիւն. Տրդատ և կոստանդիանոս քաղաքական դաշինք դրին (<sup>1</sup>) իրարու հետ. իսկ Ս. Գրիգոր Լուսաւորչի համար որ կըսեն թէ Հոռվմ դացած եւ Սեղբեստրոս քահանայապետին հպատակած ու դաշինք դրած է՝ սուս հ:

Հ. Տրդատ Բնէլ պատերազմներ ըրաւ :

Պ. Հիւսիսային ազգաց դէմ պատերազմեցաւ, որք Պարսից Շապուհ թագաւորին դրդումամբն Հայաստան կ'արշաւէին, յաղթեց, եւ իր սրովն երկու կտոր ըրաւ Բասլաց Գեղուեհոն թագաւորք: Տրդատ, Մամկուն ձենացի իշխանին միջոցաւ՝ որ ի Հայաստան ապաստանած էր, սպաննել տուաւ Ծղկունեաց Ալուկ նախարարը, որ Շապուհի թելագրութեամբ ապրստամբած էր: Տրդատ, Մամկուն ձենացիին նախախարարութեան պատիւ և Տարօն դաւառը տուաւ, և ասկէ սերեցաւ Մամիկոնեան նարարութիւնը:

(<sup>1</sup>) Բոլորովին սուս է որ կըսեն թէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հոռվմ դացեր եւ Սեղբեստրոս պապին հպատակութիւն յայտներ է. Գրիգոր Լուսաւորիչ բնաւ Հոռվմ դացած չէ, ոչ ալ պէտք ունէր երթառու եւ հպատակութիւն յայտնելու, վասնդի նախ որ ինք Սեղբեստրոս հայրապետէն 13 տարի առաջ կաթողիկոս եղած է, եւ երկրորդ որ մինչեւ Քրիստոնէութեան Ե. դարը առաջնութեան խնդիր չկար, ուստի առասպել են այս զրոյցը:

Հ. Ի՞նչպէս եղաւ Տրդատայ մահը :

Պ. Տրդատ վշտանալով նախարարաց անուղղայ ընթացքէն՝ առանձնացաւ Մանեայ այրն, ուր ճգնած էր Ս. Լուսաւորիչ նախարարը ուրիշ միջոցաւ մը զջալ ձեւացնելով՝ կանչեցին զջրդատ, որ յանձն չառաւ եւ թունաւորեցին սուրբ թագաւորը, յետ թագաւորելց 56 տարի:

Խ Ա Ս Բ Ո Վ Բ.

(Նախ ժան գրեիսու 342—350)

Հ. Ս. Տրդատայ մահէն ետքը Բնէլ եղաւ :

Պ. Երկիրը ներքին խոռոչութեանց մատնուեցաւ. նախարարներէ շատեր իրարու դէմ ելան Պարսից թելագրութեամբը և իրարու դէմ արիւնայեղ պատերազմներ ըրին: Մանաւաղեանց ու Որդունեաց ցեղերը ջնջու եցան. Աղձնեաց ու թզնունեաց ցեղերը մատնութեան ու ապատամբութեան պատճառաւ մեծ կոտորած կրեցին և Սանատրուկ ձիու մը պոչին կապելով սպաննեց Աղուանից կաթողիկոսը, որ էր որդին Ս. Վլրթանէս հայրապետին:

Հ. Այս խոռոչութիւնը Բնէլպէս հանդարտեցաւ:

Պ. Մնացեալ հայրենասէր նախարարը Ս. Վլրթանէս հայրապետին հետ խորհելով այս չարեաց ու աղետից վրայ, Ծոփաց ու Հաշտենից իշխանները կոստանդիանոս կայսեր զրկեցին՝ աղաչելով որ օդնէ ու Տրդատայ խոսրով որդին թագաւորեցնէ, ինչպէս որ ալ եղաւ:

Հ. Խոսրով Բնէլպէս կառավարեց:

Պ. Բնութեամբ թոյլ՝ բայց առաքինի ու բարեպաշտ էր. Երեն խորհրդակից ունէր զՍ.

Վրթանէս հայրապետը՝ յաջորդ Ս. Արիստակէսի՝ որ մեռած էր մարտիրոսական մահուամբ։ Խոսրովի երեւելի գործն եղաւ յաղթութիւնն հիւսիսականաց դէմ, որ մինչեւ վաղարշապատի գուռը եկած էին։ Խոսրով շինեց Դուին քաղաքը, զոր իրեն մայրաքաղաք ըրաւ և ինը տարի թագաւորեց։

ՏԻՐԱՆ Բ.

(Յետ յան գրիսոս 350—361)

Հ. Խոսրովին ով յաջորդեց։

Պ. Իր որդին Տիրան Բ. որ սպաննել տուաւ զբուսիկ կաթողիկոսը՝ Յուլիանոսի պատկերը խորտակելուն համար, զոր կախած էր Տիրան եկեղեցւոյ մէջ, բայց Պարսից Շապուհ թագաւորը գաւով բռնեց զժիրան եւ կուրյուց աշուընները։ Տիրան 11 տարի թագաւորեց։

Ա. Թ Շ Ա. Կ. Բ.

(Յետ յան գրիսոս 362—382)

Հ. Տիրանին ով յաջորդեց։

Պ. Շապուհ Հայոց սիրտը շահելու համար Տիրանայ որդին Արշակը թագաւորեցուց, որ բաշ բայց խիստ մայիս ու յամառ էր. նախանձու համար սպաննել տուաւ զինէլ եւ անոր Փառանձէմ կինն իրեն կնութեան առաւ, մինչդեռ ինք արդէն ամուսնացեալ էր. խեղդել տուաւ իր կուրացեալ հայրը՝ որ Արարատայ կաւաշ աւանը կը բնակէր։ Արշակ գրգռեց նաև Յունաց բարկութիւնը, բայց Ս. Ներսէս առաջըն առաւ։

Հ. Արշակ ուրիշ Բնէ ըրաւ։

Պ. Շինեց Արշակաւան բաղաք մը, ուր ազատ կը մնային չար, անզգամ, գող ու աւաղակ մարդիկ։ Նախարարք սաստիկ բարկացան ու բոլորովին ցրտացան իրմէ ու իրեն դէմ պատերազմի ելան եւ կործանեցին Արշակաւանը. Ս. Ներսէսի միջնորդութեամբը Արշակ ի վերին երեսս հաշտուեցաւ նախարարաց հետ, բայց յետոյ անոնցմէ մի քանին սպաննել տուաւ։

Հ. Ի՞նչ վախճան ունեցաւ Արշակ։

Պ. Մէկ կողմէ իր նախարարացը և միւս կողմէ ալ իր անհաստատ ընթացքովը երբեմն Յունաց, երբեմն Պարսից ու երբեմն երկուքին ալ ատելի եղաւ, եւ վերջապէս Պարսից կողմէ պատերազմի մէջ գերի բռնուեցաւ Արշակ, զոր Շապուհ թագաւորը շղմայակապ Անյուշ բերդը զրկեց, ուր յուսահատութենէն անձնասպան եղաւ։

Հ. Մերուժան ով էր։

Պ. Ուրացեալ նախարար մը, որ Արշակայ բռնուելէն ետքը՝ իրեւ գլուխ Պարսից բանակին՝ Հայաստան եկաւ ու շատ չարկը հասուց։ Պարսից ու Հայոց բանակները պատերազմեցան։ Պարսիկը յաղթուեցան և երբ Մերուժան կը փախէր, Սմբատ իշխանը ետեւէն հասաւ, բռնեց և սաստիկ տաքցած շամփուր մ' անոր ճակտին գնելով ըստա՝ «Հայոց թագաւոր կը պսակեմ գքեղ Մերուժան, վասնզի գուն այնպէս կը փափաքէիր»։

Ա Ա Ա

(Ցես յան գրիտու 385—392)

Հ. Արշակայ ովլ յաջորդեց :

Պ. Յունաց թէողոս կայսրը՝ Ս. Ներսէսի խնդրանօք, Արշակայ Պապ որդին թագաւորեցուց, որ Յունաց օգնութեամբը վհնտեց Պարսիկները, բայց իր մոլութեանցն համար Ս. Ներսէսէ յանդիմանուելուն պատճառաւ թունախառն գինիով սպաննեց այն սուրբ ու մեծ հայրապետը՝ որ իր երեսնամեայ կաթողիկոսութեան միջոցին մեծ բարիքներ գործեց, աղդին համար աքսորուեցաւ Արիանոս կայսրէն, շինեց շատ տեղեր հիւանդանոցներ, հաստատեց վանքեր ու վարժարաններ ու բարեկարգութիւններ ըրաւ :

Հ. Պապ Բնչ վախճան ունեցաւ :

Պ. Յունաց գէմապստամբելով գերի բռնուեցաւ և Կ. Պոլիս տարուելով՝ կայսեր հրամանաւ գլխատուեցաւ 7 տարի թագաւորելէ ետքը :

Վ. Ա. Բ. Ա. Զ. Դ. Ա. Տ.

(Ցես յան գրիտու 392—393)

Հ. Պապին ովլ յաջորդեց :

Պ. Յունաց թէողոս կայսրը վարազգատ անուն քաջ եւ հզօր իշխան մը թագաւորեցուց, սակայն Յունաց գէմ ապստամբելուն համար ինկաւ թագաւորութենէ եւ կայսեր հրամանաւ աքսորուեցաւ :

ԱՐԵԱԿ. Գ. ԵԽ ՎԱՂԱԲՐԵԱԿ Բ.  
(Ցես յան գրիտու 395—401)

Հ. Վարազգատի ովլ յաջորդեց :

Պ. Յունաց կայսրը Պապին երկու որդիքը միանգամայն թագաւորուեցուց, Արշակ և Վաղարշակ: Վաղարշակ մեռաւ նոյն տարին և թագաւորութիւնը մնաց Արշակին: Բայց Յունաց Արկադ և Պարսից Շապուհ թագաւորը միաբանութեամբ Հայաստան իրենց մէջ բաժնեցին (397): Արեւելեան մասը՝ Արարատեան նահանգով Պարսից ձեռքբը անցաւ, իսկ արեւմտեան փոքրագոյն մասն Յունաց: Արշակ Յունաց բաժնն ընտրեց:

Խ Ո Ս Ր Ո Վ Գ. Գ.

(Ցես յան գրիտու 398—402)

Հ. Պարսից բաժնին վրայ ովլ թագաւորեց:

Պ. Առաջ թագաւոր չդրին, բայց ետքը Հայոց սիրաը շահելու համար Խոսրով անուն Արշակունի մը դրին: Խոսրովի կուսակից նախարարներէ ոմանկը Արշակին գանձը յափշտակելով Խոսրովի տարին: Արշակ պահանջեց իր գանձը, Խոսրով մերժեց եւ երկու համազգի թագաւորաց մէջ պատերազմ բացուեցաւ: Արշակ յաղթուեցաւ ու մեռաւ: Յոյնք իրենց բաժնին վրայ ուրիշ Հայ մը թագաւոր չդրին: Խոսրով երկու մասին վրայ ալ թագաւորեց 5 տարի, իսկ առանձինն Պարսից բաժնին վրայ երկուքուկէս տարի:

Վ. Ռ. Ա. Մ Շ Ա. Պ Ո Ւ Հ

(Ցես յան գրիտու 402—424)

Հ. Խոսրով Բնչ եղաւ:

Պ. Հինգ տարի թագաւորելէ ետքը՝ Մեծն



Ներսէսի որդին զԱյահակ Պարթեւ Հայրապետը  
առանց Պարսից թագաւորին հաւանութեանը  
կաթողիկոս դնելուն համար խորով ինկաւ իշ-  
խանութենէ : Պարսից Արտաշիր թագաւորը  
խոսրովին եղբայրը՝ զՎամիշապուհ թագաւո-  
րեցուց, որ մեծ խմաստութեամբ կառավարեց  
երկիրը, վայելեց Պարսից յարդանքը և Ազդին  
սէրն ու համակրութիւնը :

Հ. Ի՞նչ եղաւ իր օրովը :

Պ. Իր օրովը երկիրը կատարեալ խաղաղու-  
թիւն կը վայելէր : Ս. Մեսրոպ, որ էր կաթո-  
ղիկոս՝ իր գործակցին՝ Մեծին Սահակ Պարթեւի  
օգնութեամբ հնարեց Հայերէն տառերը՝ (405-  
408) որ կոչուեցան Մեսրոպեան տառ . մինչեւ  
նոյն ատեն՝ կար թէւ տեսակ մը գիր, բայց  
մերթ Ասորոց և Յունաց գիրերը կը գործա-  
ծէին : Այս երկու մեծ ու սուրբ հայրապետը՝  
զորս կը խրախուսէր մեծն Վամշապուհ՝ իս-  
կոյն ամեն տեղ գպրոցներ բացին և թարգմա-  
նեցին չին և Նոր կտակարաններն Յունարէնէ  
ի Հայերէն՝ իրենց աշակերտօքը, որ էին Եղնիկ,  
Ղեւոնդ, Արձան, Կորիւն, Յովհան և Յովսէփ :

Հ. Ուրիշ ի՞նչ ըրին :

Պ. Ծաղկեցուցին զՀայաստան կրթութեամբ  
և գիտութեամբ, լեզուն բարձրացուցին և ու-  
նեցան շատ ընտիր թարգմանութիւններ ու հե-  
ղինակութիւններ . այս ժամանակը, Ե. դար, կը  
կոչուի Հայոց դպրութեան ոսկեդարը : Նաև Ս.  
Մեսրոպ Մեծին Սահակայ հրամանաւը առա-  
քելական պաշտօնով պալուեցաւ Հայաստանի հե-

ռաւոր նահանգները, գնաց Աղուանից ու Վրաց  
երկիրները, անոնց լեզուին համար գիր հնա-  
րեց, Հին ու Նոր կտակարաններն անոնց լեզ-  
ուովը թարգմանել տուաւ և սորվեցուց Քրիս-  
տոնէութիւնը :

Հ. Վամշապուհ ո՞րչափ թագաւորեց :

Պ. 21 տարի թագաւորելէ ետքը մեռաւ (424):  
Այն ատեն Պարսից Յաղկերտ թագաւորը նորէն  
թագաւորեցուց զիսորով, որ տարի մ'ապրե-  
ցաւ : Անոր տեղ Յաղկերտ չ'ուզելով դնել Հայ  
թագաւոր՝ իր որդին Շապուհը զրկեց որպէսզի  
զՀայս Պարսից աղանդին դարձնէ, բայց չյա-  
ջողեցաւ, վասնզի Ազդը անբաժան կերպիւ  
յարեալ էր Քրիստոնէութեան : Շապուհ 4  
տարի թագաւորեց (425-428) և այն բոլորովին  
անարդութեամբ :

Ա. Բ Տ Ա. Շ Ի Բ

(Յետ յան գթիւսու 428-433)

Հ. Ո՞վ էր Արտաշիր :

Պ. Վամշապուհի որդին 18 ամեայ պատա-  
նին, զոր պարսից Վամամ թագաւորը Հայոց  
վրայ թագաւորեցուց զանոնք որսալու համար,  
բայց Արտաշիր իր մոլութեանցն համար ատելի  
եղաւ նախարարաց՝ որք հակառակ Ս. Սահակայ  
յորդ-որանացն ու խրամներուն՝ ամբաստաննեցին  
զԱրտաշիր և թէ զՍ. Սահակ՝ Վամամյ առջեւ,  
որ թէ Արտաշիրն և թէ զՍ. Սահակ ձգեց իշ-  
խանութենէ (433), որով չնշուեցաւ Արշա-  
կունեաց իշխանութիւնը :



## Բ. ԺԱՄԱՆԱԿ ՀՊԱՏԱԿՈՒԹԵԱՆ

Մ Ա Ր Զ Պ Ա Ն Ք Ե Ւ Ո Ս Տ Ի Կ Ա Ն Ք

(Ցես խն զբրիսու 433—885)

Հ. Ի՞նչ եղաւ Հայաստանի վիճակն Արշաւ-  
կունեաց իշխանութեան կործանումէն ետքը :

Պ. Պարսից և Յունաց մէջ բաժանեալ մնաց  
երկիրն ըստ առաջնոյն, զոր կը կառավարէին  
Պարսիկք իրենց կողմէ կարգեալ Մարզպանաց և  
Յոյնք կունս կոչուած զինուորական իշխաննե-  
րու միջոցաւ : Պարսիկները միանդամայն իրենց  
կողմէ կաթողիկոս կը կարգէին փառամոլ ու  
անարժան անձինք, ինչպէս են Սուրբակ, Շմուէլ  
և Բրգիշյ, որ աւերեցին ու խանդարեցին եկե-  
ղեցւոյ մէջ հայրապետադիր կարգերն ու կա-  
նոնները :

Հ. Նախարարք ինչ վիճակ ունէին :

Պ. Պարսից և մէջ Յունաց բաժիններուն մէջ  
նախարարք կը վայելէին տեսակ մ'ինքնօրինու-  
թիւն և կը պահէին զօրքեր :

Հ. Ո՞վ եղաւ առաջին Մարզպանը :

Պ. Վեհմիհրշապուհ Պարսիկ մը, որ խաղաղու-  
թեամբ կառավարեց երկիրը, բայց Սուրբակ  
չկաթողիկոս վրդովեց խաղաղութիւնը . նա-  
խարարք ալ 1 տարիէն զինքը վանտեցին : Վեհ-  
միհրշապուհ 14 տարի մարզպանութիւն վարեց :

Հ. Ո՞վ եկաւ վեհմիհրշապուհ տեղը :

Պ. Դենչապուհ անուն խորամանկ Պարսիկ մը,  
որ շատ չարչարեց զէայս և խաղաղութիւնը  
վրդովեց :

Հ. Դենչապուհի ո՞վ յաջորդեց :

Պ. Վասակ Սիւնի իշխանը, որուն օրով Պար-  
սից Յազկերտ թագաւորը՝ յզփացեալ իր յաղ-  
թութիւններէն և գրգռեալ մոգերէն՝ Հայոց  
գլխաւորներուն թուղթ գրեց, որուն մէջ շա-  
տագովելով Պարսից աղանդը, և Քրիստոնէու-  
թիւնն իրը ստութիւն ցոյց տալով կը հրամայէր  
որ կամ հերքեն իր գրածները և կամ ընդունին  
Պարսից աղանդը : Հայք՝ Յովլսէփ կաթողիկոսի  
նախագահութեամբ Արտաշատայ մէջ ժողովը-  
րին, և պատապիսանեցին Յազկերտի թէ՝ պատ-  
րաստ են իւր հրամանները կատարել, բայց չեն  
կրնար թողով զբրիստոնէութիւնն և երկիրպա-  
գանել արեգական ու կրակի :

Հ. Ի՞նչ ըրաւ Յազկերտ :

Պ. Յազկերտ սաստիկ բարկացաւ, նախարա-  
րաց երեւելինները Պարսկաստան կանչեց (450)  
և սպառնացաւ անոնց, որ ի վերին երեսս հը-  
նազանդելով անոր կամացը՝ մոգերու բազմու-  
թեամբ դարձան ի Հայաստան :

Հ. Մոգերն ի՞նչ ընդունելութիւն գտան :

Պ. Հայք առաջնորդութեամբ իրենց եկեղե-  
ցականաց՝ որոց գլխաւորն էր Ս. Ղեւոնդ երէց՝  
միաբանութեամբ յարձակեցան անոնց վրայ ու  
սաստիկ ջարդ մը տուին . մոգերեը զայրացաւ  
վասակայ դէմ՝ որ խարեր էր զիրենք և մէջ  
զբազկերտ և սպառնացաւ եղածն իմացնել :

Հ. Ի՞նչ ըրաւ Յաղկերտ :

Պ. Սաստիկ բարկացաւ, բազում զօրք զրկեց,  
որպէս զի բռնի ուրացնէ զչայս . Վասակ Սիւնի  
ալ զօրք ժողուեց և միացաւ Պարսից՝ իր կողմէ  
որսալով նախարարներէ զոմանս :

Հ. Հայք Բնչ ըրին :

Պ. Մեծին Վարդան Մամիկոնեանի առաջնոր-  
դութեամբ՝ որ սպարապետ էր Հայոց զօրաց՝  
պատրաստուեցան դէմ դնել . Վասակ մեծ վսաս  
տուաւ Հայոց :

Հ. Հայք օգնութիւն ինդրեցին ի Յունաց :

Պ. Այս, բայց անոնք չօգնեցին, պատերազմը  
սկսաւ 451ին, բոլոր զօրքերն հաղորդուեցան ու  
քաջութեամբ պատերազմեցան : Մեծն Վար-  
դան Մամիկոնեան ինկաւ ուրիշ նախարարներու  
հետ և մեռան 1036 հոգի, որոնց 9ը նախարար  
էին, իսկ Պարսիկը կորսնցուցին եռապատիկ ա-  
ւելի : Հայաստանեայց եկեղեցին այս նահա-  
տակութեան յիշատակը կը տօնէ ամեն տարի :

Հ. Պատերազմէն ետքը Բնչ եղաւ :

Պ. Յաղկերտ Վասակայ տեղ Ատրորմիզդ ա-  
նուն Պարսիկ մը Մարզպան դրաւ և պատուէր  
տուաւ Հայոց հետ սիրով վարուելու . Ատ-  
րորմիզդ Յովլսէփ կաթողիկոսը, Ռշտունեաց  
Սահակ եպիսկոպոսը, Ս. Ղեւոնդ երէցն և այլ  
եկեղեցականներ շղթայակապ Պարսկաստան  
զրկեց : Նախարարք Յաղկերտը մեղմացեալ տես-  
նելով Պարսկաստան դացին հայրենեաց աղէ-  
տիցն համար դարման ինդրելու : Յաղկերտ  
բոլոր եկեղեցական ու աշխարհական անձնիքը

հեռաւոր տեղ մը շղթայակապ աքսոր զրկեց,  
ուր մեռան մարտիրոսական մահուամբ : Այս է  
Ղեւոնդեանց նահատակութիւնը, զոր ամեն  
տարի կը տօնէ եկեղեցին :

Հ. Ի՞նչ եղաւ պատերազմին արդիւնքը :

Պ. Արդիւնքը սա եղաւ որ Վարդանանց ու  
Ղեւոնդեանց արեամբը ազատուեցաւ Հայա-  
տանեայց Սուրբ, աղաս, անկախ, կաթողիկէ,  
Ըսդհանրական և Առաքելական Եկեղեցին :

Հ. Ի՞նչ եղաւ վասակ :

Պ. Վասակ որ նոյնպէս Պարսկաստան գացած  
էր իր անարդ ծառայութեանցը վարձատու-  
թիւնն ընդունելու յուսով, իր գործոցն հա-  
մար յանցաւոր գատուեցաւ ու շղթայակապ  
նետուեցաւ մահապարտից բանտը, ուր որդ-  
նալից սատկեցաւ՝ գտնելով իւր չարութեան  
արժանի պատիժը :

Հ. Հայք ըրին ուրիշ պատերազմ :

Պ. Ատրորմիզդ և յաջորդը Ատրվճնասպ (452-  
481) թէպէտ խաղաղութեամբ կը կառավարէին  
և այլ ևս դադրած էր հալածումը, բայց զչայս  
կրտապաշտ դարձնելու ջանքերը կային ու կը  
մնային : Հայ նախարարք Վարդանայ եղբօր-  
որդին՝ զվահան Մամիկոնեան (‘) կարգեցին  
սպարապետ և զվահակ Բագրատունի՝ մարզպան  
և սկսան Պարսիկները վոնտել Հայաստանէն :

(‘) Մին էր Վահան Մամիկոնեան աքսորէ դար-  
ձնող նախարարներէ, որք ի վերին երեսս ուրանա-  
լով իրենց հաւատքը՝ ազատեցան, բայց ապա զվա-  
ցին եւ դարձան ի Քրիստոնէութիւն :

Հ. Հայք յաջողեցան :

Պ. Հայք 5 տարի (481-485) ամեն կերպ նեղութեանց համբերելով՝ պատերազմեցան, յորում Պարսիկ զօրապետներէ շատեր մեռան և ինկաւ Սահակ բագրատունի : Սակայն Պերսիկ եղբայրը Վաղարշ՝ Պարսից թագաւորը, դադրեցուց խոռոչութիւնը, վահանայ առաջնորդութեամբը կատարեց Հայոց խնդիրներն ու փափազները և Անդիկան անուն արդարասէր մէկը մարզպան կարգեց, բայց երկու տարիէն Անդիկան Պարսկաստան գնաց և անոր տեղը վահան Մամիկոնեան մարզպան դրուեցաւ, որուն օրովը կաթողիկոս էր Յովհան Մանդակունի :

Հ. Վահան քանի՛ տարի պաշտօն վարեց :

Պ. 25 տարի խաղաղութեամբ կառավարեց և մեռաւ 510 ին :

Հ. Վահանայ ո՞լ յաջորդեց :

Պ. Պարսից կաւատ թագաւորին հրամանաւը յաջորդեց Վահանայ եղբայրը՝ Վարդ (510-514) և ասոր ալ Մժեծ Գնունի՝ որ 30 տարի խաղաղութեամբ կառավարեց և վանեց զՀոնս՝ որ կովկասարնակ բարբարոս ազգեր էին :

Հ. Մժեծի ո՞լ յաջորդեց :

Պ. Մժեծէ ետքը չորս Պարսիկ մարզպաններ դրուեցան, որոնց վերջինն էր Սուրէն . ասոր օրովը նորէն սկսաւ հալածումը : Հայք առաջնորդութեամբ Վարդան Բ. Մամիկոնեանի (Եղբարորդի Վահանայ) Պարսից դէմ ելան, սպաննեցին զՍուրէն, և Պարսից բաժինն Յունաց յանձնեցին, բայց Պարսից Խոսրով Ա. թագա-

որը մեծ բանակ մը դրկելով՝ նուաճեց զՀայաստան և ձիհը Վզոն Միհրան Պարսիկ խաղաղասէր իշխանը մարզպան դրաւ (578) :

Հ. Վզոն ձիհը ո՞յք յաջորդեցին :

Պ. Մինչեւ Պարսից տէրութեան կործանումը մի քանի Հայ մարզպաններ յաջորդեցին, որք են՝ Սմբատ Բագրատունի բազմայազմ՝, Դաւիթ Սահառունի և Սմբատայ որդին Վարագուհոց : Դաւիթի օրով Գայլ Վահան անուն հնարագէտ Հայ իշխանը մեծ կորուստ տուաւ Պարսից կողմերը՝ իրեն Յունաստանէ վերադարձի ատենը :

Հ. Ի՞նչ մեծ դէպք պատահեցաւ :

Պ. Հագարացիք (Արաբացիք) 632ին Պարսից տէրութիւնը չնշեցին . Հայաստանի Պարսից մասն անցաւ Յունաց, որ իրենց կողմէ Հայ իշխան մը կը գնէին Պատրիկ կամ կիւրազազատ անուամբ : Նոյնպէս Հայ իշխանի ձեռք էր ըսպարապետութիւնը : Այս վիճակը տեւեց 20 տարի . (633-653). բայց Հայք բնաւ գոհ չէին ի Յունաց և միշտ կը նեղուէին կրօնական խնդրոց պատճառաւ : Ուստի Հայք հապատակեցան ամիրապետաց 653ին :

Մի քանի տարի յետոյ Մոաւիա ամիրապետը Հայոց վրայ կուսակալ դրաւ Գրիգոր Մամիկոնեանն՝ ըստ խնդրոյ Հայոց, որ պահ մը հանդարսութիւն վայելեցին :



ՅՈՅՆՔ ԵՒ ԱՐԱԲԱՑԻՔ

Հ. Պարսից տէրութեան ջնջուելէն ետքը բնչ  
եղաւ Հայաստան :

Պ. Պարսից տէրութեան կործանելէն ետքը՝  
(632) անոնց ձեռքը գտնուած մասին ալ Յոյ-  
ները տիրեցին, որ իրենց կողմէն Պատրիկ կամ  
Կիւրապաղատ կը դնէին, որ է կուռակալ և ա-  
նոնց ձեռքովը կը կառավարէին երկիրը :

Հ. Յունաց իշխանութիւնը որչափ տեւեց :

Պ. 20 տարի, այսինքն մինչեւ 653 :

Հ. Պատրիկները բնչ ազգէ էին :

Պ. Հայ, եւ են Դաւիթ Սահառունի (Ե. ան-  
դամ), թէոդորոս Ռշտունի, Վարազտիրոց (Բ.  
անդամ), Սմբատ (Վարազտիրոցայ որդին) և  
Համազասպ Մամիկոնեան. բայց Հայերը բնաւ  
դոհ չէին Յունաց իշխանութենէն, որովհետեւ  
կրօնի պատճառաւ միշտ նեղութիւն կը կրէին :

Հ. 653 էն ետքը բնչ եղաւ :

Պ. Հայք արդէն կը նեղուէին մէկ կողմէն  
Յունաց կրօնական բռնութենէն և միւս կող-  
մանէ Արաբացւոց յարձակումներէն՝ (որ 640ին  
առին Դուինը), 653ին Ամիրապետաց հպատա-  
կեցան : Ամիրապետը Համազասպին եղբայրը՝  
Դրիգոր Մամիկոնեանը կուռակալ դրաւ, և եր-  
կիրը խաղաղեցաւ, բայց 680ին Արաբացւոց  
մէջ խռովութիւն իյնալով՝ Հայաստանի վիճակն  
ալ խանդարուեցաւ և Յոյնք դարձեալ տիրեցին  
680ին եւ սկսան նեղել :

Հ. Այս վիճակը ո՞րչափ տեւեց :

Պ. 680 էն մինչեւ 693. այս միջոցիս Ազգը  
պաշտպանեցին Աշոտ Բագրատունի, Ներսէհ  
կամնարական և Սմբատ Բիւրատեան Հայ իշ-  
խանները՝ որ էին սպարապետ Հայոց. սակայն  
693ին Արաբացիք նորէն տիրեցին և Արաբացի  
ոստիկաններով կառավարեցին զՀայաստան մին-  
չեւ 885 :

Հ. Ո՞վ եղաւ առաջին ոստիկանը :

Պ. Աբգլաւ, որ խորամանկ մարդ մ'էր, ազգը  
շատ նեղեց եւ Սահակ կաթողիկոսն ու մի քա-  
նի նախարարներ խարէութեամբ իր քովը կան-  
չելով՝ շղթայակապ Ամիրապետին զրկեց, որ  
Դամասկոս կը նստէր :

Հ. Աբգլաւին ո՞վ յաջորդեց :

Պ. Կաշմ, ասոր ալ Վիլժ. ասոր օրով բաւա-  
կան հանգստութիւն վայելեց, որովհետեւ Յով-  
հան իմաստասէր կաթողիկոսը իր խոհակա-  
նութեամբը Ամիրապետին սիրելի եղած էր :

Հ. Վիլժին ո՞վ յաջորդեց :

Պ. Մահմէտ և ասոր ալ Աբգլաւիզ, որ կը  
նեղէին ազգը . Սմբատ Բագրատունի, Ներսէհ  
կամնարական և ուրիշ նախարարներ անոնց  
դէմ կուռեցան, բայց Հայոց այս ընթացքը  
զայրացուց թշնամին, որ Հայ նախարարներն ու  
շատ մարդիկ նենդութեամբ ողջ ողջ այրեց ե-  
կեղեցւոյ մեջ : Այս նեղութիւններ մինչև 742  
տեւեցին :

Հ. Աբգլաւիզի ո՞վ յաջորդեց :

Պ. Մրուան, որ ազնիւ մէկն էր և Հայոց հետ

սիրով վարուեցաւ : Այս միջոցիս շատ երեւելի էր Աշուա վասակեան Բագրատունի իշխանը՝ որ իր իմաստութիւնովը սիրելի եղաւ Մրուանին, որ անոր իշխանաց իշխան տիտղոսը տուաւ, եւ երբ ինք 743 ին Ամիրապետ եղաւ, երկրին կառավարութիւնը անոր յանձնեց :

Հ. Աշտի օրով ինչ պատահեցաւ :

Պ. Հայ նախարարներէ ոմանք ուղեցին ապրուածամբիլ Արաբացիներէն . Աշուա գէմ կեցաւ . նախարարք անոր աշուլները փորեցին 758 ին . իրենց միտքը դրածը ըրին, բայց գէշ կերպով յաղթուեցան :

Հ. Աշուին ովլ յաջորդեց :

Պ. 760 էն մինչև 848 մի քանի Բագրատունի իշխաններ՝ Սահակ, Բագրատ, Սմբատ, Երբեմն Երբեմն Պատրիկ դրուեցան, բայց Արաբացւոց Ամիրապետները անոնց չվստահանալով՝ Երբեմն ալ Արաբացի ոստիկաններ կը զրկէին :

Հ. Որո՞նք էին ոստիկանները :

Պ. Եղիտ, որ Հայոց շատ նեղութիւն տուաւ և տուլքերը ծանրացուց, Սիւլէյման և Պէքիր որուն տուած սաստիկ նեղութեանցը համար շատ տեղեր ուզր ելան ու զօրքը հալածեցին, բայց սա Միջադետքէն զօրք բերել տուաւ, նուաճեց եւ Սմբատն ալ բռնեց ու սպաննեց :

Հ. Պէքիրին ովլ յաջորդեց :

Պ. Հասան, որ նոյնպէս շատ նեղութիւն տըռաւ . Եղիտ Բ. որ դարձեալ նուաճեց Հայերը, ասոր յաջորդեց Հոլ, և Հոլին ալ Ապուսէթ, որ Բագրատաւ իշխանը շղթայակապ Պաղտատ

զրկեց, Հայք սպաննեցին զինքը, ուստի Ամիրապետը անհամար զօրքով Բուղա զօրապետը վրանին զրկեց, որ շատ չարիք հասուց անոնց և իշխանները բռնելով Ամիրապետին զրկեց, ի բանտ դրաւ զանոնք, ուր մեռնողներ եղան . ասոնց մէջ էր Սմբատ Բագրատունին, որ Խոստվանող կոչուեցաւ :

ԿԱԹՈՒԵԿՈՍՈՒԹԻՒՆ Ի Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐՁԷ

Մինչև ցկործանումն Արշակունեաց (303—885)

Հ. Ս. Գրիգոր Լուսաւորիչ քանի տարի Կաթողիկոսութիւն ըրաւ և իրեն ովլ յաջորդեց :

Պ. Ս. Գրիգոր Լուսաւորիչ 303 ին Կաթողիկոս եղաւ, 30 տարի Կաթողիկոսութիւն ըրաւ եւ իրեն յաջորդեց իր որդին Ս. Արիստակէս հայրապետ, որ 7 տարի պաշտօն վարեց, ասոր ալ յաջորդեց իր եղբայրը՝ Ս. Վրդանէս, որ 15 տարի Կաթողիկոսութիւն ըրաւ :

Հ. Ս. Վրդանէսի որո՞նք յաջորդեցին :

Պ. Ս. Վրդանէսի յաջորդեց Ս. Յուսիկ, որ 6 տարի Կաթողիկոսութիւն ըրաւ, ասոր յաջորդեց Փառէն անուն մէկը՝ 4 տարի և ասոր ալ յաջորդեց Մեծն Ներսէս, որ 30 տարի Կաթողիկոսութիւն ըրաւ, և իր դորժերուն համար Մեծ անունին արժանի հանդիսացաւ :

Հ. Մեծին Ներսէսի որո՞նք յաջորդեցին :

Պ. 392 ին Շահակ անունով մէկը Կաթողիկոս ընտրուեցաւ, որ 4 տարի Կաթողիկոսութիւն վարեց, ասկէ ետք Զաւէն՝ 4 տարի, Ետքը Ապուրակէս՝ 5 տարի և ասոր ալ յաջորդեց Ս.

Սահակ Պարթեւ, որ 51 տարի կաթողիկոսութիւն ըրաւ :

Հ. Մեծն Ս. Սահակայ ոյք յաջորդեցին :

Պ. 22ի շափ կաթողիկոսներ, որոնց մէջ երեւելի համարացած են Ս. Մեսրոպ իբր տեղապահ կաթողիկոսութեան (400), որ վարեց 6 ամիս, Յովսէփ կաթողիկոս, որ 454ին ի Պարսկաստան նահատակուեցաւ. Գիւտ կաթողիկոս, Յովհան Մանդակունի, Բարկէն՝ որոյ օրովը 451ին եղաւ Քաղկեդոնի ժողովը, զոր Հայք չեն ընդունիր (¹), Ներսէս Ա. Աշտարակեցի, Մովսէս Բ. որ տոմարը նորոգեց և հաստատեց Հայոց թուականը (551), Աբրահամ Ա. (594-617) որոյ օրովը Վրաց Եկեղեցին Քաղկեդոնի խնդրոյն համար բաժնուեցաւ. Հայոց Եկեղեցիէն, Կոմիտաս կաթողիկոս (617-625) որ նորոգեց Լշմիածինը, Եղր. (628-639), որ ջանաց ընդունել տալ Քաղկեդոնի ժողովը, զոր Ազգը չընդունեց, և իր անունը կը գրուէր զզր :

Հ. Եղիշն ետքը որո՞նք եղան :

Պ. 21 կաթողիկոսներ, որոնց մէջ երեւելի են՝ Ներսէս Գ. շնոր (640-661), որ իր շատ մեծամեծ շինութիւններուն համար Շինող կոչուեցաւ, Եղիշ կաթողիկոս, որոյ օրով Աղուանից Եկեղեցին փորձեց բաժնուիլ Հայոց Եկեղեցին , Յիշեգերական ժողովը կ'ընդունին , Ա. Նիկողոյ Ս. ժողովը , որ ի Նիկողոս գումարեցաւ 525ին , Բ. Կոստանդնուպոլսոյ Ս. ժողովը , որ գումարեցաւ 580ին եւ Գ. Եղիսոսի Ս. ժողովը , որ գումարեցաւ 451ին :

(¹) Հայք միայն Երեք Տիեզերական ժողովը կ'ընդունին , Ա. Նիկողոյ Ս. ժողովը , որ ի Նիկողոս գումարեցաւ 525ին , Բ. Կոստանդնուպոլսոյ Ս. ժողովը , որ գումարեցաւ 580ին եւ Գ. Եղիսոսի Ս. ժողովը , որ գումարեցաւ 451ին :

Ղեցիէն , Յովհան Դ. Խմաստասէր (714-728) որ Հայաստաննեաց Ս. Եկեղեցւոյ երեւելի աստուածաբաններէ մէկն էր, Սիմոն կաթողիկոս , որ երեւելի եղաւ Եկեղեցական բարեկարգութիւններովը , Զաքարիա Ա. (854-876) , որ այն ժամանակի նեղութիւններուն համար մէկ օրուան մէջ սարկաւագ , վարդապետ , Եպիսկոպոս ու կաթողիկոս ձեռնադրուեցաւ և ջանաց որ Յունաց ու Հայոց մէջ միաբանութիւն հաստատէ՝ ընդունել տալով Քաղկեդոնի ժողովը , եւ Գորգ Բ. կաթողիկոս , որ 876ին Բագրատուննեաց առաջին թագաւորը՝ Աշոտ Ա. Մեծ՝ օծեց թագաւոր :

### ԺԱՄԱՆԱԿ ԲԱԳՐԱՏՈՒՆՆԵԱՑ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ

Հ. Ո՞րչափ էր Բագրատուննեաց ժամանակ Երկրին տարածութիւնը :

Պ. Արարատեան նահանգը Շիրակ գաւառով , որ արդէն Բագրատուննեաց ցեղին Երկիրն էր :

Հ. Հայաստանի ուրիշ մասերուն ոյք կը տիրէին :

Պ. Արեւմուեան նահանգաց , Խնչպէս՝ ԲարձրՀայք , Չորրորդ Հայք եւ Ցուրուբերան՝ Յոյնք կը տիրէին . հարաւային նահանգաց՝ Աղձնիք , Կորճայք եւ Պարսկահայք՝ Արաբացիք . Հիւափսային նահանգաց՝ Գուգարք , Արցախ , Աւար և Փայտակարան Վիրք ու Աղուանը : Կը մնային միայն Այրարատ , Սիւնիք եւ Վասպուրական . այս Երկուքն ալ Սիւնեաց և Արծրուննեաց ժա-

ուանդութիւն էին, եւ գրեթէ անկախ, իսկ  
վասպուրական քիչ ատենէ բաժնուեցաւ ու ե-  
ղաւ առանձին թագաւորութիւն :

Մ Ա. Ս Ն Գ.

Բ Ա Գ Ի Ա Տ Ո Ւ Խ Ե Ա Յ Հ Ի Շ Խ Ա Ն Ո Ւ Ի Թ Ի Ի Խ

(Ցես յան գՔրիսոս 885—1079)

Ա Շ Ո Տ Ա . Մ Ե Ծ

(Ցես յան գՔրիսոս 885—890)

Հ. Ի՞նչպէս սկսաւ Բագրատունեաց իշխանու-  
թիւնը և ով եղաւ Ա. թագաւոր :

Պ. Սմբատ Խոստովանողին որդին Աշոտ իր  
հօրը Պաղտատ երթալէն ու Բուզայի մեկնելէն  
ետքը՝ իրը սպարապետ Հայոց՝ մեծ խնամք  
տարաւ Ազգին վրայ, ամենուն հետ սիրով վար-  
ուեցաւ, աղքատաց ու կարօտելոց օգնեց, ընդ-  
հանուրին սէրն ու սիրտը վաստկեցաւ և Ազգն  
ալ զինքը գլուխ ճանչցաւ իրեն : Սիւնեաց վա-  
սակ Գափուռ և Վասպուրականի Գրիգոր Դե-  
րենիկ իշխանները իրեն փեսայացուց : Ամիրա-  
պետը 885 ին Ազգին խնդրանօքը Աշոտին թագ-  
ու ծիրանի զրկեց և Գրիգոր Կաթողիկոս զայն  
օծեց :

Հ. Աշոտ ուրիշ Բնէ ըրաւ :

Պ. Աշոտ երկիրը պայծառացուց, օդտակար

բարեկարգութիւններ ըրաւ, իր իմաստու-  
թեամբը Արաբացւոց Ամիրապետին և Յունաց  
վասիլ ու Լեւոն կայսերաց սիրելի ու յարգելի  
եղաւ . Լեւոն կայսեր այցելութեան գնաց, եւ  
5 տարի թագաւորելէ ետքը՝ կոստանդնուպոլ-  
սէն մեծ պատուով դառնալու ատենը՝ Շիրակ  
գաւառի Քառապուր ըսուած տեղը մեռաւ,  
ուր իրեն յուղարկաւորութեան խիստ փառա-  
ւոր հանդէս կատարեցին,

Ս Մ Բ Ա Տ Ա.

(Ցես յան գՔրիսոս 490-915)

Հ. Աշոտ Ա. ին ով յաջորդեց :

Պ. Իր որդին Սմբատ Ա. որ ազնուաբարոյ,  
համբերող, անյիշաչար, պատերազմող, քաջ ու  
անվեհեր էր, բայց գժբաղդաբար իր թագա-  
ւորութիւնը խոռովութեամբ սկսաւ և գժբաղ-  
դութեամբ վերջացաւ ներքին և արտաքին թշշ-  
նամեաց պատճառաւ :

Հ. Որո՞նք էին ներքին թշնամիք :

Պ. Յաջորդութեան պատճառաւ ներքին խոռ-  
ովութիւն սկսաւ. իր հօրեղբայրը՝ Աբաս կուզէք  
ինք թագաւորել, իշխաններէն ումանք իրեն  
կողմը անցան . Սմբատ ալ իր իրաւունքը կը  
պաշտպանէր . այսպէս ծագեցաւ ներքին պա-  
տերազմը, որուն մէջ Աբաս յաղթուեցաւ ու  
Սմբատ թագաւորեց որ երկիրը ծաղկեցնելու  
մեծ սէր ու փափաք ունէր, բայց ներքին ու  
արտաքին պատերազմներ իրեն արգելք եղան :

Հ. Ո՞վ էին արտաքին թշնամիք :

Պ. Սմբատ Յունաց հետ յարաբերութեան

մոտած լինելու կասկածանօք Արաբացիք, Ա-  
տթրպատականի ոստիկանը<sup>(1)</sup> Ապշին եւ անոր  
յաջորդը Յուսուփի թշնամացան: Ապշին զօրբով  
մոտաւ Հայաստան, բայց յաղթուեցաւ. ետքը  
նախարարները թագաւորին դէմ գրգռեց:

Հ. Ապշին հասաւ իր նպատակին:

Պ. Վասպուրականի Աշոտ Եշխանը ապստամ-  
բեցաւ Սմբատէն և Սմբատայ դէմ օգնութիւն  
ուղեց Ապշինէն, բայց իր աները՝ Գագիկ խար-  
դաւանութեամբ բռնեց զԱշոտ և անոր Գագիկ  
ու Գուրգէն Եղբայրները ու բանտարկեց. այս  
միջոցիս Միջագետաց Ահմատ ոստիկանը՝ որ  
աիրեր էր Աղձնեաց աշխարհին՝ մեծ զօրու-  
թեամբ հասաւ մինչև Տարօն եւ սաստիկ նե-  
ղութիւն ու մեծ զնաս տուաւ. Գագիկ Սմբատայ  
դէմ Ահմատին հետ միացաւ, բայց այս Գագիկ  
սպաննուեցաւ միևնույն Գագիկէն: Ապշին քանի մը  
անգամ նորէն յարձակեցաւ, սակայն ետքը  
հիւանդութենէ մը մեռաւ:

Հ. Սմբատ աղաստեցաւ:

Պ. Ա՛չ, վասնզի Ատթրպատականի ոստիկանը.  
Յուսուփի շատ մը նեղութիւններ տուաւ.  
Սմբատ ալ սաստիկ դիմագրեց, բայց վեր-  
ջապէս ներսէն ու դրսէն անօդնական մնալով:

(1) Հայոց սահմանակից Երկիրներու արաբացի  
կուսակալաց ոստիկան անունը կը արուէր, որ Ա-  
տթրպատաներու կողմէն կը գրուէին: Հայք ամիրա-  
պետ անունը կուտային Արաբացւոց մարդարէի յա-  
ջորդներուն: Ոստիկան բառի գործածութիւնը այս  
առենքն կ'սկսի:

Եւ տեմնելով իր սիրելիներէն շատերուն սպա-  
նումն և իւր կնոջ ու հարսերուն գերութիւնը,  
ապաւինեցաւ Արաբատայ կապոյտ բերդը, որ  
պաշարուեցան Յուսուփիէ: Սմբատ իր և ի-  
րեններուն կենացը զնաս Հասցնելու պայմա-  
նաւ անձնատուր եղաւ, բայց Յուսուփի ի վերջոյ  
իր խոստմանը դրժելով՝ մուժ բանտի մէջ  
զայն սպաննեց:

Հ. Սմբատ բանի տարի թագաւորեց:

Պ. 25 տարի. Սմբատայ օրով մեծ զնաս հա-  
սուցին իր նախարարներէն շատերը՝ միանալով  
անոր թշնամերաց հետ, մատնելով ու զինքը  
անօդնական թողելով: Արծրունեաց թագա-  
ւորութիւնն ալ վասպուրականի մէջ Սմբատայ  
օրովը սկսաւ:

Ա. Շ Ո Տ Բ. Ե Ր Կ Ա Թ

(Յես յան զՔրիստո 915—928)

Հ. Սմբատին ով յաջորդեց:

Պ. Իր որդին Աշոտ Բ. որ իր սաստիկ ոյժին  
համար Աշոտ Երկաթ կոչուեցաւ:

Աշոտ Երկաթ իր հօրը թշնամիները վանտեց  
մեծ քաջութեամբ, կայծակի արագութեամբ  
երկրին մէկ ծայրէն միւսը գնաց, ուր ամեն  
կողմէ թշնամիները փախուց. Հայ նախարարը  
եւ վրաց Ատթրպատականի թագաւորը միարա-  
նութեամբ Աշոտը թագաւորեցուցին:

Հ. Աշոտի օրով ինչ եղաւ:

Պ. Հայ իշխաններ Երկապառակեցան Յուսուփի  
թելաղդութեամբը՝ որ սաստիկ զայրացած էր  
իր զօրաց յաղթուելուն վրայ. Յուսուփի վե-

ըըստին յարձակեցաւ, ամեն կողմ մեծ չարիք  
ու աղէտ հասուց : Այս միջոցիս մեծ սովլ մ'ալ  
եղաւ : Սմբատ՝ Յովհան կաթողիկոսին խոր-  
հըրդովը կ. Պոլիս գնաց օգնութիւն խնդրելու  
համար կոստանդին Պէրքերուժէն կայսրէն, նա  
ալ բազում ընծաներ ու զօրք տուաւ . Սմբատ  
երբ դարձաւ իւր երկիրը, շատ ինկած գտաւ .  
Ներքին թշնամիք ալ բազմացած էին :

Հ. Ովկ էին ատոնք :

Պ. Իր հօրեղբօրորդին Աշոտ սպարապետ, ո-  
րուն թագաւոր տիտղոս տուած էր Յուսուփ,  
եղբայրը Աբաս, Աները՝ Սահակ, Ուտի նա-  
հանդի Գարդմանայ իշխանը, Ափղասաց թա-  
գաւորը՝ Գուրգէն, Վասակ, Գուգարաց Շամ-  
շողդէ իշխանը և Ուտի նահանդին ուրիշ իշ-  
խանները՝ Մովսէս ու Ցիկ : Աշոտ երկու տա-  
րիի չափ ահագին դժուարութեամբ նուաճեց  
զանննք . բայց ետքը վհատելով՝ պարտաւորե-  
ցաւ քաջուիլ Անեւան կղզին,

Հ. Հոն ինչ եղաւ :

Պ. Յուսուփ շատ զօրք զրկեց Նըսր ու Պէշիր  
ոստիկաններով, որ զԱզգը նեղեցին. Պէշիր պա-  
շարեց զԱնեւան, բայց Աշոտէն յաղթուեցաւ :

Հ. Աշոտ ուրիշ ինչ ըրաւ :

Պ. Թշնամութիւնները դադրեցուց, Արծրուն-  
եաց Գագիկի թագաւորին հետ հաշտուեցաւ և  
երբ հանդարտ սրտով ներքին բարեկարդու-  
թեանց կ'աշխատէր, հիւանդանալով մեռաւ :

Աշոտ երկաթ 45 տարի թագաւորեց :

(Ցես յան գթրիսու 928—951)

Հ. Աշոտի ովկ յաղորդեց :

Պ. Աշոտ անորդի ըլլալով՝ Ազգին կամքը  
իր Աբաս եղբայրն յաղորդեց : Սա խոհեմու-  
թեամբ ու սիրով վարուեցաւ . Դուխնի ոստի-  
կանին հետ բարեկամացաւ, երկիրը աւելի  
հանդարտեցուց եւ սկսաւ ծաղկեցնել ու կարս  
քաղաքը իրեն մայրաքաղաք ըրաւ, ուր շինեց  
մեծ ու փառաւոր եկեղեցի մը :

Հ. Կարսի մեջ ինչ պատահեցաւ :

Պ. Երբ աւարտելու վրայ էր շինել տուած ե-  
կեղեցին, Ափղազաց Բէր թագաւորը Աբասի  
վրայ եկաւ . Երբ պատճառն հարցուցին, Բէր  
ամբարտաւանութեամբ ըստ՝ «Եկայ որ Հայոց  
նորաշէն եկեղեցին վրաց ծիսովն օծեմ» . Աբաս  
զայրանալով այս յանդուգն պատասխանին  
վրայ՝ ելաւ անոր գէմ, զարկաւ զօրքը, բռնեց  
զԲէր եւ բերաւ նորաշէն եկեղեցին ու ըստաւ.  
«Ահա այն եկեղեցին՝ զոր կուզէիր վրաց ծէ-  
սով օծել, աղէկ նայէ, վամնզի ալ չպիտի տես-  
նես» ու անկէ գուրս հանելով՝ կուրցնել տուաւ  
անոր աշուլները :

Հ. Աբաս քանի տարի թագաւորեց :

Պ. Աբաս 24 տարի խաղաղութեամբ կառա-  
վարեց :

Ա. ՇՈՏ Գ. ՈՂՈԲՄԱԾ

(Ցես յան գթրիսու 952—977)

Հ. Աբասի ովկ յաղորդեց :

Պ. Իր որդին Աշոտ, որ սկսաւ երկրին պահ-

պանութիւնը ապահովել. հալածեց թշնամիները՝ որ իր հօրը մահուընէն ետքը յարձակեր էին, կազմու պատրաստի 90,000 զօրաց բանակ մը դրաւ, բոլոր շրջակայ աղդերը զայս տեսնելով զարհուրեցան, և ընծաներ դրկելով՝ խաղաղութեան դաշինք դրին :

Աշոտ իր իշխանութեան իններորդ տարին Աղդին խնդրանօքը մեծ շրով 40 եպիսկոպոսի ու մեծ բազմութեան ներկայութեամբը Անի քաղաքի Մայր եկեղեցին մէջ թագաւոր պատակուեցաւ :

Աշոտի Մուշեղ եղբայրն ալ կարուց թագաւոր պատակուեցաւ եւ միշտ միաբան էր իր եղբօրն ու հնազանդ :

Հ. կարուց թագաւորութիւնը ո՞չչափ տեւեց :  
Պ. Մինչեւ Սելճուկեանց տիրելը Հայաստանի վրայ :

Հ. Աշոտ Բնչ ըրաւ :

Պ. Արաբացի ապստամբ Համատուն զօրապետը զարկաւ ու սպաննեց, Ամիրապետն ալ չնորհակալութեան համար Աշոտին թագ եւ շատ ընծաներ դրկեց :

Աշոտ երկրին զանազան կողմերը բերդեր շինեց ու երկիրը զօրացուց :

Ողբամածութեան կողմանէ ալ շատ երեւելի եղաւ. առատ ողորմութիւն կը բաշխէր, աղքատներ ու ցաւագարներ իրեն սեղանակից կ'ընէր. շինել տուաւ շատ աղքատանոցներ, և ստէպ անոնց այցելութիւն կուտար. և իր այս գործոցը համար Ողորմած կոչուեցաւ :

Հ. Այս միջոցիս ինչ պատահեցաւ եւ որչափ իշխեց :

Պ. Յունաց Զմէկիկ կայսրը Հագարացւոց վրայ երթարու ատեն՝ իրեն վրայ եկաւ: Աշոտ անորդ գէմ գնաց և ստիպեց դուրս ելեւ իր երկրէն, Զմէկիկ պարտաւորեցաւ քաշուիլ, որում Աշոտ 10,000 զօրք օգնութիւն տուաւ :

Աշոտ 26 տարի թագաւորեց :

### Ս Մ Բ Ա Տ Բ.

( Յետ յան գթրիսու 977—990 )

Հ. Աշոտ Գ.ի ովլ յաջորդեց :

Պ. իր երէց որդին Մմբատ, որ մեծագործ թագաւոր մ'եղաւ, Անի քաղաքը ամրացուց բարձր պարիսպներով եւ Տրդատ ճարտարապետին շատ հոյակապ շինքեր շինել տուաւ, որոնց մէջ նշանաւոր էր Մայր եկեղեցին :

Հ. Ի՞նչ ըրաւ Մմբատ Բ. :

Պ. իր հօրեղբայրը Մուշեղ՝ կարսի թագաւորը թշնամացաւ. Մմբատ անոր վրայ գնաց, յաղթեց, շատ տեղեր առաւ թէպէտ, բայց Տայոց Դաւիթ իշխանին պատճառաւ, որ շատ զօրաւոր էր եւ պաշտպան Մուշեղի, առած տեղերը եւ տուաւ: Իր վերջին տարիները քանի մը ամնգութ գործերով աղարտեց իրեն անունը. խելագար մարդու մը վրայ կասկածելով թէ աղքունի համբարանոցը այրովն է, աշուըներն հանել ու ողջ ողջ այրել տուաւ: Իր քրոջ աղջեկը իրեն կին առաւ, որուն հրաման շտուաւ եկեղեցին:

Հ. Սմբատ քանի՞ տարի իշխեց :

Պ. 13 տարի թագաւորեց, մեծ էր իր անունը, զոր մինչեւ Տիեզերակալ կը կոչէին :

Գ. Ա. Գ. Ի. Կ. Ա.

(Ցես յան գիրիսու 990—1020)

Հ. Ո՞վ յաջորդեց Սմբատ Բ.Ի.:

Պ. Սմբատին յաջորդեց իր եղբայրը Գագիկ Ա. որ իր քաջութեամբը սարսափեցուց երկրին թշնամիները և շատ անուանի ու պատկառելի եղաւ իր իմաստութեանը, բարեսրտութեանն ու մեծագործութեանը համար : Ի պատիւ Ս. Դրիգոր Լուսաւորչի շինեց Անի քաղաքին մէջ շատ փառաւոր եկեղեցի մը, իր կինն ալ՝ կատարամիտէ թագուհին՝ որ նոյնպես շատ բարեպաշտ էր, աւարտեց Անիի Մայր եկեղեցին, զոր սկսած էր շինել Սմբատ Բ. : Անի քաղաքը եղաւ կաթողիկոսանիստ :

Գագիկ 30 տարի թագաւորեց :

ՅՈՎԱԶԱՆՆԵՍ ՍՄԲԱՏ

(Ցես յան գիրիսու 1020—1040)

Հ. Գագիկի ո՞վ յաջորդեց :

Պ. Իր որդին Յովհաննէս Սմբատ, որ թէպէտ բարի և իմաստուն՝ բայց արի ու պատերազմական գործերու վարժ չէր, իսկ իր փոքր եղբայրը առոյգ ու քաջ պատերազմող էր, ու կուգէր որ հօրը տեղ ինք թագաւորէ, ուստի իր եղբօրը գէմ ելաւ եւ երկու կողմէն պատերազմեցան . Աշոտ յաղթեց եղբօրը զօքքերուն, եւ երբ տեսան նախարարք եւ Պետրոս

Գետագարձ կաթողիկոսը մէջ մտնելով՝ հազիւ երկու եղբայրները հաշտեցուցին :

Հ. Ի՞նչ պայմանով հաշտուեցաւ Աշոտ :

Պ. Ա.յս պայմանով որ՝ Յովհաննէս թագաւորէ բագրատունեաց արեւմտեան մասին եւ Աշոտ ալ՝ Արեւելեան մասին, որով բագրատունեաց արդէն փոքր թագաւորութիւնը երկու մասի բաժնուեցաւ :

Ուրիշ ատեններ ալ նոր խոռվութիւններ ծագեցան երկու եղբարց մէջ, որ տեւեցին մինչեւ անոնց մահը :

Հ. Ի՞նչ պատահեցաւ Յովհաննէսի :

Պ. Երկու մեծ վտանգ պատահեցաւ. Ա. գերի ինկաւ Ափղալաց թագաւորին ձեռքը եւ քանի մը բերդ տալով հազիւ աղատեցաւ, Բ. իր եղբօրը՝ Աշոտի կողմէ լարուած որոգայթի մը մէջ ինկաւ, բայց Աշոտի իշխաններէն մէկը գթալով իր վրայ՝ տարաւ իր աթոռը նստեցուց :

Հ. Իր օրովք ի՞նչ յարձակում եղաւ :

Պ. Թրքաստանէն յարձակեցան վասպուրականի ու ետքը Արարատի վրայ :

Վասպուրականի Սենեքերիմ թագաւորը ինքինք անկարող զգալով՝ իր երկիրը Յունաց տուաւ եւ անոր տեղ Սերաստիան առաւ արջակայ գաւառներովը :

Վասպուրականի Պահլաւունին Արարատ մէջ զարկաւ ու ցրուեց թշնամիները, բայց անկէ ետքը խաղաղութիւն և ապահովութիւն չմնաց :

Հ. Ուրիշ ինչ ծանր գէաքը պատահեցաւ :

Պ. Յունաց վասիլ Բ. կայսրը մեծ բանակով  
Ավղաջաց Գորդի թագաւորին վրայ գնաց ու  
զսպելէ ետքը՝ Բագրատունեաց սահմանները  
մտաւ : Յովհաննէս Սմբատ զարհուրեցաւ եւ  
կայսեր թուղթ մը զրկեց, անոր մէջ խոստա-  
նալով թէ՝ իր մահուրնէ ետքը Անին Յունաց  
կուտայ :

Հ. Ի՞նչ եղաւ այդ թուղթը :

Պ. Վասիլ կայսեր եղբայրն ու յաջորդը՝ կոս-  
տանդին՝ իր մեռնելու ատենը կը կանչէ կիրա-  
կոս անուն Հայ քահանայ մը և Յովհաննէս Սըմ-  
բատի թուղթը անոր կը յանձնէ . այս չքահա-  
նան իրեն յանձնուած թուղթը հաւատարմու-  
թեամբ տիրոջը դարձնելու տեղ՝ կոստանդին  
կայսեր յաջորդին, Միքայել կայսեր կը ծախէ  
մեծ գնով :

Յովհաննէս Սմբատ 20 տարի թագաւորեց :  
Իր եղբայրը Աշոտ ալ մեռաւ նոյն տարին :

Գ. Ա. Գ. Ի. Բ.

(Ցես յան գիրիստու 1040—1045)

Հ. Ո՞վ յաջորդեց :

Պ. Երկու տարի առանց թագաւորի մնաց  
Երկիրը, որ սաստիկ շփոթութեան մէջ ինկաւ.  
Յովհաննէս Սմբատի իշխաններէն մէկը վեստ  
Սարդիո՝ որ խնամակալ էր, յափշտակեց տէ-  
րութեան գանձը և կուզէր թագաւորել :

Յունաց Միքայել Ե. կայսրը կը պահանջէր  
Անին, իբրեւ կտակով իրեն ինկած ժառանգու-  
թիւն, ուստի այս պատճառաւ զօրք զրկեց .  
սակայն վահրամ Պահաւունի՝ Հայոց սպարա-

պետը միաբանելով Հայ նախարարաց հետ՝ մեծ  
քաջութեամբ դէմ ելաւ ու վոնտեց Յոյները  
և Յովհաննէս Սմբատ անորդի ըլլալով՝ Աշոտի  
որդին Գագիկ Բ. ը թագաւորեցուց, որ էր  
ժառանգ թագաւորութեան :

Հ. Գագիկ Բնչ ըրաւ :

Պ. Յունաց ձեռքն անցած շատ մը երկիրներ՝  
ինչպէս տէրութեան գանձն ու քանի մը բեր-  
դեր՝ զորս Սիւնեաց ապստամբ իշխանը՝ Վեստ  
Սարդիս գրաւած էր, ետ առաւ և յազթեց  
Մոնոմախոս կայսեր, որ նոյնպէս կը պահան-  
ջէր Անի քաղաքը :

Հ. Ի՞նչ ըրաւ Յունաց կայսրը :

Պ. Տեսնելով որ բանութեամբ իր ուղածին  
հասնիլը անկարելի է, նենդութեան ձեռք  
զարկաւ . բարեկամութիւն կեղծելով Պոլիս  
հրաւերեց զիագիկ, որ չէր ուզեր երթալ,  
բայց ետքը Պետրոս կաթողիկոսին, նախարա-  
րաց ու մանաւանդ վեստ Սարդսի յորդորա-  
նացը վրայ գնաց :

Կայսրը պահանջեց որ թողու Անին եւ Եր-  
րոդ-Հայքի՝ Մելիտինէ քաղաքն ընդունի. Գա-  
գիկ մերժեց, կայսրն ալ զինքը կիզիստրա աք-  
սորեց կ. Պոլոյ մօտակայ տեղ մը :

Հ. Գագիկ Բնչ եղաւ :

Պ. Յունացն Երկիր աքսորանաց մէջ կող-  
բար իր Ազգին թշուառութիւնը և վրէժիւնդ-  
րութեամբ կը լեցուէր իր սիրտը, լսելով թէ  
կեսարիոյ մետրապոլիտը ի նախատինս Հայոց՝  
Արմեն գրեր է իր շան անունը, գնաց հոն, եւ

բռնելով զայն՝ իր շամը հետ պարկի մը մէջ դրաւ, զոր չարաչար ծեծել տուաւ իր ծառաներուն և շունն ալ կատաղութենէն պատառ պատառ ըրաւ իր տէրը: Յոյնք ալ դարան գործելով՝ մեռուցին զֆագիկ, որ միայն Յ տարի թագաւորեց ու մնացեալ օրերը պանդխտութեան մէջ անցուց :

Հ. Ի՞նչ եղաւ Գագիկի ցեղը :

Պ. Երկու որդի ունէր, Դաւիթ և Յովհաննէս, և Աշոտ անունով թոռ մը . Յովհաննէս մեռաւ և Դաւիթ ու Աշոտ սպաննուեցան, ուրով սպառեցաւ Բագրատունեաց ցեղը . իսկ Բագրատունեաց ցեղը անօրէն վեստ Սարգսի և այլ նախարարաց վատութեամբը ջնջուեցաւ, նոյնպէս և Բագրատունեաց իշխանութիւնը 1045ին վերջերը :

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

Բագրատունեաց իշխանութեան եթիր

Հ. Բագրատունեաց իշխանութեան կործանումէն ետքը ի՞նչ եղան Հայք :

Պ. Գագիկին պանդխտելէն ետքը Յոյնք՝ որ արդէն տիրած էին Մեծին-Հայոց արեւմտեան մասին 368 էն ի վեր, 1046 ին սկսան տիրել նաև անոր արեւելեան մասին ալ:

Հ. Յոյնք ի՞նչպէս կը վարուէին :

Պ. Եատ գէշ կերպով վարուեցան, կրօնի պատճառաւ սաստիկ կը նեղէին զԱզգը և մինչւ անդամ աշխատեցան կաթողիկոսութիւնը

վերցնել, ինչպէս որ Հայաստանի սահմաններէն դուրս աքսորեցին Պետրոս Գետաղարձ կաթողիկոսը՝ որ Վեստ Սարգսի հետ Անին իրենց յանձնեց, եւ երկիրը մաքրելու և օտարաց դէմ պաշտպանելու տեղ՝ կը հալածէին զՀայս և կը ջանային յունացնել:

Հ. Յոյնք կրցին պահպանել երկիրը :

Պ. Ոչ, վասնզի Տուղրիլ՝ Մելճուգեանց առաջն թագաւորը և Ալփասլան՝ անոր եղայրն ու յաջորդը ահագին զօրութեամբ յարձակեցան Հայաստանի վրայ 1048ին եւ վրնտեցին Յոյները :

1072ին Ալփասլանի յաջորդեց իր որդին Մէլիքշահ, որ ալնուաբարոյ, արդարամէր ու աշխարհաշէն մէկն էր և կը սիրէր Քրիստոնեաները՝ մանաւանդ Հայրերը, որոնց մեծ դիւրութիւններ տուաւ :

Հ. Մելճուգեանք ի՞նչպէս կը վարուէին :

Պ. Մելճուգեանց՝ կուսակալները կը նեղէին ու կը կեղեքէին զՀայս : Տեղ տեղ երեւելի Հայ իշխաններ թէպէտ կը պաշտպանէին ու կը հալածէին թշնամին, բայց Յոյնք մեծ արդելքներ կը հանէին և զանոնք դաւով ու խարդաւանութեամբ կ'սպաննէին, մինչեւ անդամ այն Հայ իշխանները՝ որ մեծամեծ ծառայութիւններ ըրած էին իրենց :

Ահա այսպիսի դառն վիճակի մատնուած էր երկիրը :

ԿԱԹՈՆԻԿՈՍՈՒՆՔ

Հ. Բագրատունեաց ժամանակ քանի կաթողիկոսունք նստան :

Պ. 13 կաթողիկոսունք, որոնց մէջ յիշուելու արժանի են Մաշթոյ Բ. միայն 7 ամիս (897), Յովհաննէս Զ. Պատմաբան (897-925), Անանիա Մոկացի (943-965) դէմելաւ Թոնդրակեցի Կոչուած աղանդաւարներուն՝ որ սկսեր էին Հայոց մէջ տարածուիլ, Վահան կաթողիկոս (965-970) որ Յունաց հետ միաբանութիւն հաստատել ուզելուն համար խռովութեան պատճառեղաւ եւ, հետեւաբար, աթոռէն վար առնուեցան, Խաչիկ Ա. (972-992) որ Տրդատ ճարտարապետին ձեռքով 4 փառաւոր եկեղեցի ու ճոխ մատէնաղարան շինեց և հաստատեց եպիսկոպոսարաններ, Պետրոս Գետադարձ (1019-1058) և Խաչիկ Բ. (1058-1064) :

Այս վերջին երկու կաթողիկոսները Յոյնք երկար տարիներ հեռացուցին իրենց աթոռէն՝ կաթողիկոսութիւնը չնշելու և զշայս եկեղեցիէն հեռացնելու համար, բայց Հայք միշտ անդրդուելի մնացին իրենց հաւատոյն մէջ ու քաջութեամբ տոկացին ամեն հալածանաց ու բռնութեանց՝ զորս կը յարուցանէին Յոյնք եւ ուրիշ ազգեր:

ԺԱՄԱՆԱԿ ՌՈՒԲԻՆԵԱՆՑ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ

Հ. Ի՞նչ կը կոչուէր Ռուբինեանց երկիրը :

Պ. Կիլիկիա, որ Փաքր Ասիոյ հարաւ ային արեւելեան ծայրը կիյնար :

Հ. Որո՞նք էին կիլիկիոյ սահմանները :

Պ. Հիւսիսէն Տաւրոս լերանց մէկ մասը, հարաւէն Միջերկրական ծովը, արեւելքէն Աստրիք և արեւմուտքէն Պամիկիլիա և Պիսիդիա :

Հ. Որո՞նք էին կիլիկիոյ գլխաւոր քաղաքները:

Պ. Կիլիկիոյ գլխաւոր քաղաքներն էին Ատանա, Մամեստիա, Սիս, Տարսոն. իսկ բերդաքաղաքներն էին Բարձրբերդ, Վահկա, Լապան, Լամբրոն և Հոռմլլա ամրոցը :



ՄԱՍՆ Դ.

ՌՈՒԲԻՆԵԱՆՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

ՌՈՒԲԻՆ Ա.

(Յէտ յան գթիստու 1080—1095)

Հ. Ի՞նչպէս հաստատուեցաւ Ռուբինեանց իշխանութիւնը :

Պ. Գագիկին բռնուելէն ետքը երբ Հայաստան Յունաց եւ Սելճուկեանց բռնութիւններուն ներքեւ կը ճնշուէր, Հայոցմէ շատեր՝ որ գիւրակեաց էին, ելան երկրէն ու զանազան տեղեր գացին: Անոնցմէ մաս մ'ալ 1080ին կիլիկիոյ կողմերը գնաց, ուր հաստատուեցաւ Հայ գաղթականութիւն մը, որ քիչ ատենէն եղաւ նոր Հայ տէրութիւն եւ կոչուեցաւ Ռուբինեանց :

Հ. Ի՞նչո՞ւ Ռուբինեանց կոչուեցաւ :

Պ. Գագիկ Բ. ի աղդականներէն Ռուբէն ա-

նուն քաջ Հայ իշխան մը՝ որ անոր ընկերներէն մէկն էր եւ ազոտվ տեսած էր անոր թշուառութիւնն ու մահը, միավը դնելով վրէժ լուծել Յոյներէն, կիլիկիա գնաց, ուր գտաւ նորահաստատ Հայ ժողովուրդը, եկեղեցականներ ու Հայոց Վկայասէր մականուանեալ Գրիգոր կաթողիկոսը, որոնց յայտնեց իր միտքը. սոքա սիրով ընդունեցան զինքը ու իրենց գլուխ դրին: Իր անունովը այս նորահաստատ իշխանութիւնն ալ Ռուբինեան կոչուեցաւ:

Հ. Ռուբէն ի՞նչ ըրաւ:

Պ. Տաւրոս Երանց մօտերը տիրող Հայ իշխաններն իր տէրութեանը հետ միացուց՝ որ էին գլխաւորաբար Գող վասիլ, Ապիրատ, Օշին ու Սեաւ Երան վրայ հաւաքուած Հայ կրօնաւորներ. Ռուբէն այս միացումը կատարելէն ետքը՝ մօտակայ Յունաց վրայ գնաց ու հալածեց զանոնք:

Հ. Ռուբէն քանի տարի իշխեց:

Պ. Ռուբէն միայն 15 տարի իշխեց:

#### Կ Ո Ս Ս Ա Ն Գ Ի Ն Ա.

(Ցես յան գԹրիսոս 1095—1100)

Հ. Ռուբէնի ո՞լ յաջորդեց:

Պ. Իր որդին կոստանդին Ա. որ Յունաց ձեռքէն շատ քաղաքներ ու բերդեր առաւ և տիրելով վահկայ բերդին ալ՝ իրեն մայրաբաղը ըրաւ:

Հ. Ասոր օրով ի՞նչ գէտք պատահեցաւ:

Պ. Ռուբանոս Բ. պատին յորդորմամբը Արեւմըտեան աղդերէ Խաչակիր զինուորութիւն մը

Եւրոպայէն Արեւելք արշաւեց Ս. Երկիրն ազատելու համար. կոստանդին մասնակցեցաւ ու նիզակակցութեան դաշինք դրաւ, ճանբաները ցուցուց և Անտափայ Ճախորդութեան ու սովին ատենը պաշար ու ամեն կերպ օգնութիւն հասցուց, որով Խաչակիրք Անտիոքի տիրեցին:

Հ. Ո՞վ էին Խաչակիրք:

Պ. Եւրոպայիներ, որ Պապերուն յորդորանօքը և Եւրոպայի Երեւելի թագաւորաց ու իշխանաց առաջնորդութեամբը (առաջին անգամ 1096 ին), սկսան մեծ բազմութեամբ Պաղեստին գալ ու այլ և այլ Եւրոպական իշխանութիւններ հաստատել Երուսաղէմ, Անտիոք, Եղեսիա, կիպրոս և այլ տեղեր:

Հ. Խաչակիրք ո՞րչափ ատեն իշխանութիւն վարեցին Արեւելք:

Պ. 200 տարիի շափ, եւ անմիաբանութեան, ու ներքին եւ արտաքին կոիւներու պատճառաւ Երթալով տկարացան և 1291 ին ջնջուեցան բոլորովին:

Հ. Ի՞նչ վնաս ծագեցաւ Հայոց:

Պ. Այս պատճառաւ հետզետէ Մոնղոլք, Սելջուկեանք ու Մէմուրք կիլիկիա արշաւեցին, ինչպէս որ պիտի տեսնանք:

Հ. Կոստանդին Ա. ո՞րչափ ատեն իշխեց:

Պ. Վեց տարի:

#### Փ Ո Ր Ո Ս Ա.

(Ցես յան գԹրիսոս 1100—1123)

Հ. Ո՞վ յաջորդեց կոստանդինի:

Պ. Իր որդին թորոս Ա. որ վանեց ու հալա-

ծեց Յունաց զօրքը կիլիկիոյ սահմաններէն՝  
առաւ Անարզաբայ երեւելի քաղաքը, գնաց  
տիրեց կիզիստրա բերդին և զֆագիկ սպաննող  
Մանտալեան իշխան երեք եղբայրները սպան-  
նեց, որով առաւ Գագիկի վրէժը. այսպէս  
Թորոսի անունը ահարկու եղաւ Յունաց, որ  
սկսան անոր իշխանութիւնն ու երկիրը ոչն-  
չացնելու որոդայթներ լարել:

Հ. Ո՞րքան ատեն իշխեց :

Պ. 23 տարի և մեռաւ խաղաղութեամբ, ո-  
րոյ մարմինը իր շինած Դրազարկ վանքը թաղ-  
ուեցաւ :

Թորոսի քաջութիւնները բարձրացուցած էին  
իր անունը օտարաց առջեւ, որ զկիլիկիան  
«Թորոսի երկիր» կ'անուանէին :

ԼԵՒՈՆ Ա.

(Յետ յան գթիւնու 1123—1137)

Հ. Թորոս Ա. ի ովլ յաջորդեց :

Պ. Իր որդին Լեւոն Ա. որ Անտիոքայ իշխա-  
նին օգնեց, բայց անոր յաջորդը նախանձելով  
Լեւոնի յառաջանալուն վրայ՝ Մարաշի իշխա-  
նին հետ միանալով՝ խարէութեամբ Մարաշ  
կանչեցին ու Անտիոքի մէջ բանտարկեցին ուր  
մնաց քանի մամիս, և ազատուեցաւ Աստանա  
ու Մամեստիա քաղաքները, գրամ ու իր մէկ  
որդին պատասխ տալով :

Հ. Ուրիշ ի՞նչ պատահեցաւ :

Պ. Ազատուելին երքը յարձակեցաւ իր թըշ-  
նամեացը վրայ և բոլոր տուածներն առնելէ

զատ՝ ուրիշ տեղեր ալ առաւ, սակայն Յոլիան-  
նէս կոմմենոս կայսրը անձամբ կիլիկիա եկաւ,  
արիւնայել պատերազմով շատ տեղերու տիրեց  
և Լեւոնն ու անոր Ռութին ու Թորոս որդի-  
ները գերի բռնեց, ու շղթայակապ Պոլիս զըր-  
կեց, ուր բանտին չարչարանացը չդիմանալով՝  
և տարիէն մեռաւ :

Լեւոն 14 տարի թագաւորեց և չորս տարի  
ալ բանտարկուած մնաց եւ երկիրը ճ տարիի  
չափ Յոյն կուսականներով կառավարուեցաւ.

Թ Ա Ր Ա Ս Բ.

(Յետ յան գթիւնու 1144—1168)

Հ. Լեւոնի ովլ յաջորդեց :

Պ. Իր որդին Թորոս Բ. որ Յունաց բանակին  
հետ էր, երբ կոմմենոս կայսրը թաթարաց ար-  
շաւանքին պատճառաւ կիլիկիա արշաւեց, ուր  
մեռաւ գիպուածով, և Թորոս ալ հնարքով մը  
փախաւ, Յունաց գէմ ելաւ, շատ տեղեր ա-  
ռաւ : Յունաց կայսրը Աղրիանոս զօրավարին  
առաջնորդութեամբը բանակ մը զրկեց, որուն  
յաղթեց ու երեւելի զօրապետներ գերի բռ-  
նեց. Յոյնք նոր բանակ մը զրկեցին, Թորոս  
անոր ալ յաղթեց :

Հ. Ուրիշ ի՞նչ պատահեցաւ :

Պ. Յոյնք կալամանոս զօրավարը զրկեցին.  
Թորոս գարձեալ յաղթեց, այն ատեն Յոյնք  
իկոնիոյ Սուլթանը գրգռեցին, որուն նոյնպէս  
յաղթեց, ընդարձակեց տէրութիւնը ու ետքը  
եղուսաղէմի Պալտուին թագաւորին միջնոր-



գութեամբը հաշտուեցաւ Յունաց կայսեր հետ:  
Հ. Թորոս քանի տարի իշխեց :

Պ. 24 տարի իշխեց Թորոս թ. որ իր իշխա-  
նութիւնը մինչև Միջերկրական տարածեց :

ԹԱԳՄԱՍ ՊԱՅԼ ԵՒ ՄԼԵՀ

(Ցես յան զՔրիսոս 1168—1169—1174)

Հ. Թորոս թ. ի ովլ յաջորդեց :

Պ. Թորոս թ. հիւանդութեանը մէջ կանչեց  
իւր աները՝ զԹովմաս Պայլ, որ գեսպան էր Ան-  
տիոք, ու իր որդւոյն անշափահասութեանը  
համար ինամակալ դրաւ, և երբ մեռաւ ինք,  
իշխանները զԹովմաս Պայլ իրենց գլուխ ճանչ-  
ցան, բայց Մլեհ՝ Թորոսի եղբայրը Բերիայէն  
եկաւ զօրքով, տիրեց երկրին: Թովմաս Պայլ  
Անտիոք փախաւ, գաղտնի կերպիւ սպաննեց  
Թորոսի անշափահաս որդին եւ ինք իշխեց,  
բայց իր անդութեանցն համար զօրքէն սպան-  
նուեցաւ:

Թովմաս Պայլ 1 տարի, իսկ Մլեհ 5 տարի  
իշխեց:

ԱՐԻԵԿՆ Բ.

(Ցես յան զՔրիսոս 1174—1185)

Հ. Մլեհին ովլ յաջորդեց :

Պ. Թորոսի Ստեփանէ եղբօրը Ռուբէն որդին  
որ իմաստութեամբ կառավարեց, Տարսոնը ա-  
ռաւ նաև Լամբրոնի բերդն ալ՝ որուն կ'իշխէր  
Հեթում՝ Ներսէո Լամբրոնացին մեծ հայրն.  
ուզեց իր իշխանութեանը ներքեւ առնուլ Ան-  
տիոքայ Պէմունդ Լատին իշխանը՝ Հեթումին  
ինդրան օքը՝ դաւոլ բոնեց զՌուբէն և բան-

տարկեց, Ռուբէն իր Լեւոն եղբօրը միջոցաւ  
ազատեցաւ բանտէն ու գարձաւ իր աթոռը,  
սակայն հրաժարեցաւ իշխանութենէ, զոր թո-  
ղուց Լեւոնին, և ինք կրօնաւոր եղաւ:

Հ. Ռուբէն թ. քանի տարի իշխեց :

Պ. Ռուբէն թ. 11 տարի իշխեց :

ԼԵՎՈՆ Բ. ԹԱԳՄԱԿՈՐ

(Նախ յան զՔրիսոս 1185—1219)

Հ. Լեւոն Բնչ ըրաւ:

Պ. Լեւոն Բ. նուաճեց Լամբրոնի իշխանը,  
գերմանիոյ Ֆրետերիկոս Ա. կայսեր օգնեց՝ որ  
Ս. երկիրն ազատելու համար Խաչակրաց բա-  
նակին գլուխը անցած էր, Կիլիկիոյ սահմանա-  
կեց իշխաններուն դէմ ելաւ, յաղթեց, անոնց  
շատ քաղաքներուն ափեց և շատերն ալ իրեն  
հպատակեցուց, երկու անդամ յաղթեց իկո-  
նիոյ Սուլթանին, որ իր վրայ եկած էր, և 1198  
ին Տարսոնի մէջ մեծ հանդէսով թագաւոր  
պսակուեցաւ Գրիգոր Զ. կաթողիկոսէն:

Հ. Ի՞նչ տեղի ունեցաւ:

Պ. Լեւոն Բ. իր աթոռը Սիս փոխադրեց,  
գեղեցիկ շինութիւններով զարդարեց, եւ իր  
անունովս ու Հայերէն գրով առաջին անդամ  
ստակ տպեց: Յունաց Ալեքսան կայսրն ալ թագ  
դրեց Լեւոնի, չնորհաւորեց թագաւոր պսակ-  
ուիլը, և անոր բարեկամութիւնը խնդրեց:

Հ. Լեւոն ովլը ան թագաւորեց :

Պ. Աւրիշ յաղթութիւններ ալ ըրաւ, և 43  
տարի իրը իշխանաց իշխան իշխանութիւն վա-  
րեց ու 21 տարի ալ թագաւորութիւն ըրաւ:

ԶԱՊԵԼ ԵՒ ՓԵԼԻՊՈՂՈՍ

(Ցես յան զբրիստու 1249—1222)

Հ. Լեւոնի ովլ յաջորդեց :

Պ. Լեւոն Բ. միայն Զապէլ աղջիկ մ'ունէր ,  
զոր բարձրաբերդի կոստանդին իշխանին խնա-  
մակալութեանը յանձնեց : Որութէն՝ որ Լեւոն  
Բ. ի եղբօրը թոռն էր , եւ որուն համար 12  
տարի սաստիկ վէճեր ու կոխւներ եղած էին  
Լեւոնի ու Լատին իշխանաց մէջ , ուզեց ինք  
թագաւորել , ու կիլիկիոյ վրայ քալեց , բայց  
յաղթուեցաւ , երկրին իշխանները ամունա-  
ցուցին զԶապէլ Անտիոքյ կոմին որդւոյն՝  
Փիլիպպոսի հետ , որ ազգաւ Լատին էր , ու  
երդում ըրաւ չդպչիլ Հայաստանեաց եկեղեց-  
ւոյ եւ ազգային սովորութեանց :

Հ. Փիլիպպոս պահեց իր երդումը :

Պ. ԱՇ , սկսաւ խարութիւն գնել Հայոց ու  
Լատինացւոց մէջ և Լատինականութեան հե-  
տեւեցաւ , Հայը 4 տարիէն ձգեցին աթոռէն  
և բանտ դրին , ուր մեռաւ :

ԶԱՊԵԼ ԵՒ ՀԵԹՈՒՄ Ա.

(Ցես յան զբրիստու 1224—1270)

Հ. Փիլիպպոսի ովլ յաջորդեց :

Պ. Ասոր մահուընէ ետքը Զապէլ կուզէր  
վանք մ'առանձնանալ , բայց Աղդին մեծամեծ-  
ներուն աղաշանօքը ամուսնացաւ կոստանդին  
իշխանին որդւոյն՝ Հեթումին հետ 1224 ին :  
Հեթում Զապէլի եղաւ գահակից :

Հ. Ի՞նչ ըրաւ Հեթում:

Պ. Հեթում հետեւող եղաւ լեւոն Բ. ի օրի-

նակին , նուաճեց Լամբրոնի ապստամբ կոս-  
տանդին իշխանը , բարեկամացաւ Մոնղոլնե-  
րուն (Թաթար) հետ՝ որ Մեծ Հայաստանի  
տիրելէն ետքը՝ կիլիկիոյ վրայ կուզային , եւ  
Զապէլի մահէն ետքը՝ Հեթում անձամբ գնաց  
Մոնղոլաց Մանգոյ խանին , որուն հետ դա-  
շինք հաստատեց մէկզմէկու օգնելու , Մեծ  
Հայաստանի վիճակը բարելաւել տուաւ , պա-  
տերազմեցաւ կիոնիոյ Սուլթանին հետ՝ որ Կի-  
լիկիա արշաւեր էր , շատ տեղերու հետ առաւ  
գերմանիկ (Մարաշ) բաղարը :

Հ. Ի՞նչ դէպք պատահեցաւ :

Պ. Եղիպտացւոց (Մէմրութներու) Փէնտուխ-  
տար թագաւորը բազում զօրք զրկեց , որ ամեն  
կողմ տարածուեցան , շատ քաղաքներ ու բեր-  
գեր առին , Սիս մայրաքաղաքին տիրեցին : Այս  
պատերազմներուն մէջ Հեթումի թորոս որդին  
սպաննուեցաւ և լեւոն որդին ալ գերի բըռ-  
նուեցաւ : Հեթում , որ թաթարստան գայած  
էր , լսելով այս եղածները՝ շուտ մը հասաւ :

Հ. Ի՞նչ ըրաւ :

Պ. Տեսաւ թէ գործը գործէն անցեր է . ու-  
րիշ ճար չկայ , ուստի Փէնտուխտարին դեսպան  
զրկեց , բարեկամութեան գաշինք հաստատեց  
և իր լեւոն որդւոյն աղատութիւնը խնդրեց ,  
որ երեք տարուան գերութենէն դարձաւ : Հե-  
թում տարիէ մը ետքը հրաժարեցաւ աթոռէն՝  
զոր լեւոնի թողուց եւ ինք Դրազարկ գանքը  
քաշուեցաւ ու կրօնաւոր եղաւ և ուր մեռաւ  
և տարիէն՝ 64 տարի թագաւորելէ ետքը :

ԼԵՒՈՆԻ.

(Ցես յան գմրիստու 1270—1289)

Հ. Ի՞նչ ըրաւ լեւոն:

Պ. Բարերարութեան ու բարեպաշտութեան գործեր ըրաւ, քաղաքական յանցաւորաց ներում չնորհեց, աղքատաց առատ ողորմութիւն բաշխեց, և որոնց իր սեղանէն ամեն օր կերակուր կը բաժնէր, արբունիքը բարեկարդեց, զօրաց թոշակը աւելցուց, ուսման և կրթութեան մեծ հոգ տարաւ, դպրոցներ բացաւ, եկեղեցեաց ու եկեղեցականաց նպաստներ ըրաւ և շատ մը եկեղեցիներ նորոգեց:

Հ. Ի՞նչ չարիք պատահեցան լեւոնի:

Պ. Դժբաղդաբար իր իշխանները հակառակեցան, իր կենացը նենդութիւն և դաւաճանութիւն կընէին՝ զորս ամեն անդամ ի գերեկ հանեց լեւոն և սկսան գրգռել Մէմլուքները, որ երկու անդամ կիլիկիոյ վրայ արշաւեցին, բայց երկու անդամուն ալ չարաչար յաղթուեցան: Ինք երկու անդամ մահամերձ հիւանդացաւ, ժանտախտ ու սով եղաւ, իր որդին ու աղջիկը մեռան և այս միջոցիս նաև լեւոն շատ օդնութիւն ըրաւ ժողովուրդին:

Հ. Լեւոն ո՞րչափ թագաւորեց:

Պ. 19 տարի, որոյ վերջին տարիները շատ ժմրաղը եղան:

Հ. Թ Ա Խ Մ Բ.

Հ. Լեւոնին ովլ յաջորդեց:

Պ. իր որդին Հեթում Բ. որուն օրովք դարձ-

եալ սկսան յարձակմունք կիլիկիոյ վրայ. Եգիպտացիք առին Հռոմելայ քաղաքը և Ստեփանանոս կաթողիկոսն ու Ս. Գրիգոր Լուսաւորչի Աչք գերի տարին Եգիպտասոս, բայց քիչ ատենէն ետ զրկեցին: Հեթումի զուր օգնութիւն խնդրեց արեւելեան ազգերէն. Նիկողայոս Դ. Պապին դիմեց. այս բանին դէմ կեցաւ կոստանդին կաթողիկոսը. Հեթում զայն աթոռէն ձգեց ու Ստեփանանոս Եպիսկոպոսը նստեցուց :

Հ. Ի՞նչ ըրաւ Հեթում:

Պ. Ցեմսելով որ տեղէ մը օգնութիւն չիկայ և ինք ալ որ արդէն կը սիրէր կրօնաւորի կեանք վարել, քաշուեցաւ վանք մը՝ իշխանութիւնը յանձնելով իր թորոս եղբօրը, բայց քիչ ատենէն իր եղբօրն և իշխանաց թախանձանօքը նորէն անցաւ իշխանութեան գլուխը:

Հ. Ի՞նչ դէպք պատահեցաւ:

Պ. Եգիպտացւոց հետ ձախորդ պատերազմէ մը ու հաշտութենէ ետքը իր թորոս որդւոյն հետ Կ. Պոլիս այցելութեան գնաց իր քրոջը, զոր Ադրբնիկոս Բ. Կայսեր որդւոյն կնութեան տուած էր՝ յանձնելով իշխանութիւնը իր Սըմբաւա եղբօրը: Սմբաւ ինքզինք թագաւոր հրատարակեց. Կ. Պոլսէ դարձին բռնեց զՀեթում, կուրցուց աշուշները, բանտարկեց և սպաննեց զթորոս եղբայրը: Հեթումին կոստանդին եղբայրը յարձակեցաւ Սմբաւայ վրայ, բռնեց ու բանտարկեց և Հեթումը ազատեց:

Հ. Ի՞նչ եղաւ Հեթում:

Պ. Քիչ ատենէն բացուեցան աչուշները, և շա-

տեր ուզեցին որ զինքը թագաւորեցնեն : Կոստանդին Սմբատայ հետ միացաւ և ուզեցին դէմ դնել, բայց Հեթում բռնեց զանոնք ու կ. Պօլիս զրկեց, ուր քիչ ատենէն մեռան : Մոնղոլք միանալով ուրիշ իսլամ իշխանաց հետ յարձակեցան ի կիլիկիա : Հեթում արիարար դէմ դրաւ ու վանեց զանոնք, և ինք ալքիչ ժամանակէն վանք մը քաշուեցաւ՝ յանձնելով իշխանութիւնը իր թորոս եղածը լեւոն որդւոյն :

Լ Ե Խ Ո Ն Դ.

(Ցես խան զՔրիստոն 1305—1308)

Հ. Լեւոնի օրով ի՞նչ պատահեցաւ :

Պ. Թէպէտ Հեթում հրաժարած էր . բայց իրեւ թագաւորահայր կամ ինամակալ միշտ խորհրդատու էր Լեւոնի, որ իրենց յոյսը բոլորովին կտրելով արեւելեան ազգերէն՝ աշուընին արեւմնուտք դարձուցին և իրենց յոյսը Պապին վրայ գրին . այս պատճառաւ սաստիկ խոռոշութիւն ինկաւ երկրին մէջ :

Հ. Ի՞նչպէս :

Պ. Գրիգոր կ. Անաւարզեցի կաթողիկոսն և Ունիդորեան Հայ վարդապետներէ ոմանք Եւրոպայէ օգնութիւն գտնելու յուսով ուզեցին Հայոց եկեղեցին Լատինաց միացնել՝ մէկ քանի ծէսեր փոխելով և լատինական արարողութիւններ մտցնելով . Հեթում և Լեւոն որ ազգական էին Լատին իշխանաց՝ կը թղթակցէին Պապերու հետ . բայց այս եղածներուն դէմ կիլիկիոյ և թէ Մեծ-Հայոց ժողովուրդը սաստիկ գրդառեցան ու դէմ կեցան :

Հ. Ի՞նչ եղաւ արդիւնքը :

Պ. Հայք բողոքեցին Անարզարայ նստող Մոնղոլաց Պիլարզու խանին, որ զԼեւոն և թագաւորահայրը դաւով բռնեց ու սպաննել տուաւ :

Հ. Ուրիշ ի՞նչ հետեւանք ունեցաւ :

Պ. Մոնղոլք, Սելճուկեանք և Մելկուքք նոր խաչակրութեան առաջքն առնելու համար միաբանեցան կիլիկիոյ թագաւորութիւնը չնչելու :

ՕՇԻՆ ԵՒ ԼԵԽՈՆ Ե.

(Ցես խան զՔրիստոն 1308—1320—1342)

Հ. Ո՞վ յաջորդեց Լեւոն Դի:

Պ. Իր եղբայրը Օշին, որ Պիլարզու զօրապետը հալածեց կիլիկիոյէն և իրը թէ ուզելով դադրեցնել կրօնական վէճերը, ժողով գումարել տուաւ, բայց ստիպեց որ Դիլիդոր կ. Կաթողիկոսի կարգադրութիւնները ընդունին . այս պատճառաւ սաստիկ խոռոշութիւն ինկաւ ու մեծ վնաս ունեցաւ Պապին հետ յարաբերութիւն հաստատելու սկզբունքը:

Հ. Օշին ո՞րչափ իշխեց :

Պ. 12 տարի և յաջորդեց իր որդին Լեւոն Ե. որ իր հօրը ընթացքին հետեւող եղաւ . Լեւոնի եւրոպայի հետ յարաբերութեան մտնելուն հետեւանքն եղաւ նախ Մոնղոլայ Դիմուրթաշխանը, ետքը Սելճուկեանց Արաման իշխանը ու ետքն ալ Մէմուկները (Եգիպտացիք) կիլիկիոյ վրայ յարձակենին, որնք շատ չարիք հասուցին:

Հ. Ի՞նչ ըրաւ Լեւոն :

Պ. Լեւոն իր իշխաններուն հետ քանի մ'անգամ դէմ ելաւ, բայց չկրցաւ բան մ'ընել.

թուղթ գրեց և օգնութիւն ուղեց Պապերէն ,  
որոնք անտարբեր կեցան : Եզիպտոսի Նասրը  
Սուլթանը լսերով Պապերուն հետ լեռնի նոր  
յարաբերութիւնը , ահեղ զօրութեամբ կիլի-  
կիա եկաւ . Լեռն հաղիւ կրցաւ հանդարտեց-  
նել Սուլթանին բարկութիւնը՝ երդմամբ խո-  
տանալով խղել եւրոպացւոց հետ ունեցած  
բարեկամութիւնը :

Հ. Լեռն ո՞րչափ իշխեց :

Պ. Լեռն 20 տարի թագաւորեց , որ իր հօ-  
րը՝ Օշինի և Լեռն Դ.ի ու Հեթում Բ.ի նման  
անմիտ ընթացք ունենալուն պատճառաւ մեծ  
չարիքներ առաջ բերաւ : Լեռն անզաւակ մեռ-  
նելով՝ դադրեցաւ . Ռուբինեանց յաջորդու-  
թիւնը , և թագաւորութիւնը լուսինեան ցեղին  
անցաւ :

## ԼՈՒՍԻՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

ԿՈՍՏԱՆԴԻՆ Գ. ԳՈՒԽՈՆ ԵԽ ԿՈՍՏԱՆԴԻՆ Գ.

(Ցես յան գրիստու 1342—1362 )

Հ. Լեռն Ե.ի ո՞լ յաջորդեց :

Պ. Կոստանդին Գ. որ Լեռնի հեռաւոր աղ-  
դականներէն Հեթում Բ.ի Զապէլ քրոջը որ-  
դին էր . որուն մայրը կիլլոսի թագաւորին եղ-  
բօրն հետ ամուսնայած էր : Կոստանդին էր ի  
հօրէ Լատին որ հրամայեց թողով Հայաստան-  
եայց եկեղեցւոյ ծէսերը և Լատինականը ըն-  
դունիլ ժողովուրդն ու զօրքը խոռվեցան եւ

զարկին սպաննեցին զկոստանդին , որ միայն  
տարի մը թագաւորեց :

Հ. Կոստանդինի ո՞վ յաջորդեց :

Պ. Իր եղբայրը Գուխոնն , որ նոյնպէս աշխա-  
տեցաւ Ազգը Լատինացնելու , նորէն խռովու-  
թիւն ծագեցաւ և ինք ալ իր եղբօրը նման  
սպաննուեցաւ :

Հ. Ո՞վ յաջորդեց Գուխոնի :

Պ. Ազգը ճանչնալով Լատին ցեղէ թագաւոր  
ընտրելու վնասը , Հեթում իշխանի որդին կոս-  
տանդինը թագաւորեցուց , որ խստիւ արգի-  
լեց Պապական ձեւերն եւ Ռւնիթոռաց քարո-  
զութիւնները : Ներքին բարեկարգութիւններով  
զբաղեցաւ , Մէմլուքները վանեց , կիլիկիոյ վի-  
ճակը բաւական ապահովցուց , բնաւ ականջ  
չկախեց Պապերու յորդորանացն ու թուղթե-  
րուն , և 46 տարի երկիրը խաղաղութեամբ կա-  
ռավարելէ ետքը՝ մեռաւ :

Լ Ե Խ Ո Խ Զ .

(Ցես յան գրիստու 1365—1375 )

Հ. Կոստանդինի մահուրնէ ետքը ինչ եղաւ :

Պ. Կոստանդին զաւակ չուներ . յաջորդու-  
թեան պատճառաւ ծանր վէճներ ծագեցան ,  
որ երեք տարւոյ չափ տեւեցին . ետքէն՝ Գուխ-  
ոնի աղդականներէն Լեռն անունով մէկը  
թագաւորեցուցին : Ասոր օրովը Մէմլուքները  
կիլիկիոյ վրայ յարձակեցան , Լեռն քիչ մա-  
տեն դէմ գնելէ ետքը՝ վէրք առած քաշուե-  
ցաւ ամուր տեղ մը ու բաւական ատեն չերեւ-  
ցաւ : Ուզեցին Մարիամ թագուհին ուրիշի

հետ ամուսնացնել, բայց լեռոն յանկարծ երեւան ելաւ :

Հ. Այս ժամանակին թնչ պատահեցաւ :

Պ. Լեռոնի անյայտացած ժամանակ եղիպտացոց Մէլէք էլ էշէֆ Շապան Սովորանը տեսնելով եւրոպացոց միջամտութիւնը՝ սաստիկ բարկացաւ և իր եղբայրը ահեղ զօրութեամբ կիլիկիա զրկեց : Լեռոն չկրնալով դիմագրել, ընտանեօքը կապան բերդը ապատանեցաւ :

Հ. Ո՞րչափ ժամանակ մնաց հոն :

Պ. Բերդը 9ը ամիս պաշարման դիմանալէ ետքը՝ մէջինները անձնատուր եղան . երկիրն ամբողջ նուածեցաւ եղիպտացոց իշխանութեանը ներքեւ, ու այսպէս վերջացաւ Ռուբինեանց իշխանութիւնը : Իսկ Լեռոն շղթայակապ եղիպտոս տարուեցաւ, ուր բանտարկեալ կեցաւ մէկ տարի, և ետքը Սպանիոյ Յովհաննէս թագաւորին միջնորդութեամբը բանտէն աղատուելով՝ եւրոպա գնաց ու 1393 ին Փարիզի մէջ մեռաւ և թագուեցաւ կեղեստինեանց վանքին մէջ :

Իր գերեզմանը մինչեւ հիմա կը կենայ :

#### ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒՆՔ ՌՈՒԲԻՆԵԱՆՑ ԺԱՄԱՆԱԿ

Հ. Ռուբինեանց ժամանակ քանի կաթողիկոսունք նստան :

Պ. Ռուբինեանց ժամանակ ՚ի կիլիկիա 20 կաթողիկոսունք նստան, որոնց մէջ երեւելի են

Գրիգոր Բ. Վկայասէք (1065-1082), Գրիգոր Պահլաւունի (1113-1165), որ Գրիգոր Բ. ի քրոջը որդին և Շնորհալիին եղբայրն է, Ներսէս Դ. Շնորհալի (1165-1172), Գրիգոր Գ. Տղայ Շնորհալիի եղբօրորդին (1173-1193), Գրիգոր Զ. Ապիրատ՝ Շնորհալիի մէկ ուրիշ եղբօրորդին (1195-1202), Կոստանդին Ա. Բարձրաբերդցի (1220-1267), Գրիգոր Լ. Ռնաւարզացի (1294-1306) որ Հայոց ծէսերը լատինացնել ուղելուն համար մեծ խուզութեան պատճառ եղաւ եւ Պօղոս Ա. (1374-1378) որուն օրովը չնշուեցաւ Ռուբինեանց իշխանութիւնը :



#### ԺԱՄԱՆԱԿ ՀՊԱՏԱԿՈՒԹԵԱՆ


Հ. Հպատակութեան ժամանակը քանի շրջան կը բաժնուի :

Պ. Բագրատունեաց իշխանութեան կործանելէն մինչեւ մեր ժամանակը հպատակութիւնը երեկ շրջան կը բաժնուի :

Ա. Շրջան. — Բագրատունեաց կործանումէն մինչեւ Օսմանցւոց կ. Պոլսոյ տիրելը՝ 1453.

Բ. Շրջան. — Օսմանցւոց Հայաստանի տիրելէն՝ որ կ'սկսի 1475 ին, կը տեւէ Հայաստանի բաժնուիլը, 1476, և՝

Գ. Շրջան. — Հայաստանի բաժնուելէն մինչեւ Արմաշու վանահայր Խորէն եպիսկոպոս Աշքաբանի կ. Պոլսոյ Պատրիարքութեան ընտրութիւնը՝ 1888 :



## Ա. ՇՐՋԱՆ ՀՊԱՏԱԿՈՒԹԵԱՆ

Սելառուգեանց Հայաստանի ժրեկեն մինչև Մոնղոլաց  
Հայաստան գրաւելլ

ՍԵԼԱՐՈՒԳԵԱՆՑ 1046—1232

Հ. Բագրատունեաց իշխանութեան կործան-  
ուելէն ետքը Հայաստան բնչ վիճակ ունեցաւ:  
Պ. Հայաստանի արեւելեան մասը կը դր-  
նուէր Յունաց ձեռքը, արեւելեան մասը՝ Պար-  
սից, հիւսիսային մասը՝ Վրաց եւ Հարաւային  
մասն Հագարացւոց :

Հ. Այս վիճակին մէջ մնաց :

Պ. Մելճուգեանց (Թաթարաց Թոուրը ցեղը)  
Տուղիլ Թագաւորը Պարսկաստանի տիրելէ ետ-  
քը՝ 1048 ին Հայաստան արշաւեց եւ Յունաց  
ձեռքէն շատ քաղաքներ առաւ և իր յաջորդը՝  
Ալփասլան շարունակեց արշաւանքը ոչ միայն  
ի Հայաստան, այլ և Միջագետք, Պաղեստին,  
Փոքր-Ասիա՝ Հայոց, Վրաց, Աղուանից, Յու-  
նաց և Արաբացւոց վրայ եւ շատ շարիք հա-  
սուց :

Հ. Ալփասլանի ով յաջորդեց :

Պ. Իր որդին Մէլիքշահ, որ ազնուաբարոյ էր  
և կը սիրէր Քրիստոնեաները՝ մանաւանդ Հա-  
յերը՝ և մեծ դիւրութիւններ տուաւ Հայոց,  
սակայն իր կուսականները՝ մանաւանդ իրեն  
մեռնելէն ետքը՝ շատ կը նեղէին ու կը կեղե-  
քէին :

Հ. Հայք միիթարութիւն ունեցան :

Պ. Վրաց Դաւիթ քաջայազմ թագաւորն եւ

անոր յաջորդը Գորդի՛ Զաքարիա եւ իւանէ  
Հայազգի քաջ իշխանաց օգնութեամբը յաղ-  
թութիւններ ըրին ու պաշտպանեցին իրենց դի-  
մողները, հիւսիսային Հայաստանն այլազգեաց  
ձեռքէն առին, եւ Հայաստանի արեւելեան  
մեծ մասին ալ տիրեցին, բայց Յոյներն ալ մեծ  
արգելք կ'ըլլային քաջ Հայ իշխաններուն, եւ  
դաւով շատեր մեռցնել կուտային :

Հ. Մինչեւ Էրը տեւեց այս վիճակը :

Պ. Մինչեւ 1233. այս միջոցներուս Սելճուկ-  
եանց իշխանութիւնը արդէն սկսած էր տկա-  
րանալ և երկուքի բաժնուած էր. մէկ ճիւղը  
կը թագաւորէր Պարսկաստանի վրայ և կը տա-  
րածուէր մինչեւ արեւմուեան Ասիա, իսկ միւս  
ճիւղը կ'իշխէր Փոքր-Ասիայ մէջ, եւ իկոնիա  
(Գոնեա) իրենց մայրաքաղաք ըրած էին :

Մոնղոլաց ի Հայաստան արշաւելն եւ տիրելն

ՄՈՆՂՈԼԻ, 1233—1335—1387

Հ. Ի՞նչ նոր գէպք պատահեցաւ :

Պ. 1233 ին սկսաւ Մոնղոլներու արշաւանքը :  
Մոնղոլք հիւսիսային արեւելեան ժողովուրդ  
էին և կը բաժնուէին այլ և այլ ցեղեր. ասոնց-  
մէ մէկուն թագաւորը՝ ձէնկիլ խան նուածե-  
լով 1227 ին միւս ցեղերն ու Թաթարները՝ որ  
Միջին Ասիայ ժողովուրդ էին, մեծ ինքնակա-  
լութիւն մը հաստատեց որ մեծնալով՝ Զինաս-  
տանէ մինչև Ռուսաստան տարածուեցաւ :

Հ. Երբ սկսաւ ասոնց արշաւանքը :

Պ. ձինկիլ խանի յաջորդները 1233 էն մին-  
չեւ 1252 ահեղ զօրութեամբ արշաւեցին ա-

բեւմուան Ասիա , աիգեցին Աղուանից , Վրաց ,  
Հայոց , Միջադետաց եւ գրեթէ բոլոր արեւ-  
մըտեան Ասիոյ երկիրներուն և առին շատ տե-  
ղեր ու քաղաքներ աւերեցին եւ գործեցին սոս-  
կալի բարբարոսութիւններ :

Հ. Ո՞չափ տեւեց այս վիճակը :

Պ. Մէկ դար , այսինքն , 100 տարի . Ասիոյ  
մէջ վերջին Մոնղոլ իշխանը եղաւ Պուսայիտ ,  
որ մեռաւ 1335 ին :

Հ. Մոնղոլներէն ետքը Բնչ եղաւ :

Պ. Հայաստանի արեւելեան մասին Քիւրտ  
կամ Թիւրքմէն ցեղեր կը տիրէին . հիւսիսային  
մասը հանգիստ էր մինչեւ Վրաց սահմանը ,  
որոնց թագաւորութիւնը կանգուն էր , բայց  
աւելի ծանր դէպք մը նորէն խոռովցուց :

Ակնկիմուրի Հայաստան արշաւելն ու տիրելը

Ակնկիմուր 1387—1406—1453

Հ. Ի՞նչ է այդ դէպքը :

Պ. Էօղպէք Թաթարաց թագաւորը՝ Լէնկմի-  
մուր Պարսկաստանի ու Պաղտատի տիրելէ ետ-  
քը՝ եկաւ Հայաստան 1387 ին , և անպատմելի  
չարիք ու անգթութիւններ գործեց . երկիրը  
աւեր ու աւերակ դարձուց՝ տիրած քաղաքնե-  
րը կործանելով ու շատ բնակիչներ սրէ անցնե-  
լով . մինչեւ անգամ չպահեց իր խոստումը՝  
Սեբաստիոյ մէջ զօքերն ու մեծամեծները ողջ  
ողջ թաղեց , ծերերն ու տղաքները կատղած  
ձիերու կոփուտել և հիւանդներն ու բորոտ-  
ները խղղել տուաւ :

Հ. Ուրիշ Բնչ չարիքներ գործեց :

Պ. Լէնկմիմուր ամեն կերպ անպատմելի ան-  
գթութիւն , չարիք , աւեր , կործանում և բար-  
բարոսութիւն գործելէ ետքը Գաղատիա անցաւ ,  
Օսմանցւոց Սուլթան Պայազիտ ինքնակալին հետ  
արիւնայեղ պատերազմի մէջ անոր յաղթելէ ետ-  
քը՝ շատ գերիներով ու աւարներով դարձաւ իր  
աթոռուք՝ Սմրզանտ 1406 ին :

Հ. Յիշատակութեան արժանի Բնչ կայ :

Պ. Լէնկմիմուրի իր արշաւանցը ժամանակ  
բազում Հայերէն և ուրիշ լեզուէ գրքեր Սմըր-  
զանտ տարեր և ամուր աշտարակի մը մէջ դրեր  
է , սաստիկ պատուէր տալով որ դուրս չհանեն ,  
այլ ուղղող ներս մտնէ ու կարդայ :

Հ. Ի՞նչ եղաւ Լէնկմիմուրի երթալէն ետքը  
Հայաստանի վիճակը :

Պ. Հայաստան քիչ մ'ատեն խաղաղութեան  
երես տեսաւ , բայց Լէնկմիմուրի մահէն ետ-  
քը՝ անկէ ընկճուած իշխանը ու թագաւորնե-  
րը գէնք առին իրենց անկախութիւնը ձեռք  
բերելու համար , որով Հայաստանի վիճակը  
նորէն վատթարացաւ : Այս նուաճեալ թագա-  
ւորներէ մէկն ալ Գարա Եռուուփ էր , որուն  
երկիրը Հայաստանի հարաւային կողմը կիյնար:

Հ. Ի՞նչ ըրաւ Գարա Եռուուփ :

Պ. Լէնկմիմուրի որդւոյն՝ Ռուհ Շահի հետ  
պատերազմի սկսաւ 1410 ին . Գարա Եռուուփ  
մեռաւ ու իր իսկէնտէր եղբայրը շարունակեց  
պատերազմը որ 20 տարի տեւեց , այսինքն մին-  
չեւ 1430 :

իսկէնտէր զՀայաստան նուաճեց ու կոչուեցաւ Շահի Արմէն :

Հ. Ի՞նչ դէպք տեղի ունեցաւ :

Պ. Այս երկարատեւ պատերազմաց պատճառաւ երկրագործութիւնը դադրեցաւ, և ասկից առաջ եկաւ երկրորդ անդամը ըլլարվ սաստկագոյն սով մը, որ թշուառութիւնը կատարեալ ըրաւ : Այս աղեալ այնքան ծանր ու սոսկալի եղերէ, որ կը պատմուի թէ՝ անօթութենէ իրար մորթող եւ ուտողներ եղեր են :

## Բ. ՇՐՋԱՆ ՀՊԱՏԱԿՈՒԹԵԱՆ

ՕՍՄԱՆՑԻՑ Կ. ՊՈԼՍՈՅ ՏԻՐԵԼ 1453

Եւ պատրիարքութիւն եւ գաղրականութիւն Հայոց  
ի Կ. Պոլս 1461

Հ. Ի՞նչպէս կսկսի այս շրջանը :

Պ. Օսմանցւոց կ. Պոլսոյ տիրելովը 1453ին, որմէ 8 տարի ետքը՝ 1461՝ հաստատուեցաւ Հայոց կ. Պոլսոյ Պատրիարքութեան աթոռը Պրուսայի առաջնորդ՝ Յովակիմ Եպիսկոպոսէն, որ եղաւ Ա. Պատրիարք :

Բայց Հայք Բիւզանդեան կայսերաց ժամանակ ալ գործի և վաճառականութեան պատճառաւ կ. Պոլսոյ մէջ դադթականութիւն ունէին, և շինած էին Դալաթիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցին :

Հ. Ե՞րբ սկսաւ Հայոց առաջին դադթականութիւնը :

Պ. Բագրատունեաց իշխանութեան կործա-

նելէն ետքը կ'սկսի Հայոց առաջին դադթականութիւնը որ ծագում առաւ անապահովութեան պատճառաւ, այսպէս Ընիի ժողովուրդին դիւրակեաց մասը նախ դադթեց Լեհաստան, ուր ընդունուեցան մեծ պատուվ, տրուեցաւ ներքին գործոց համար աղատ և ուրոյն վարչութիւն և գլուխ, որ Վոյթ կը կոչուէր: Լեհաց Գաղիմիր թագաւորը 1344ին մասնաւոր հրովարտակով վաւերացուց այս աղատութիւնները, զորս իր յաջորդներն ալ հաստատեցին:

Հ. Եւրոպայի ուրիշ որ կողմերը դադթեցին:

Պ. Աւստրիա, Ռևնկարիա, և ուրիշ զանազան կողմեր, յորս Հայք մեծ համբաւ շահեցան իրեւ արհեստագէտ և վաճառական ժողովուրդ և վայելեցին զանազան արտօնութիւններ :

Հ. Ռևնեցան ուրիշ դադթականութիւններ :

Պ. Այս, ունեցան, որոնց վրայ կը խօսինք ի կարգին :

## ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒՆՔ

Ուուրիմեաց իշխանութեան կործանութեան մինչև Հայոց կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը

Հ. Ուուրիմեանց իշխանութեան կործանելէն ետքը ի՞նչ եղաւ կաթողիկոսութեան վիճակը :

Պ. Կաթողիկոսութիւնը մնաց այլակրօն աղդաց աղդեցութեան ներքեւ ու կաթողիկոսներ կը նստէին առանց օրինաւոր լնարութեան :

Գրիգոր թ. Մուսարէկեանց 1440ին նստաւ կաթողիկոս առանց օրինաւոր լնարութեան: Մեծ Հայոց ժողովուրդը չուզեց ճանչնալ և ուզեց լնարել ուրիշ մը կամ նոյն ինքն զֆրի-

գոր, զոր էջմիածին հրաւերեց, բայց չդնաց, ուստի 1440ին ընտրուեցաւ նոր կաթողիկոս մը՝ կիրակոս Վիրապեցի, որ էջմիածին նստաւ ու թէ և կիլիկիոյ կաթողիկոսութիւնը չվերջացաւ, բայց կիրակոս և իր յաջորդները ճանչցուեցան իբրև ընդհանուր և օրինաւոր կաթողիկոս Հայոց :

Հ. Օսմանցիք ուրիշ ովկ կը յիշուի :

Պ. Գրիգոր Ժ. Մակուեցի, որուն յաջորդեց Աղթամարայ Զաքարիա կաթողիկոսը :

Ինչպէս յայտնի է, Հայոց Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը հաստատուած ժամանակ էջմիածնայ կաթողիկոս էր Գրիգոր Պ. Մակուեցի:

#### ՕՍՄԱՆՑԻՔ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

Եւ Պատրիարքունիք 1473—1746

Հ. Օսմանցիք երր մտան Հայաստան :

Պ. Թիւրքմէններու Ագ-գոյունլու կոչուած ցեղէն Ուզուն Հասան 1468ին թիւրքմէններու Գարա-գոյունլու ցեղին վրայ յարձակելէ ու առնց ձեռքէն Պարսկաստանը առնելէն ետքր՝ անցաւ Փոքր Ասիա և Օսմանցւոց ձեռքէն քանի մը քաղաք առաւ, բայց Ֆաթիհ Սուլթան Մէհմէտ Բ. (Կ. Պոլիսը առնողը) Ուզուն Հասանի վրայ գնաց, յաղթեց ու Հայաստանի արեւմտեան կողմը եղող քանի մը քաղաքներուն տիրեց 1472ին :

Հ. Ո՞վ էին Օսմանցիք :

Պ. Սելջուկեան կոչուած Թուրք ցեղին մէկ ճիւղն էին Օսմանցիք, որ իրենց գլխաւորներէն Օսմանի անունովը Օսմանեան կամ Օսմանցիք կոչ-

ուեցան : Այս անձը, Սուլթան Օսման՝ իկոնիոյ (Գոնեա) Սուլթաններուն տէրութեան բաժնուեւ լին ետքը՝ 1299ին առաւ իկոնիան և նուածելով միւս թուրք իշխանութիւնները՝ զօրացաւ և հիմնեց Օսմանեան մեծազօր տէրութիւնը :

Հ. Օսմանցիք ուրիշ Բնչ պատերազմ ըլրին :

Պ. 40 տարի ետքը՝ Պարսից Սաֆեան ցեղէն իսմայիլ անուն իշխանը՝ Շահ իսմայիլ յարձակեցաւ Հայաստանի վրայ ու հոն շատ չարիք գործեց, սակայն Սուլթան Սելիմ անոր դէմ ելաւ, յաղթեց, ցրուեց անոր բանակը և Հայաստանի հիւսիսային գաւառները իր իշխանութեանը տակ առաւ :

Հ. Ո՞վ էին Սաֆեանք :

Պ. Պարսկաստանի մէջ բարեպաշտ համարուած ցեղ մը՝ որ Ալիէն սերեալ է :

Հ. Օսմանցիք դարձեալ պատերազմեցան :

Պ. Այս՝ վասն զի Շահ իսմայիլի յաջորդը Դահմազ. Ա. Շահ Աբաս, Էշրէֆ և Դահմազի. Հետզիւտէ յարձակեցան Օսմանեան Հայաստանի վրայ, ուստի Օսմանցիք ալ միշտ պատերազմաւ գիմադրեցին :

Սաֆեանք 1514էն մինչև 1746 քանի մը անգամներ պատերազմեցան Օսմանցւոց հետ :

Հ. Ի՞նչ ըրաւ Շահաբաս :

Պ. 1606ին յարձակեցաւ Հայաստանի վրայ, և երբ իմացաւ թէ Օսմանցիք ահեղ զօրութեամբ իր վրայ կուգան, ժողովուրդը բռնի հանեց իր երկրէն ու Պարսկաստան տարաւ . ճանբան ժողովուրդին կրած դառն չարչարանքն

ու տառապանքը անպատմելի էր (1) :

Հ. Ե՞րբ դադրեցաւ Պարսից հետ Օսմանցւոց պատերազմը :

Պ. 1746ին, յորում Հայաստան բաժնուեցաւ Պարսից և Օսմանցւոց մէջ, այսինքն Ատրպատական նահանգն և կուր ու Երասխ գետերուն մէջ կեցած մեծ մասը Պարսից անցաւ :

Հ. Մասնաւոր յիշատակութեան արժանի Բնչ դէպք պատահած է :

Պ. Պարսից ներքին խոռովութիւններուն ատենը երբ 1722ին Աղուանք հարաւէն ու Ղեկք (Լաղք) հիւսիսէն կ'ասպատակէին Պարսից երկիրներն ու կ'աւրէին, ասդին, Սիւնեաց և Արցախու կողմը մաս մը Հայեր Դաւիթ Սիւնի իշխանին և Մխիթար անուն մէկու մը առաջնորդութեամբը քանի մը բերդի տիրեցին և 7 տարիի չափ իշխանութիւն վարեցին, բայց Պարսից վրայ գացող Օսմանեան բանակէն նուաճուեցան :

Հ. Ֆաթիհ Սուլթան Մէհմէտ թ. Բնչ արտօնութիւններ տուաւ Հայոց :

Պ. Ֆաթիհ Սուլթան մէհմէտ թ. որ շատ կը սիրեր Հայերը իրենց արհեստից և վաճառականական յառաջադիմութեանը և զՅովակիմ եպիսկոպոս ալ իրեն մատուցած ծառայութեանցը համար՝ անոր՝ (Յովակիմ Պատրիարքին) Յունաց Պատրիարքին տուած արտօնութեանցը

(1) Շահաբաս մասնաւոր արտօնութիւններ տուաւ Պարսկաստան տարած Հայերուն եւ անոնց հետ սիրով կը վարուէր :

յար և նման արտօնութիւններ տուաւ, որք հաստատուած են մասնաւոր հրովարտակներով :

Հ. Յովակիմ որչափ Պատրիարքութիւն ըրաւ և ով յաջորդեց :

Պ. 17 տարի, և իրեն յաջորդեց Նիկողայոս՝ 11 տարի :

Հ. Յովակիմէն մինչև հիմա քանի Պատրիարք նստան :

Պ. Յովակիմէն մինչեւ Աշքեան Տ. Խորէն Պատրիարքի ընտրութիւնը նստան 75 Պատրիարքներ. ասոնցմէ ունանք երկու, երեք և մինչեւ չորս ու հինգ անգամ նստողներ եղան :

Հ. Նիկողայոսի ո՞յք յաջորդեցին :

Պ. Նիկողայոսի յաջորդեց Կարապետ Ա. 20 տարի, Մարտիրոս Ա. 20, Գրիգոր Ա. 11 և Աստուածատուր Ա. 11 տարի :

Ասոր օրովը Ստեփան կաթողիկոս կաթողիկոսական գործերու համար կ. Պոլիս եկաւ, անկէ Պարսկաստան գնաց, անկէ Գերմանիա և անկէ ալ Լեհաստան անցաւ և այս բոլոր գացած տեղը իրեն մեծ պատիւ և ընդունելութիւն եղան թէ Քանունի Սուլթան Սիւլէյմանի, թէ Պարսից Թահմազ Շահին, թէ Գերմանիոյ Կարոլոս Ե. Կայսեր կողմէ և թէ Լեհաստանի մէջ, և այցելութիւն տուաւ գաղթական Հայոց :

Հ. Աստուածատուրին ո՞յք յաջորդեցին :

Պ. Ստեփան Ա. որ 11 տարի պատրիարքութիւն ըրաւ և յաջորդեց Տիրատուր, որ ժողովուրդը կեղեքելուն համար երկու տարիէն զինքը վար առին. Տիրատուր ալ Կիլիկիա գնաց

և հոն իրեն կուսակիցներ գտնելով՝ ապօրի-  
նաւոր կերպով կաթողիկոս ձեռնադրության  
ի կենդանութեան կիլիկոյ կաթողիկոսին, և  
այս պատճառաւ սաստիկ խռովութիւն ծագե-  
ցաւ :

Հ. Տիրատուրի ո՞յք յաջորդեցին :

Պ. Յակոբ Ա. 11 տարի, Յովհաննէս Ա. 8 ը.,  
Թուղմաս Ա. 10 ը., Սարգիս Ա. 3, Յովհաննէս Բ. 1,  
և Ազարիս Ա. որ նաև կաթողիկոս էր կիլիկոյ:  
Հ. Ի՞նչ պատճառի համար այսշափ քիչ կը  
նստէին :

Պ. Երբեմն կուսակցութեանց և երբեմն ալ  
փառասէր Պատրիարքներէ ումանց գործոցը  
պատճառաւ ներքին խռովութիւն և երկպա-  
ռակութիւններ կը ծագէին, որով քիչ ժամա-  
նակէն պատրիարք կը փոխուէր :

Հ. Ո՞յք յաջորդեցին Զաքարիայի :

Պ. Տիրատուր կաշառքի զօրութեամբ կրկին  
անդամ եկաւ, ասոր երկրորդ Պատրիարքու-  
թեանը երրորդ տարին Կ. Պոլիս եկաւ այցե-  
լութեան եւ հանդանակութեան համար էլ-  
միածնայ Մելքիսեդեկ Ա. կաթողիկոսը. իրեն  
խիստ լաւ մեծարանք և ընդունելութիւն ըրաւ  
Ազգը և շատ թախանձանքներով Պատրիարք  
ըրաւ, բայց տարիէ մը հրաժարեցաւ :

Հ. Մելքիսեդեկի ո՞յք յաջորդեցին :

Պ. Յովհաննէս Գ. համբ և տարի և ասոր ալ  
յաջորդեց Գրիգոր Բ. կեսարացի, երեք տարի.  
Գրիգոր բարի ու ազգասէր մէկն էր եւ ազգը  
խաղաղութեամբ կառավարեց :

Ասոր օրովայ էր որ Շահաբաս զչայերը Հայաս-  
տանէն բռնութեամբ Պարսկաստան տարաւ :

Դարձեալ՝ ասոր օրովայ էր որ Ունիթոքը,  
Հայաստանի ամայութենէն օգուտ քաղելով՝  
մտան Հայաստան եւ ամեն ջանք ու միջոց ի  
գործ դրին ժողովուրդը Լատինացնելու, բայց  
վլունտուեցան :

Հ. Ո՞վ էին Ունիթոքը :

Պ. Ունիթոքը՝ որ Միացուցիչ կամ միարար կը  
նշանակէ, էին Լատին կրօնաւորներ, որ կը  
ջանային Հայաստանեայց Սուրբ կաթողիկէ,  
և Առաքելական Եկեղեցին միացնել Հոռվայ  
Պապին իշխանութեանը :

Ունիթոքը մանաւանդ կիլիկոյ մէջ Ռուբին-  
եանց ժամանակը շատ շարիք հասուցին :

Հ. Գրիգորի ո՞յք յաջորդեցին :

Պ. Յովհաննէս Գ. հակառակելով Գրիգոր կե-  
սարացիին՝ խլեց անոր ձեռքէն Պատրիարքու-  
թիւնը, բայց ժողովուրդը և տարիէն վար ա-  
ռաւ զինքը եւ գարձեալ Գրիգորը դրաւ, որ  
երկրորդ անդամ 10 տարի նստաւ: Սակայն  
կարդ մանձինք նորէն Յովհաննէս Գ. ը նստե-  
ցուցին երրորդ անդամ և 2 տարիէն վերատին  
ձգեցին զայն և Գրիգոր Բ. ը երրորդ անդամ  
նստեցուցին, որ 3 տարիէն հրաժարեցաւ:

Հ. Գրիգոր Բ. կեսարացիի ո՞վ յաջորդեց:

Պ. Զաքարիա Ա. 5 տարի նստաւ, ասոր ծրովն  
էր որ Նիկոլ չիք եպիսկոպոսը լեհաստանի Հա-  
յերը՝ 40,000 տուն, Պապին փարախը մտցուց .  
Զաքարիա աշխատեցաւ արգիլելու և իր նա-

խորդը՝ Գրիգոր Բ. ը ու իր Խաչատուր վարդապետ անուն աշակերտը Լեհաստան զրկեց, բայց ամեն ջանք և աշխատութիւն անօգուտ եղան:

Հ. Զաքարիայի ոյք յաջորդեցին:

Պ. Դաւիթ Ա. Արեւելցի, որ էջմիածնէն նուիրակ եկած էր, բայց 2 տարիէն ձգեցին, եւ յաջորդեց Երեւանցի կիրակոս վարդապետ, որ 15 ամիս Պատրիարքութենէ ետքը՝ ժանտամահէ մեռու, և տեղն անցաւ Սերաստացի Խաչատուր, որ 18 ամիս Պատրիարքութիւն ըրաւ և ասոր ալ յաջորդեց Զաքարիա Երկրորդ անդամ և ետքը Դաւիթ Արեւելցի վերստին, որուն օրովը ձիւղութք բաւական անձինք որացին և Ազգին մէջ խոռովութիւն ինկաւ: Դաւիթի յաջորդեց Թումաս անուն վարդապետ մը՝ որ փախաւ և Դաւիթ Երրորդ անդամ 5 տարի Պատրիարքութիւն ըրաւ:

Հ. Դաւիթի ոյք յաջորդեցին:

Պ. 44 ամիս աշխարհական տեղապահներ դրուեցան, ու ետքը նորէն չորրորդ անդամ Դաւիթը նստեցուցին, բայց 3 ամիսէն վար առին և Այնթապցի Եղիազար եպիսկոպոսը դրին, որ եղաւ նաեւ Պատրիարք Ա. Երուսաղէմի եւ ետքը՝ էջմիածնայ կաթողիկոս:

Հ. Եղիազարի ոյք յաջորդեցին:

Պ. Յովհաննէս Դ. Մաւլնեցի, որ 4 տարիէն Այնթապցի Եղիազարի կուսակիցներուն ձեռօք վար առնուեցաւ, բայց աշխարհական Երեւելիներ սկսան տեղապահութիւն ընել, որք

կ'ընտրուէին վեց եկեղեցեաց՝ Սամաթիոյ Ս. Գէորգ (ուր էր Պատրիարքարանը) Գումգափուի Ս. Աստուածածին, Հանկայի Ս. Սարգիս, Ալածա-Մեսածիտի Ս. Նիկողոս, Պալատու Ս. Հրեշտակապետ եւ Ղալաթիոյ Ամենափրկչի եկեղեցիներուն կողմէ:

Հ. Աշխարհական Տեղապահը որչափ ատեն կառավարեցին:

Պ. Երկու տարի, և Պապա կը կոչուէին:

Հ. Ասոնց ոյք յաջորդեցին:

Պ. Թովմաս Բ. որ Հռովմ վախած էր, մեծամեծաց ազգեցութեանց չնորհիւ Պատրիարք եղաւ, բայց 18 ամիսէն ժողովուրդը վար առաւ և Եափացի Մարտիրոս վարդապետը Պատրիարք դրաւ. սա ալ 17 ամիսէն վար առնուեցաւ, և յաջորդեց Տիվրիկցի Ղաղար վարդապետը. աս ալ 28 ամիսէն ինկաւ, և էջմիածնայ միաբան ունուիրակ Յովհաննէս վարդապետը Յովհաննէս Ե. անուամբ անցաւ տեղը, բայց սա ալ 13 ամիսէն ինկաւ իր կեղեցումներուն պատճառաւ և տեղը անցաւ Երուսաղէմայ նուիրակ Ոռոտութոցի Սարգիս վարդապետը:

Հ. Սարգսի ոյք յաջորդեցին:

Պ. Յովհաննէս Ե. Զը ամիսէն վերստին Պատրիարք եղաւ, բայց իրեն վրայօք կեցած գանգատաներուն պատճառաւ վար առնուեցաւ եւ էջմիածնայ Յակոբ կաթողիկոսը՝ որ Պոլիս կը գտնուէր՝ դարձեալ Ոռոտութոցի Սարգիսը Պատրիարք դրաւ, որ Երկրորդ անդամ ըլլալով, 3 տարի Պատրիարքութիւն ըրաւ:

Այս միջոցիս է որ Ռական վարդապետը Մանչէսթը տպարան բացաւ և Հայերէն դիրք ու Աստուածաշունչ տպեց :

Հ. Սարգսի ո՞յք յաջորդեցին :

Պ. Էջմիածնայ միաբան Մզրեցի Ստեփաննոս, ասոր ալ Յովհաննէս Զ. Սամաթիացի Թօվալ մականուանեալ, որ 1 տարիէն վար առնուելով Անդրէաս անուն քահանան դրուեցաւ 1 տարի, և յաջորդեց կեսարացի Կրոնյ Կարապետ վարդապետը՝ որ 3 տարիէն ինկաւ, և յաջորդեց արքունի բանակին Հացագործ Սարգիս անուն մէկը երեցութեան աստիճանաւ, և 1 տարիէն երկրորդ անգամ 17 ամիս Պատրիարքութիւն ըրաւ կեսարացի կարապետ :

Հ. Կարապետի ո՞յք յաջորդեցին :

Պ. Թորոս Ա. Երէց 40 օր, կարապետ կեսարացի երրորդ անգամ 2 տարի, Էջմիածնայ միաբան և նուրբակ Եփրեմ վարդապետ 20 ամիս, կարապետ կեսարացի չորրորդ անգամ 1 տարի, Խաչատուր Լճեցի 7 ամիս, և կարապետ կեսարացի Հինգերորդ անգամ որուն օրովք սաստիկ խուզվութիւն ինկաւ եւ ժողովուրդը 5 ամիսէն զինքը աթոռէն ձգեց ու աքսորել տուաւ և յաջորդեցին երկու աշխարհական տեղապահներ՝ Սաքա օղու և Շահին, որ 2 տարի խաղաղութեամբ կառավարեցին, և որոնց յաջորդեց Մատթէոս Սարի, որ 2 տարիէն կիլիկիոյ կաթողիկոսութիւնը յափշտակեց :

Հ. Մատթէոսի ո՞յք յաջորդեցին :

Պ. Եփրեմ Ղափանցի 3 ուկէս տարի, ասոր օ-

րով ձիգուիթ և Լատին կրօնաւորներ Պոլիս, Անսատօլու, Հայաստան, ու Պարսկաստան տարածուեր էին ու մեծ դեր կը խաղային, բայց չէին յաջողեր : Եփրեմի յաջորդեց Մելքիսեդեկ Պուտինի, 15 ամիս, որուն օրովք Սեբաստացի Միսիթար արքա հիմնեց Վենետիկոյ վանքըն ու միաբանութիւնը . Քիւրտիստանցի Միսիթար վարդապետը աքսորել տալով՝ զՄելքիսեդեկի՝ ինք նստաւ, բայց 14 ամիսէն աքսորէ դառնալով վերստին նստաւ և 9ը ամիսէն Եփրեմ Ա. Երրորդ անգամ յաջորդեց և աթոռը Աղրիսնուալովիս փոխադրեց Պոլիս փոխանորդ մը գնելով :

Հ. Եփրեմի օրով Բնէ պատահեցաւ :

Պ. Ասոր օրովք Պոլիս խիստ շատ բաղմացեր էին Լատին կրօնաւորներ, որ գրեթէ ամեն տեղ ու մինչեւ անգամ Եկեղեցիները կը մըտնէին ու կեղծ բարեպաշտութեամբ պապականութիւն կը քարոզէին և գրգռութիւն ու խոռվութիւն կը ձգէին : Ասոնցմէ ոմանք հայ քահանացի զգեստով Աղրիսնուալովիս գացին Պատրիարքը որսալու, սակայն Եփրեմ բնաւ Եկեղեցի չմոցուց ու կրօնքի խօսք չբացաւ . ասոնք ալ երկպառակութիւն սերմաննելով՝ աթոռէն ձգել տուին :

Հ. Եփրեմին ո՞վ յաջորդեց :

Պ. Աւետիք Պատրիարք, որ 2 անգամ նստաւ, առաջին՝ 1701ին՝ 20 ամիս, Երկրորդին՝ 1704ին՝ տարի մը :

Աւետիք Լատինականութեան դէմ սաստիկ

մաքառեցաւ և այս պատճառաւ Գաղղիոյ գես-  
պանը սաստիկ թշնամանելով՝ ձգել տուաւ  
Պատրիարքութենէ, եւ երբ աքսոր կերթար  
թենետոս կղզին, ճանրան, Լատինաց մեքե-  
նայութեամբը Փրանսական նաւ մը դրուեցաւ  
ու ֆրանսա տարուեցաւ, ուր 5 տարի բանտ  
մնալէ ետքը՝ մեռաւ 1711 յուլիս 21ին:

Հ. Աւետիքի ո՞յք յաջորդեցին:

Պ. Աւետիքի առաջին անկումէն ետքը յա-  
ջորդեցին կայծակ Գալուստ վարդապետը՝ 10  
ամիս, որուն յաջորդեց կ. Պոլսեցի Ներսէս  
վարդապետ՝ 4 տարի. իսկ Աւետիքի երկրորդ  
անկումէն ետքը ժողովուրդը Պատրիարք Դրաւ  
անոր փոխանորդն Մարտիրոս վարդապետը,  
բայց Գաղղիոյ գեսպանին ազգեցութեամբը 4  
ամիսէն ինկաւ և հետզհետէ յաջորդեցին Մի-  
քայէլ երեց 8 ամիս, և Ապուչելիցի Սահակ  
վարդապետ որուն օրովը կ. Պոլիս եկաւ Աւե-  
տիքի փոխանորդը՝ Զմիւռնացի Յովհաննէս  
վարդապետը :

Հ. Սահակին ո՞յք յաջորդեցին:

Պ. Յիշեալ Զմիւռնացի Յովհաննէս է. որ 1  
տարիէն ինկաւ նոյնակէս Գաղղիոյ գեսպանին  
ազգեցութեամբը և երկրորդ անդամ յաջոր-  
դեց Սահակ՝ 5 տարի և երեք ամիս. իսկ Սա-  
հակին յաջորդեց Յովհաննէս Ը. Կոլոտ, որ 25  
տարի Պատրիարքութիւն ըրաւ՝ զթղթը իմաս-  
լաւ խնամելով:

Հ. Յովհաննէս Կոլոտի օրով ի՞նչ պատահեցաւ:  
Պ. Երուսաղէմայ Դրիգոր Պատրիարքը Պոլիս

եկաւ վանքին պարտուցը համար, և 8 տարի  
վիզը շղթայ կրելով ու հանգանակութեան  
պուտելով վճարեց պարտքը և կոչուեցաւ շղթա-  
յակիր, և շինեց Սկիւտարի մէջ դպրոց մը՝ ուր-  
կէ եւան շատ աշակերտներ:

Յովհաննէս Կոլոտ և թէ Դրիգոր շղթայակիր  
ամէն կերպ աշխատութեամբք ժողովուրդը  
կ'զգուշացնէին Լատինաց դարաններէն ու մե-  
քենայութիւններէն:

#### Գ. ՇՐՋԱՆ ՀՊԱՏԱԿՈՒԹԵԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄ ԸՆԴ ՄԷԶ ԲՐՔԱՑ ԵՒ ՌՈՒՍԱՑ

Եւ բաժանեանն Հայաստանի 1746—1888

Հ. Հայաստան Պարսից և Օսմանցւոց մէջ բաժ-  
նուելէն ետքը ի՞նչ փոփոխութիւն կրեց :

Պ. 1746 է մինչև 1826 յիշատակութեան ար-  
ժանի փոփոխութիւն մը չկրեց : 1826ին Պար-  
սից և Ռուսաց մէջ ծագեցաւ պատերազմ մը՝  
որ գագրեցաւ 1828ին, տիրելով Ռուսաք Երասխ  
և կուր գետերուն մէջ տեղի երկիրներուն :

1828 ին պատերազմ ծագեցաւ Ռուսաց եւ  
Թուրքաց մէջ, և Օսմանեան Հայաստանի մէկ  
փոքր մասն ալ Ռուսաց անցաւ, եւ այսպէս  
Հայաստան բաժնուեցաւ Օսմանցւոց, Պարսից  
և Ռուսաց մէջ :

ՀԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

Հ. Կոլոտի օրով ի՞նչ պատահեցաւ :

Պ. Էջմիածնայ Աստուածատուր կաթողիկոսին

յաջորդը՝ Դաղստիոյ առաջնորդ Ունեցի կարապետ եպիսկոպոս Պոլիս եկաւ իբր 1725ին և Մայր Եկեղեցոյ մէջ կաթողիկոս օծուեցաւ, ըստ որում նոյն ատենը Էջմիածին Օսմանեան իշխանութեան ներքեւ էր:

Կոլոտի օրով Հայ-Հռովմէականք նորէն ըսկան Գաղղիոյ գեսապանին և Լատինաց յորդորելովը առանձին իշխանութիւն ունենալու փորձ փորձել, բայց չյաջողեցան :

Հ. Յովհաննէս Կոլոտի ովլ յաջորդեց :

Պ. Յակոբ Նալեան խոհեմ ու ազգասէր ու ըստ բաւականին ուսեալ եպիսկոպոսը, որոյ 8 տարի և երկու ամիս Պատրիարքութենէ ետքը՝ Սիլիստրեցի Պրոխորոն անուն փառասէր վարդապետ մը Պոլիս եկաւ և խարէութեամբ ու Լատինաց օգնութեամբը Պատրիարք եղաւ, բայց 7 օրէն ինկաւ : Յակոբ Նալեան Երուսաղէմայ և Ս. Կարապետի վանահայր Մինաս վարդապետ ալ կ. Պոլսոյ Պատրիարք ընտրուեցան, բայց Մինաս 2 տարիէն կաթողիկոս եղաւ և Ղափանցի Գրիգոր Պատրիարք գրուեցաւ, սակայն 1 տարիէն հրաժարեցաւ :

Հ. Գրիգորի ովլ յաջորդեց :

Պ. Նալեան Յակոբ Պատրիարք վերստին եկաւ Ազգին խնդրանօքը, եւ 12 տարի եւս Ազգը խաղաղութեամբ կառավարելէ ետքը՝ հրաժարեցաւ՝ իրեն յաջորդ գնելով կ. Պոլսոցի Գրիգոր վարդապետը՝ որ 6 տարի և 6 ամիս վեցու խաղաղութեամբ կառավարելէ ու ճիզուիթաց մեքենայութիւնները իր օրովը խոր-

տակելէ ետքը՝ իր կամքն հրաժարեցաւ :

Յակոբ Նալեանի օրով սպաննուեցան համբաւաւոր Եաղուապ ամիրան և Ղազար ամիրան :

Յակոբ Նալեան գրած է Զին հոգեւոր, Վեհաւանոյ, Մեկնութիւն Նարեկի և ուրիշ գործեր :

Հ. Գրիգորի ովլ յաջորդեցին :

Պ. Կաղղուանցի Զաքարիա 9 տարի, Արմուանցի Ցոլիննէս վարդապետ 11 ամիս, և գարձեալ Զաքարիա, որ երկրորդ անդամ 17 տարի Պատրիարքութիւն ըրաւ :

Զաքարիայի օրով Փայլեցաւ Տատեան Առաքել ամիրայ, որ նախ Աղատլը վառօդարանը շինեց և արքունի վառօդապետ անուանեցաւ, որ տեւեց որդւոց յորդի : Տատեան գերգաստանը վայելած է մասնաւոր արտօնութիւններ և Ազգին մեծամեծ բարիք ըրած է :

Հ. Զաքարիայի ովլ յաջորդեցին :

Պ. Էջմիածնայ նուիրակ Դանիէլ եպիսկոպոս, որ 11 ամսէն կաթողիկոս եղաւ և իրեն յաջորդեց Յովհաննէս եպիսկոպոս որ նստաւ 1 տարի, Խամսեցի Գրիգոր եպիսկոպոս՝ 11 ամիս, գարձեալ Յովհաննէս եպիսկոպոս՝ 10 տարի և Էջմիածնայ նուիրակ Աբրահամ եպիսկոպոս 26 ամիս :

Հ. Աբրահամին ովլ յաջորդեց :

Պ. Ագրիանուպուսեցի Պոլսո եպիսկոպոս, որ ջանաց միացնել Հռովմէական Հայերը և գործը կարգի մտած էր, բայց Ճիշտիթները ծանր արգելք հանեցին, որով միութիւնը չյաջողելք զատ՝ մեծ խոռվութիւն և գրգռութիւն ծա-

գեցաւ Ազգին մէջ . բանտարկուողներ ու աքսոր գացողներ եղան և Սաբայեան Գրիգոր ամիրա , կարապետ կեսարացի և Տէլի պաղտասար ալ դիմատուեցան :

Պօղոս Պատրիարք Ցը տարիէն հրաժարեցաւ :  
Հ. Ուրիշ Բնչ պատահեցաւ :

Պ. Հալէթ Էֆէնտի անուն ազգեցութեան տէր մէկը որ սաստիկ հակառակ էր Տիւլեանց՝ (վերատեսուչ արքունի փողերանոցին) բանտարկել տուաւ , որոնցմէ ոմանք դիմատուեցան 1817 Հոկտ. 1ին և ոմանք ալ աքսորուեցան :

Հ. Ո՞վ յաջորդեց Պօղոս Պատրիարքի :

Պ. Կ. Պոլսեցի կարապետ եպիսկոպոս , որուն օրովք Հռովմէական ազգայինք Լատինաց ու Ճիզուիթաց թելադրութեամբը բաժնուիլ ու դեցին Հայոց Պատրիարքարանի իշխանութենէն եւ այս նպատակաւ աղերսագիր տուին , որուն մէջ Հայոց գէմ զրպարտութիւն կար : Խնդիրը քննուեցաւ և հաստատուելով Հայոց անմեղութիւնը՝ 1828 ին աքսորուեցան այն Հռովմէականները՝ որ չէին ուզեր ճանչնալ Հայոց Պատրիարքին իշխանութիւնը :

Հ. Ի՞նչպէս բաժնուեցան Հռովմէական ազգայինք :

Պ. Լատինաց եւ Ճիզուիթաց թելադրութեամբը 100 տարիէ ի վեր ծագած կրօնական խնդիրը դադրեցաւ 1829 ին Հայ Հռովմէական ազգայնոց առանձին Պատրիարքութիւն տըրուելով :

Հ. Հայոց մէջ ո՞վ փայլեցաւ այս միջոցիս :

Պ. Պէղճեան Յարուութիւն ամիրայ , որ Տիւլեանց գերդաստանին պատահած գժբաղդութենէն ետքը վերատեսուչ եղաւ արքունի փողերանոցին և խիստ սիրելի հանդիսացաւ Սուլթան Մահմուտ Բ. մեծազօր ինքնակալին :

Պէղճեան իւր հարստութիւնն ու ազգեցութիւնը կը գործածէր Ազգին օդտին եւ շինեց շատ եկեղեցիներ , վարժարաններ և Ս. Փրկչեան Ազգ . Հիւանդանոցը Եէտի-Գուլէ , եւ մեռաւ 1834 թունվ . 3 ին և Սուլթան Մահմուտի հրամանաւ մարմինը Մայր եկեղեցին թաղուեցաւ :

Հ. Ո՞վ յաջորդեց Կարապետ Պատրիարքին :

Պ. Աղաւնի Ստեփան եպիսկոպոս , որուն օրովք բացուեցաւ Սկիւտարի Ճեմարանը . ասոր օրովք եկան Պոլիս Ամերիկացի միսիօնարք , որ Հայոց հետ սիրով կը վարուէին՝ անշուշտ որսալու համար : Աղաւնի Ստեփան 8 տարի Պատրիարքութիւն ըրաւ :

Հ. Ո՞վ յաջորդեց Աղաւնոյ :

Պ. Պալատցի Յակոբոս եպիսկոպոսը , որ Աղգը նորազանդից հետ յարաբերութենէ զգուշացնելու համար մի քանի անձինք աքսորել տուաւ , ժողովրդեան և ամիրայից վէճին առթիւ ժողովրդեան կողմը բռնեց , Ճեմարանին նիւթականը ապահովելու համար դուրս գացողներէն 5 զրուշի տուրք մը հաստատեց , 24ից ժողով մը դրաւ , եւ առաջին անգամ Դատաստանական խորհուրդ հաստատեց :

Հ. Վերջացաւ ամիրայից և ժողովրդեան վէճը :

Պ. Ո՞չ , ամիրայք հակառակեցան . թաղային

վարժարանաց ծախքը միայն ժողովուրդին վրայ մնաց , ամիրայք ձեմարանը գոցելու ջանացին՝ բնաւ չօգնելով և Յակոբոս Պատրիարք ալ յուսահատելով՝ երկու տարիէն հրաժարեցաւ :

Հ. Ո՞վ յաջորդեց Յակոբոս Պատրիարքի :

Պ. Ամիրայից ընտրութեամբը յաջորդեց նախին Պատրիարք Աղաւնի Ստեփան Եպիսկոպոս , բայց ժողովրդեան յուզմունքը չհանդարտեցաւ : Սէրվէրեան ամիրայ ծախքին չդիմանալով ձեմարանը գոցուեցաւ . ամիրայից դէմ ժողովրդեան ովքը սաստկացաւ . մի քանի անձինք աքսոր գային և Աղաւնի Ստեփան և տարիէն պարտաւորեցաւ հրաժարիլ :

Հ. Ասոր տեղ ով եղաւ Պատրիարք :

Պ. 1841 ին ամիրայից կամօքը Աստուածատուր Եպիսկոպոսը Պատրիարք դրուեցաւ . ամիրայք շարունակեցին իրենց յոխորոտանքը . ժողովուրդը չորրորդ անդամ ըլլալով Բ. Դրան դիմեց . ժողովրդեան փափագը կատարուեցաւ , ամիրայք քաշուեցան ազգային գործերէ , որ յանձնուեցան ժողովուրդէն ընտրեալ 27 անձէ ժողովի մը , բայց խոչընդուներէն յուսահատած՝ քաշուեցան և դարձեալ ամիրայից յանձնուեցան :

Հ. Ի՞նչ ըրբն ամիրայք :

Պ. Ամիրայք չկրցին առաջուան պէս կառավարել , հարկ եղաւ որ ժողովրդեան հետ հաշտուին . ուստի ձգեցին Պատրիարքը և 1844 ին Պատրիարքը ընտրուեցաւ Զմիւռնիոյ առաջնորդ Մատթէոս Եպիսկոպոսը , որ իր ժողովրդակա-

նութեամբն ու քարոզութիւններովը ժողովուրդը հաշտեցուց և 16ը ամիրաներէ ու 14ը ժողովուրդէն բաղկացեալ 30 հոգիէ ժողով մը կազմեց Ազգին գործերը տեսնելու համար :

Հ. Ասկէ ի՞նչ օգուտ եղաւ :

Պ. Թաղային վարժարանները բարտքեցան և յառաջ գացին մանաւանդ Սամաթիայի , Խասդիւղի եւ ուրիշ տեղերու վարժարանները , ուրոնցմէ շատ ուսեւալ աշակերտներ ելան :

Կաթողիկոսի յիշատակութիւնը նորէն սկսաւ այս միջոցիս :

Հ. Ի՞նչ պատահեցան :

Պ. Բ. Դունէն Միւսքարուրեան նշան եկաւ Պատրիարքին . Բողոքականք սկսան որսեր ընել Մատթէոս բանագրեց Բողոքականները . հաստատուեցաւ 1846 Ցունուար 1 ին ի Պոլիս Հայոստան անուն առաջին լրագիրը . ամիրայք թէպէտ թշնամացան Մատթէոսի , բայց առահի ժողովրդեան չհրաժարեցուցին , միայն Պատրիարքին իշխանութիւնը չափաւորող հրովարտակ մը բերել տուին 1847 ին , որոյ համեմատ 20 ական անդամներէ 2 ժողով գրուեցաւ մէկը Հոգեւոր և միւսը Գերազոյն ժողով անուամբ :

Հ. Մատթէոս Երբ հրաժարեցաւ :

Պ. Մատթէոս 8 տարի Պատրիարքութիւնը ներէ ետքը՝ ամիրայից հակառակութեան պատճառաւ պարտաւորեցաւ հրաժարիլ 1848 ին և իրեն յաջորդեց ժողովրդեան ուղելովը նախկին Պատրիարք Յակոբոս Եպիսկոպոսը :

Հ. ի՞նչ ըրաւ Յակոբոս :

Պ. իր ջանքովն ու խնամքներովը վարժարանկը նորէն սկսան յառաջադիմել, Սկիւտարի ձեմարանը վերստին բացուեցաւ իր քաջալերութեամբը և Ետի-Գուլէի Ս. Փրկչեան Ազգ. Հեւանդանոցին մեջ բացուեցաւ Ազգին որբ, անտէր և աղքատիկ տղոց համար վարժարան մը, քիչ ատենէն ձեմարանը գոցուեցաւ, անոր կահ կարասին հոն փոխադրուեցաւ և Ս. Փրկչեան վարժարանի ընթացը բարձրացաւ և սկսաւ ծաղկիլ և ուսեւալ աշակերտներ հասցնել: Փարիզի մէջ բացուեցաւ Արեւելեան անունով վարժարան մը:

Հ. Ուրիշ ի՞նչ եղաւ :

Պ. 1857 Փետր. 13 ին ի Տէր հանդեաւ երջանկայիշտառակ Աշտարակեցի Ներսէս Ե. կաթողիկոսը և 1858 Յունի 18 ին նախկին Պատրիարք Մատթէոս եպիսկոպոս Կաթողիկոս ընտրուեցաւ: Յակոբոս Պատրիարք իր ծերութեանը պատճառաւ 1858 Հոկտ. 7 ին հրաժարեցաւ և ընտրուեցաւ Պրուսայի առաջնորդ կ. Պոլեցի Գէորգ եպիսկոպոս :

Հ. ի՞նչ եղաւ Գէորգի օրով :

Պ. Ասոր Պատրիարքութեան վերջին տարին խմբագրուեցաւ Սահմանադրութիւնը: Գէորգ 1½ տարի Պատրիարքութիւն ընելէ ետքը հրաժարեցաւ 1860 ին :

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

1860 Մայիս 24

Հ. Ե՞րբ հաստատուեցաւ Ազգային Սահմանադրութիւնը :

Պ. 1860 Մայիս 24 ին հաստատուեցաւ Ազգ. Սահմանադրութիւնը, որոյ հաստատութիւնը վախճան տուաւ Պատրիարքաց և ամիրայից կամահամ իշխանութեան և Ազգին տուաւ իրաւունք իր կողմէն ընտրեալ երեսփոխանական ժողով եւ վարչութիւն ունենալու:

Սահմանադրութիւնը պարտուց և իրաւանց վրայ հաստատեալ օրէնք է:

Հ. Ո՞վ եղաւ Պատրիարք :

Պ. 1860 Ապրիլին Սարգիս եպիսկոպոս, որուն օրովը հաստատուեցաւ Սահմանադրութիւնը: Սա գէմ կեցաւ Հայոց գերեզմանատան մէջ թաղելու Միրիբելամ անուն Բողբական Հայն, որ իր կենդանութեանը հայույած ու նախատած էր Հայաստանեայց Ս. Եկեղեցին և այս պատճառաւ Սարգիս Պատրիարք գրաւեց ժողովրդեան սէրն ու համակրութիւնը:

Հ. Ի՞նչ գէպքեր պատահեցան :

Պ. Ասով օրով հաստատուեցաւ ի Բերայ Արեւելեան թատրոնը, հաստատուեցան թաղային վարժարանաց օգնելու համար ընկերութիւններ եւ Ընձնուէր ընկերութիւն՝ որ նպատակ ունի պանդուխտ գաւառացի ազգայնոց ձրի գրել կարդալ սորվեցնելու, ինչպէս որ մինչեւ հիմա կը շարունակուի Քրիստոսութը Ղազարոսեանի կողմէ անձնուիրաբար ամեն կիրակի օր :

Այս ամենը արդիսնք են Սահմանադրութեան:

Հ. Սարգիս ի՞նչու ի՞նկաւ :

Պ. Սարգիսի օրով ծագեցաւ Երուսաղէմայ Պատրիարքը Ներսէն կամ գուրսէն ընտրելու

ինդիր . վէճը սաստկացաւ , երկուքի բաժնուեցաւ Ազգը . մէկ կողմը կը կոչուէր լուսաւորեալ միւս կողմը Խաւարեալ : Սարգիս Պատրիարք այս վերջնոց կողմը բռնեց , Պետական հրամանաւ Սահմանադրութիւնը դադրեցաւ , Սարգիս ինկաւ 1861 Հոկտ . 20 ին , բայց Սահմանադրութիւնը թ . Գանէն վերաքննեալ յանձնուեցաւ Ազգին 1863 ին :

Հ . Ո՞Վ յաջորդեց :

Պ . Արմաշու վանահայր և Նիկոմիդիոյ առաջնորդ Մազաքեան Ստեփան Եպիսկոպոս Տեղապահ գրուեցաւ , որ իրը 2 տարի պաշտօն վարեց :

Հ . Ո՞Վ եղաւ Ա . Սահմանադրական Պատրիարքը :

Պ . 1863 Հոկտ . 15 ին առաջին անգամ ըստ Սահմանադրութեան՝ Պատրիարքը ընտրուեցաւ Զմիւռնիոյ առաջնորդ Թագթագեան Պօղոս Եպիսկոպոս , որ ուխտեց Սահմանադրութեան անթերի գործադրութեան : Ասոր օրովլ ծագեցան Սոյ և Աղմամարայ կաթողիկոսութեանց խնդիրը , հաստատուեցան Ա . Նուպարեան և Կ . Շահնազարեան վարժարանները ու Խասդիւղի Որբանոցը : Մեռաւ 1865ին Մատութէոս կաթողիկոսը և 1866 Սեպտ . 17 ին . նախորդ Գէորգ Պատրիարքը կաթողիկոս ընտրուեցաւ Ազգ . Երեսփոխանական ժողովէն :

Հ . ինչո՞ւ ինկաւ Պօղոս :

Պ . 1866 Մարտ 23 ին ներքին վէճ ծագելով Սահմանադրութեան վրայ՝ դադրեցաւ պետա-

կան հրամանով . այս օրէն ժողովուրդը Պատրիարքէն պազեցաւ և ատելութիւնը հետզհետէ սաստկանալով՝ եկեղեցեաց մէջ ժողովուրդն սկսաւ չյիշուի աղաղակել , որուն վրայ ինկաւ Պօղոս Պատրիարքը 1869 ին :

Հ . Ո՞Վ յաջորդեց :

Պ . 1869 Յուլիս 31 ին Պատրիարքը ընտրուեցաւ իդնատիոս Եպիսկոպոս , բայց սա առանց աթոռը նստելու՝ մեռաւ 1869 Օգոստ . 24 ին և 1869 Սեպտ . 4 ին Պատրիարքը ընտրուեցաւ Մկրտիչ Եպիսկոպոս Խրիմեան և Սահմանադրութիւնը գործադրութեան դրուեցաւ :

Հ . ի՞նչ ըրաւ Խրիմեան :

Պ . Հանգանակութեամբ վճարեց Կեդր . սընտուկի պարտքին կէսը , մզում տուաւ վարժարանաց , քաջալերեց կրթական ընկերութիւնները , ծագեցան իր օրով Ա . Յակոբայ տաճաւրին մէջ Լատինաց պատարագելու խնդիրը եւ ուրիշ կարեւոր խնդիրներ , որ լուծուեցան յօդուտ Ազգին . բայց իր եւ Վարչութեան մէջ ծագած անհամաձայնութեան մը պատճառաւ ի ցաւ Ազգին 1873 Օգոստ . 3ին հրաժարեցաւ :

Հ . Ո՞Վ յաջորդեց Խրիմեանի :

Պ . 1874 Ապրիլ 14 ին Պատրիարքը ընտրուեցաւ Ներսէս Եպիսկոպոս Վարժապետեան , որ Խրիմեանի հրաժարման պատճառաւ ծագած Երկպատակութիւնը դադրեցուց , Կեդր . սընտուկի 3,000 ոսկի պարտքը տուաւ Աբրահամ Փաշայի և Պալեան Սարգիս պէյի դիմելով , վարժարանաց յառաջադիմութեանը հոգ տա-

բաւ և Գաղատիոյ սովելոց համար իր նախագահութեամբը կազմեալ Յանձնաժողովը 6,000 ոսկեոյ չափ դրամ հաւաքելով՝ օդնեց :

Հ. Ուրիշ Բ'նչ ըրաւ Ներսէս :

Պ. Հաստատեց Ս. Փիկչեան Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութիւն մը անդամակցութեամբ Միքայէլ Յակորեան, Յովհաննէս Լսաեան, Սերովէ Կիւլպէնկեան, Տիգրան Կիւմիւշիէրտան ազգասեր և բարեսիրտ անձանց<sup>(1)</sup>, որոնց օրովը բարեկարգուեցաւ այդ հաստատութիւնը և պարծանք եղաւ Ազգին :

Հ. Ի՞նչ դէպք պատահեցաւ :

Պ. 1879 ին մեծ սով մը . Ներսէս իր յորդորներովը և իր նախագահութեան ներքեւ կաղմեց Սովելոց Խնամով Յանձնաժողով մը անդամակցութեամբ Արիկ Էֆէնտի Ունճեանի, Աքէլ Կիւլպէնկեանի, Գարրիէլ Էֆէնտի Նորատունկեանի, Գառնիկ Յովակիմեանի, Գրիգոր Նիկողիմոսեանի, Պօլոս Էֆէնտի Շաշեանի, Սերովէ Էֆէնտի Կիւլպէնկեանի և Սահակ Ղազարուեանի : Այս Յանձնաժողովը իր վստահելի դիրքովը 30,000 ոսկի հանգանակելով՝ սովելաները խնամեց և աւելցած գումարով խան մը գնեց, որ տարեկան 700 ոսկիի չափ եկամուտ կը բերէ :

Հ. Ուրիշ Բ'նչ ըրաւ Ներսէս :

Պ. Իր դրաւիչ յորդորներովը համեցուց Մի-

<sup>(1)</sup> Հրաժարեցաւ Յովհաննէս Լսայեան, որուն յաջորդեց Յովակիմ Ֆէնէրճեան . սա ալ հրաժարելով՝ աեղն անցաւ Պօլոս Գարրիէլեան :

Քայէլ Յակորեան բարեսիրտ ազգայինը շինել Սամաթիոյ հրկիզեալ Ս. Գէորգ Եկեղեցին . յորդորեց Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը վերաշինել յիշեալ հաստատութիւնը և Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ պարտքը դիւրակեաց ազգայնոց վճարել տալով՝ խրախուսեց բանալ կեդրոնական վարժարան մը :

Այս ամենը գործադրուեցան իր մահուանէն ետքը : Իր օրովը կազմուեցան Միացեալ և ուրիշ կրթական Ընկերութիւնը :

Հ. Ի՞նչ չնորհներ եղած են :

Պ. Ներսէս կը վայելէր թէ Ազգին սէրը եւ թէ վեհ. Սուլթան Ապտ-իւլ-Համիտ բարեինամ կայսեր համակրութիւնը . Նորին վեհափառութիւն նուիրեց նմա Օսմանիյէ Ա. աստիճանի պատուանշան, 1000 ոսկի պարգեւ, ագամանդաղարդ տուփ եւ վայելուչ բնակարան մը յօրթաքէօյ :

Հ. Ներսէս ո՞րչափ ատեն Պատրիարքութիւնը ըրաւ :

Պ. 11 տարի . 1884 Ապրիլ 3 ին կաթողիկոս ընտրուեցաւ, բայց հրաժարեցաւ և 1884 Հոկտեմբերի 27 ին մեռաւ, որուն մեծահանդէս յուղարկաւորութիւն կատարուեցաւ և թաղուեցաւ Մայր Եկեղեցւոյ աջ գաւիթը և Ազգը անոր գերեզմանին վրայ կանգնեց արժանաւոր մահարձան մը :

Հ. Ներսէսի ո՞վ յաջորդեց :

Պ. 1885 Յունի. 15 ին Վեհապետեան Յարութիւն եպիսկոպոս Պատրիարք ընտրուեցաւ.

իրեն յիշատակութեան արժանի գլխաւոր գործը եղաւ յաղթանակը կարկուր անուն անձին դէմ, որ երուսաղէմայ վանքին վերաբերեալ մեծարժէք մէկ գետինը կուզէր իւրացնել :

Հ. ի՞նչ պատահեցաւ Յարութիւն Պատրիարքի օրով :

Պ. Այրեցաւ Սկիւտարի Ս. կարապետ եկեղեցին և ձեմարանը. Աբիկ էֆէնտի Ունճեան իւր անձնականէն շինեց եկեղեցին :

Մեռաւ ասոր օրով մեծանուն վաճառական, ազգասէք և բարեսէք Սերովիք էֆէնտի կիւլպէնկեան որուն մեծահանդէս յուղարկաւորութիւն կատարուեցաւ և մարմինը թաղուեցաւ Ս. Փրկչի Աղդ. Հիւանդանոցի վանքին մէջ մասնաւոր տեղ մը :

Հ. Յարութիւն Պատրիարք Երբ հրաժարեցաւ :  
Պ. Երուսաղէմայ Պատրիարք ընտրուելով՝ եւ տէրութենէն վաւերանալով՝ հրաժարեցաւ Կ. Պոլսոյ Պատրիարքութենէն 1888 Յունիսին :

Յարութիւն Վեհապետեան իւր Պատրիարքութեան օրով աշխատած է մանաւանդ երուսաղէմի համար :

Հ. Յարութիւնի ո՞վ յաջորդեց :  
Պ. Յարութիւն Պատրիարքի յաջորդեց 1888 Սեպտ. 29ին Արմաշու Վանահայր Աշրեան Տ. Խորէն Արքազան :

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒՐԻՆ Ք 1483—1888

Հ. Ո՞վ յաջորդեց Գրիգոր Մակուեցիի :  
Պ. Մաեփանոս Ե. (1443—1461) որ լեզուա-

գէտ և հմուտ մէկն էր և նշանաւոր եղաւ Եւրոպա երկար ճանապարհորդութիւնովը. ասոր յաջորդեց Մելքիսեդէկ կաթողիկոս (1593—1603) որ բանտարկուեցաւ Պարսից Շահ Աբաս թագաւորէն և տուդանք տալով ազատուեցաւ :

Հ. Ուրիշ ո՞յք կան յիշատակութեան արժանի:

Պ. Մովսէս Դ. (1629—1633) որ դպրոցներ բացաւ և ծաղկեցուց այն ժամանակի գիտութիւնները՝ որ էին Քերականութիւն, Փիլիսոփայութիւն և Տրամաբանութիւն: Փիլիպպոս Կաթողիկոս (1633—1635) Կ. Պոլիս Եկաւ Պատրիարքութեան պատճառաւ ծագած խոռովութիւնը խաղաղեցնելու: Յակոբ Դ. Կաթողիկոս (1663—1680). Նահապետ (1691—1707) և Աստուածատուր (1715—1726) որ թէ ինք եւ թէ նախորդը գեղեցիկ շինութեամբը զարդարեցին Էջմիածինը :

Հ. Ուրիշ ո՞վ կայ յիշատակութեան արժանի:

Պ. Ներսէս Ե. Աշտարակեցի (1843—1858) որ նշանաւոր է իր ուսումնակիրութեամբը, մեծագործութեամբն եւ ազգօդուտ աշխատութիւններովը :

Հ. Ներսէսի ո՞յք յաջորդեցին :

Պ. Մատթէոս Կաթողիկոս (1858—1865). Գէորգ Դ. (1866—1882) որ շինեց Էջմիածնայ մէջ Գէորգեան ճեմարանը եւ հրատարակեց ձայնագրեալ Շարական և ձայնագրեալ Պատրագի խորհուրդ: Խակ Գէորգի յաջորդեց Մակար Ա. 1885 ին և է Կաթողիկոս :

ԵՐՈՒՍԱՂԵՄՍՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ

Հ. Ուրիշ Բնչ Պատրիարքութիւն կայ :

Պ. Ս. Երուսաղէմայ Պատրիարքութիւնը կայ ,  
որ հաստատուած է 637 ին Արքահամ եպիսկո-  
պոսի օրով :

Երուսաղէմ է պատմական վանք , որուն մի-  
արանութիւնը կը պահպանէ Հայոց ձեռքը  
գտնուած Տնօրինական տեղերն ու վանքին կալ-  
ուածները :

Միաբանութեան գլուխն է Ս. Երուսաղէմայ  
Պատրիարքը , բայց կայ կանոն մը , որուն հա-  
մեմատ կը տնօրինուին գործերը :

Երուսաղէմ ունի ժառանգաւորաց վարժա-  
րան և Տպարան :

ԿՐԵԿՈՅ ԵՒ ԱՂԹԱՎԱՅՑ ԿԱՅՈՂԻԿՈՍՔ

Հ. Ուրիշ ո՞ր կաթողիկոսութիւնները կան :

Պ. Կիլիկիոյ և Աղթամարայ կաթողիկոսու-  
թիւնները կան : Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը  
հաստատուած է Ռուբինեանց իշխանութեան  
ժամանակ , իսկ Աղթամարայ կաթողիկոսու-  
թիւնը հաստատուեցաւ 1113 ին Աղթամարայ  
Դաւիթ եպիսկոպոսին ժամանակ : Դաւիթ չը  
ճանչցաւ Ծնորհալիին եղրօր՝ Գրիգոր Պահլա-  
ւունիի կաթողիկոսութիւնը :

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Հ. Հայոց աշխարհի կրած փոփոխութիւնները  
Բնչ բան յառաջ բերին :

Պ. Հայոց աշխարհի կրած փոփոխութիւնները

յառաջ բերին Հայաստանէ դուրս Հայոց գաղ-  
թականութիւնը :

Հ. Երբ կ'սկսի Հայոց գաղթականութիւնը :

Պ. Հայոց առաջին գաղթականութիւնը կ'սկսի  
Արշակունեաց իշխանութեան կործանելին ետքը,  
երբ Հայաստան բաժնուած էր Պարսից և Յու-  
նաց մէջ :

Պարսից բաժնին դիւրակեաց Հայերէն շատեր  
անոնց բռնութիւններէն ու կեղեքումներէն ա-  
զատ մնալու համար կը գաղթէին Յունաց մասը,  
և ի Փոքր-Ասիա :

Հ. Ի՞նչ վիճակ ունէին :

Պ. Յոյներէն դառն հալածում և նախատինք  
կը կրէին կրօնի պատճառաւ , վասն զի Յոյնք  
սաստիկ մոլեռանդ էին :

Հ. Հայք ուրիշ ո՞ր երկիրներ գաղթած են :

Պ. Պարսկաստան , Լեհաստան , Աւստրիա , Ռւն-  
կարիա , Մոլատաւիա (Ռումանիա) , Հնդկաստան ,  
Եգիպտոս , Ռուսաստան :

Հ. Ի՞նչ պատճառաւ կը գաղթէին :

Պ. Հին ժամանակները , այսինքն , Արշակուն-  
եաց , Բագրատունեաց և Ռուբինեանց իշխա-  
նութեան կործանուելին ետքը Հայք գաղթած  
են անապահովութեան պատճառաւ , բայց ու-  
րիշ անգամներ ալ վաճառականութեան հա-  
մար կամ իրենք գաղթած են և կամ այլ և այլ  
տէրութեանց կողմէ մասնաւորաբար հրաւիր-  
ուած ու գացած են անոնց երկիրներուն մէջ  
արհեստ և վաճառականութիւնը առաջ տանե-  
լու համար :

Հ. Հայոց գաղթականութիւնն ի Լեհաստան երբ սկսած է :

Պ. Բագրատունեաց իշխանութեան կործանուելն ետքը՝ Անիի հարուստ բնակիչներէն շատեր առաջ Խրիմ գային . անոնցմէ մէկ մասը Մոլտավիա անցան ու մեծ մասը Լեհաստան գաղթեցին :

Լեհաստանի մէջ Հայոց թիւը կը համնէր 40,000 տուն որ Նիկոլ չիր եպիսկոպոսին առաջնորդութեամբը կաթողիկոպութիւն ընդունելով խառնուեցան Լեհացւոց մէջ ու անհետացան : Հայք Լեհաստանի մէջ գլխաւորաբար կամենից ու Լեմպերկ կը բնակէին .

Հ. Հայոց գաղթականութիւնն յԱւստրիա , Ունկարիա և Մոլտավիա երբ սկսած է :

Պ. Նոյնպէս, Բագրատունեաց իշխանութեան կործանուելն ետքը՝ Անիէ Լեհաստան գաղթականութեան միջոցին . Աւստրիոյ տէրութեան կալցիա, Պուգովինա և Սրտեալ գաւառաց մէջ Հայոց թիւը 25000ի չափ ըլլալ կը կարծուի :

Հ. Հայոց ի Պարսկաստան գաղթականութիւնը երբ տեղի ունեցած է :

Պ. 1606ին Պարսից Շահաբաս թագաւորը Հայաստանէ բռնի տարաւ ի Պարսկաստան խիստ բազմաթիւ Հայեր և զանոնք բնակեցուց իր երկրին մէջ : Պատճառն այն էր որ Շահաբաս կուզէր եր երկիրը ծաղկեցնել, ուստի ինք և թէ իր յաջորդներէ շատերը տուին Հայոց ամեն տեսակ արտօնութիւն և աղատութիւն , բայց

1750ին երկրին մէջ ծագած խոռվութեան պատճառաւ Հայոցմէ շատեր սկսան գաղթել մանաւանդ գէպ ի Հնդկաստան :

Հ. Հայք ի՞նչ վիճակ ունէին ի Պարսկաստան :

Պ. Պարսկաստանի Հայք ատեն մը շատ ծաղկած ու հարստացած և բազմաթիւ էին, բայց իրենց այս վիճակը գառնացաւ, երբ Պարսիկը նախանձելով իրենց յառաջանալուն և հարստանալուն վրայ՝ սկսան նեղել զիրենք, կեղեքել ու չարիք հասցնել, ուստի տեղույն Հայ ժողովուրդէն շատեր սկսան գաղթել, այնպէս որ այսօր Պարսկահայոց թիւն հազիւ 300,000ի կը հասնի :

Հ. Հայք ի՞նչ վիճակ ունին այժմ :

Պ. Ուսման և յառաջադիմութեան մէջ ետեն, թէպէտ վերջին տարիներս ջանք կընեն յառաջ երթալրու . ունին առաջնորդ, զոր կ'անուանէ Ս. կաթողիկոսը, որոյ թեմերէն մէկն է Պարսկաստան :

Հ. Հայոց ի Ռուսաստան գաղթականութիւնը երբ կ'սկսի :

Պ. Ռուսական Հայաստանի մէջ արդէն գըտնուող Հայերէ զատ՝ Ռուս և Պարսից պատերազմին ատեն Պարսկաստանէն բազմաթիւ Հայեր գաղթեցին ի Ռուսաստան և 1828 ի Ռուսաց և Օսմանցւոց պատերազմին ատեն ալ նոյնպէս գաղթողներ եղան, ուստի Ռուսաստանի մէջ Հայոց թիւն կը հասնի իբր մէկուկէս միլիոնի :

Հ. Ի՞նչ վիճակ ունին Ռուսահայք :

Պ. Ուսման և գիտութեան մէջ ունին բաւական յառաջադիմութիւն և արդիւնաոր վարժարաններ, զորօրինակ Ներսէսեան վարժարանն ի Տփղիս և Գէորգեան Եւմարանն յլջմիածին, և այլն, որոնցմէ դուրս ելած են բազմաթիւ ուսեալ անձննք :

Ուսմահայք հետեւող են գլխաւորաբար գերմանական դաստիարակութեան . ունին նաև լրագիրներ՝ ինչպէս Մշակ, Արձագանք, Նորդար, և այլն :

Հ. Երկրիս ուրիշ որ մասերուն մէջ կան գաղթական Հայեր :

Պ. Երկրիս գրեթէ ամեն մասերուն մէջ կը գտնուին գաղթական Հայեր ինչպէս Ամերիկա, սակայն միփթարական է տեսնել թէ Հայք մասնաւանդ վերջին տարիներս մեծ ջանք ու փոյթ ունին իրենց կրօնքն ու ազգութիւնը պահելու ուր որ ալ գտնուին :

Հ. Թրքահայք ինչ վիճակ ունին :

Պ. Թրքահայք չնորհիւ Օսմաննեան մեծազօր տէրութեան կը վայելեն կրօնի կատարեալ ազատութիւն և ունին ներքին գործոց համար վարչութիւն, որ սահմանադրական է . Ազգն իր երեսփոխանական ժողովն միջոցաւ ինք կ'ընտրէ իր Պատրիարքը, իր ժողովները և իր դպրոցներն ինք կը կառավարէ :

Հ. Գաւառաց վիճակն ինչ է :

Պ. Գաւառաց մէջ ալ յառաջադիմութեան ոգին սկսած է . Զմիւռնիա առաջնը կը համարուի . Տրապիզոնի, Կարնոյ, Վանայ, Երզ-

կայի, Խարբերդի, Արապկերի, Եւդոկիոյ ու Սեբաստիոյ մէջ կրթութեան համար եղած ջանքերն մասնաւոր յիշատակութեան արժանի են, իսկ կիլիկիոյ գաւառաց մէջ կրթութեան գործը շատ յետադէմ վիճակ ունի :

### ԿՐԹԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՈՅ

Հ. Կրթական Բնչ Ընկերութիւններ կան :

Պ. Հայոց Միացեալ (Արարատեան, Դպրոցամէր Արեւելեան և Կիլիկեան) Ընկերութիւնք, որ հաստատուած են գաւառաց մէջ կրթութիւն տարածելու նպատակաւ և խիստ գովելի փափագով ու սրտի մոոք կ'աշխատին իրենց պաշտօնի պարտականութիւնը կատարելու համար :

Տնօրէն ժողովոյ անդամք են՝

Լեւոն պէյ Փափազեան՝ Ատենապետ, Կարապետ Փապուճճեան՝ Ատենադպիր, Գրիգոր Զոհրապ, Համբարձում Գաղազեան, Յակոբ Թաշճեան, Յովհաննէս Պօյաճեան և Ութէոս Պէրպէրեան :

Հ. Քանի վարժարան ունին :

Պ. Ունին 39 վարժարան, 136 պաշտօնեայ և 2489 աշակերտ :

ԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հ. Այս Ընկերութիւնը ինչ նպատակ ունի :

Պ. Այս Ընկերութեան նպատակն է գաւա-

ուայ մէջ Հայ-իգական սեռի կրթութեան համար դպրոցներ բանալ :

Ընդհանուր ժողովոյ Դիւանի անդամք են Տիկին Նեքտառինէ Ա. Զունդ Ա. Ատենապետ, Տիկին Մաքրուհի Յ. Նորատունկեան Բ. Ատենապետ, Օր. Մարիամ Միւհէնտիսեան Ա. Ատենապետ և Օր. Նոյեմի Ղօնչէկիւլեան Բ. Ատենապետ :

Տնօրեն ժողով

Տիկին Տիրուհի Մ. Մամիկոնեան Ա. Ատենապետ, Տիկին Մաքրուհի Գ. Մէրասեէտեան Բ. Ատենապետ, Տիկին Սաթենիկ Տօքթ. Յակոբեան Ա. Ատենապետ-պիր, Տիկին Մաննիկ Տ. Տավուտեան Գանձապետ, Տիկին Նեքտարինէ Ա. Թաշճեան Համարակալ և Տիկին Արտեմիս Ա. Աղաբէկեան :

Հ. Քանի՞ վարժարան ունի :

Պ. Այս Ընկերութիւնն ալ, որ նոյնպէս կ'աշխատի խիստ գովելի ջանասիրութեամք, ունի գաւառաց մէջ 5ի չափ վարժարաններ, որք կը կառավարուին Միացեալ Ընկերութեանց միջոցաւ, և ինք կը վճարէ տարեկան բոլոր ծախքերը :

ԴՐՈՑԱՍԷՐ ՏԻԿԱՆԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հ. Այս Ընկերութիւնն ինչ նպատակ ունի :

Պ. Գաւառաց համար վարժուհիներ հասցնելու նպատակաւ հաստատուած է և կ'աշխատի խիստ գովելի ջանասիրութեամք :

Ընդհանուր ժողովոյ Դիւանի անդամք են՝ Տիկին Սրբուհի Տիւսար փաշայ Ա. Ատենապետ,

Տիկին Աննիկ Է. Զայեան Բ. Ատենապետ, Տիկին Երանուհի Տօքթ. Օրմանեան Ա. Ատենապետիր և Օր. Բերկրուհի Երկանեան Բ. Ատենապետիր : Տեսուն ժողով

Տնօրէն ժողովոյ անդամք են՝ Տիկին Զապէլ Ս. Ֆընտըգլեան Ատենապետ, Օր. Թագուհի Ղ. Պալթազարեան Ատենապետիր, Տիկին Բուբուլ Գ. Նէմցէ Գանձապետ, Օր. Բուբուլ Բարունակեան Համարակալ, Օր. Նուրիկ Սիմէռնեան Տնօրէն վարժարանին և Օր. Վիրգինէ Մ. Գաղանճեան Օդնական տնօրէնի :

Հ. Ի՞նչ վարժարան ունի :

Պ. Ընկերութիւնը գիշերօթիկ եւ ցերեկեայ աշակերտուհեաց համար ունի յ'Օրթաքէօյ մէկ վարժարան :

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԱԶԳ · ԱՐՁԵՍԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Հ. Այս Խնամակալութիւնն ինչ նպատակ ունի :

Պ. Խնամակալ ունի Սովելոց Յանձնաժողովն յաւելեալ գումարով բանալ Արհեստական վարժարան մը : Խնամակալութեան անդամք են՝ Արիկ էֆէնտի Ռւնձեան, Արէլ կիւլպէնկեան, Գառնիկ Ցովակիմեան, Մկրտիչ Մանուկեան, Պատրիկ Կկւլպէկեան և Սահակ Ղազարոսեան :

ԱՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հ. Այս Ընկերութիւնն ինչ նպատակ ունի :

Պ. Այս Ընկերութիւնը Հայարնակ աղքա-

տիկ վարժարաններուն ձրի դասադիրք դրկելու  
նպատակաւ կազմուած է եւ կ'աշխատի սրտի  
մոռօք :

Ընդհանուր ժողովոյ Դիւանի անդամք են՝  
Ութէոս Պէրպէրեան Ատենապետ և Գառնիկ  
Հայկեան Ատենադպիր :

Տնօրէն ժողովոյ անդամք են՝ Յակոբ Ալթուն  
Տիւրի Ատենապետ, կարապետ Պարոննեան  
Ատենապիր, Յովհաննէս Արծրունի Հաշուա-  
կալ, Պօղոս Քէրէստէճեան, Պազտիկ Պապա-  
եան և Յովհաննէս Արամեան :

Խնամութ ՌԽՍՌԽՄԱՍԽՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հ. Այս ընկերութեան նպատակն ի՞նչ է :

Պ. Խիզան գաւառի մէջ նախակրթութիւնը  
ծաւալել, և այս նպատակաւ բացած է չորս  
վարժարաններ :

Ընդհանուր ժողովոյ Դիւանի անդամք են՝ Տ.  
Տաճառ վարդապետ Ռոկաննեան Ա. Ատենապետ,  
Մանուէլ Միրախորեան Բ. Ատենապետ, Եղիա-  
զար Տէօվլէթեան Ա. Ատենապիր և Թորդոմ  
Թորդոմեան Բ. Ատենադպիր :

Տնօրէն ժողովոյ անդամք են՝ Լեւոն Շամ-  
տանճեան Ատենապետ, Վարդան Մեշտուտ-  
ճեան Ատենապիր, Սահակ Գատիֆ Հաշուա-  
կալ, Վարդան Ալաննեան Ծախսարար և Ար-  
քահամ Փանոսեան Գանճապետ :

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ի ԳԱՐԱՌՈՒ

Հ. Գաւառուաց մէջ կրթական բնչ Ընկերու-  
թիւններ կան :

Պ. Սեբաստիոյ մէջ կայ Սենեքերիմեան ըն-  
կերութիւնը, որ իբր 30 տարիէ ի վեր հաս-  
տատուած է, ունի բաւական եկամուտ և կը  
նպաստէ տեղւոյն վարժարանաց յառաջադի-  
մութեանը :

Հ. Խարբերդի մէջ ի՞նչ Ընկերութիւն կայ :

Պ. Սմբատեան ընկերութիւնը, որ երկար  
տարիներէ ի վեր հաստատուած է եւ կ'օգնէ  
տեղւոյն վարժարանաց :

Հ. Եւղոկիա ի՞նչ Ընկերութիւն կայ :

Պ. Ներսէսեան վարժարանին համար կայ չորս  
անձերէ բաղկացեալ Հիմնադրաց ժողով մը,  
որոյ անդամներն են՝ կարապետ Ա. Քէօյլեան,  
կարապետ Ղազարեան, Յովհաննէս Սարափ-  
եան և Տիգրան Ճգնաւորեան :

Ա.յս Հիմնադրաց ժողովը 20 անձերէ բաղ-  
կացեալ Օդնական ժողովոյ մ'աշակցութեամբը  
կը կառավարէ յիշեալ արդիւնաւոր վարժա-  
րանը և թոշակներէ պակսած ծախքերը կը հո-  
գայ իր անձնականէն :

Հ. Երգնկա ի՞նչ Ընկերութիւն կայ :

Պ. կայ Ընկերական վարժարանը, որոյ Նա-  
խադահն է թուլմաս քահանայ Տ. Թովմասեան  
և Ատենապետ-Ծնօրէնը Յակոբ Շաւարչ :

Ցերեկեայ թոշակաւոր վարժարան կամ բարձր  
նախակրթարան է այս, որ կը գտնուի Հայոց

Միացեալ Ընկերութեանց պաշտպանութեանը  
ներքեւ :

Հ. Այնթապ Բնչ Ընկերութիւն կայ :

Պ. Վարդանեան ընկերութիւն, որ Վարդան-  
եան անունով վարժարան մ'ունի :

Ընկերութեան բարերարք են՝ Ն. Նազարէթ-  
եան և Ք. Ղաղարեան :

Հ. Գաւառաց մէջ կան ուրիշ Ընկերութիւնք :

Պ. Այս, կան ի Պրուսա Ռւսութնասիրաց, Կա-  
րին Արծրունեան, և ուրիշ զանազան քաղաք-  
ներ այլեայլ կրթական Ընկերութիւններ :

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ Վ.Ա.Բ.Ա.Բ.Ա.Ն

Ի Ղաղարիա

Հ. Ընկերութեան միջոյցաւ հաստատեալ վար-  
ժարաններ կան ի Կ. Պոլիս :

Պ. Կայ Կեդրոնական վարժարանն ի Ղալա-  
թիա, որ հաստատուած է յատուկ Խնամակա-  
լութեան մը կողմէ, որոյ անդամք են՝ Մկրտիչ  
Խսանան Ա. Ա. Ատենապետ, Յարութիւն Նորա-  
տունկեան Բ. Ատենապետ, Յովհաննէս Թորոս-  
եան Ա. Ա. Ատենապակիր, Յովհէփ Եռոսուֆեան Բ.  
Ատենապակիր, Տիգրան Բարազամեան Գանձա-  
պետ, Արիկ Ունճեան, Անտօն Հանեան, Կա-  
րապետ Սվաճեան և Մինաս Զերազ :

Հ. Ուրիշ Բնչ նոր հաստատութիւն կայ :

Պ. Ի Բերայ Հայ-իգական սեռի Արհեստա-  
գիտական Ռւսութնարանը, որ կը կառավարուի  
յատուկ Խնամակալութեան ձեռօք, որոյ ան-  
դամք են՝ Յովհաննէս Նուրեան, Գրիգոր Կիւ-

միւշկէրտան, Տիգրան Տավուտեան և Կարա-  
պետ Փապութեան :

Հ. Որբանոցն Բնչ է :

Պ. Սրբուհի Մայրապետ Գալֆայեան 1866 ին  
հիմնեց ի Խասպիւղ որբ և անտէր աղջկանց հա-  
մար Որբանոց մը, ուր կը խնամուին ու կը  
դաստիարակուին որոշեալ թուով որբ աղջիկներ:

ՍԱՏԵՆԱԴՐԱՆ

Հ. Ե՞րբ հաստատուած է Ազգային մատենա-  
դարանը :

Պ. 1876ին և կը գտնուի մասնաւոր Ընկերու-  
թեան մը ներքեւ, որոյ Նախագահն է Տ. Խո-  
րէն Եպիսկոպոս Նար-Պէյ, Վերատեսուչ Մա-  
տենադարանին՝ Հայր Ստեփաննոս Վ. Եազլ-  
ճեան և Յակոբ Արշակ Տնօրին :

Այս Մատենադարանի մէջ կան բազմաթիւ  
գրքեր, ձեռագրեր և հնագիտութեան վերա-  
բերեալ նիւթեր :

ՄԱՄՆԱՒՐՈ Վ.Ա.Բ.Ա.Բ.Ա.Ն

Ի Ա. Պոլիս

ՊԵՐՊԷՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

յիւսկիւսար

Հիմնադիր-Տնօրին Աէթէոս Պէրպէրեան .  
վարժարանն է գիշերօթիկ և ցերեկեայ :

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆ

յօրբանոց

Հիմնադիր-Տնօրին Յակոբ Գուրգէն. Վարժա-  
րանն է ցերեկեայ և գիշերօթիկ :



ՍԵԶՈՒԻՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

յիւսկիւտար

Հիմնադիր-Ծնօրէն Մկրտիչ Մէզպուրեան .  
վարժարանն աղջկանց յատկացեալէ և ցերեկեայ  
ու գիշերօթիկ աշակերտուհիներ կ'ընդունուին :

ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

յօրքաբեյ

Հիմնադիր-Ծնօրէն Տ. Սահակ քահանայ .  
վարժարանն է երկսեռ , ուր ցերեկեայ և գիշերօթիկ աշակերտուհիներ ու աշակերտուհիներ կ'ընդունուին :

ՍԵՇՏՈՒՏՁԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

եկնի-Գարու

Հիմնադիր-Ծնօրէն Գէորգ Մէշտուտճեան .  
վարժարանն է երկսեռ , ուր ցերեկեայ և գիշերօթիկ աշակերտուհիներ ու աշակերտուհիներ կ'ընդունուին :

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Դում-Գարու

Հիմնադիր-Ծնօրէն Տիգրան Միրիճանեան .  
վարժարանն է ցերեկեայ և գիշերօթիկ :

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐՔ

Իրենց առատաձեռնութիւններովն և աղջօգուտ ծառայութիւններովը Աղջային Բարերարքաց կարգը դասուելու արժանի եղած են՝

ՅԱՐՈՒԹՅՈՒՆ Ա.ՄԻՒՐՈ. Պէջձեան (Վերատեսուչ փողերանոցի) որ իր կենդանութեանը նպաստած

է բազմաթիւ եկեղեցեաց , վարժարանաց չինութեան դրամական խիստ մեծ օգնութիւններով , ունի բազում կտակներ և Ս. Փրկչեան Աղջային Հիւանդանոցի Հիմնադիրը եղած է :

ՅՈՎՃԱՆՆԵԿՍ Պէջ ՏԱՏԵԱՆ (արքունի վառօդապետ) որ իր ծախսիքը քանի մը օդտակար դրբերու աշխարհացոյց տախտակներ տպել տուած է Հայերէն լեզուաւ , եկեղեցի շինած , Մաքրիգիւղի մէջ և Նիկոմիդիոյ շընակայքը քսանէ աւելի վարժարաններ հաստատած և Օսմանեան մեծաղօր տէրութեան կողմէ Ս. Փրկչեան Աղջային հիւանդանոցին օրական հաց ու միս կապուելու սկզբնապատճառ եղած է :

ԿԱՐԱՊԵՏ Ա.ՄԻՒՐՈ. ՊԱԼԵԱՆ որ իր կենդանութեանը Աղջին և կարօտելոց առատ նպաստներ ըրած ու եալվայի մէջ ունեցած մէկ մեծ ագարակը Ս. Երուսաղէմի կտակ ըրած է :

ՈՐԴԻԿ ԿԻՒԼՊԵԿԵԱՆ՝ Աւետիս , կիւլապի , Գալուստ , Քերովքէ և Դստերքն Մարինոս և Սըրբուհի , որ Կեսարիոյ Թալաս գիւղին մէջ 1848ին հոյակապ վարժարան մը կառուցած են Վարդպատրիկեան (Կիւլպէկեան) անունով և կարնոյ ու Զմիւռնիոյ մէջ յիշեալ վարժարանին ինը-պատ մէյմէկ կրպակ (խանութ ) կտակ ըրած ու դամական առատ նուերներ տուած են :

ՏԵԿԻՆ ՄԱՐԻԱՄ ԿԻՒԼՊԵՊԻ՝ կողակից կիւլապի կիւլպէկեանի , որոյ աղնուական որդիքը՝ Սերովք (հանգուցեալ) և Սարգիս իրենց բարեկիշտակ մօրը կտակին համեմատ նոյնպէս կեսարիոյ Թալաս գիւղին մէջ աղջկանց գեղե-

ցիկ վարժարան մը կառուցած են, պակսածն իրենց քատկէն նուիրելով և անոր բոլոր ծախ- քերն ալ իրենց կողմէ կը հօգան :

ՄԿՐՏԻՉ ՍՈՆՈՍՈՐԵԱՆ ՄԿԿԵՆԱԾ, որ ի կարին հաստատած է բարձրագոյն վարժարան մը և ունի նշանաւոր կտակ :

ՅԱԿՈԲ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄՊԱՐԹԱԼԵԱՆ՝ ԵՐԿՐՈՒ ՀԱՐԱՊԱՏՔ որ ի հիմանէ կառուցած են Զմիւռ- նիոյ Աղդային հիւանդանոցը՝ 10,000 ոսկի ծախքով,

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄՊԱՐԹԱԼԵԱՆ որ իր անձնականէն 8,000 ոսկի ծախք ընելով՝ Զմիւռնիոյ Ա. ՄԵՌ- ՐՈՎԵԱՆ վարժարանը վերաշինած է :

ՏԻԿԻՆ ՄՈՒԹՈՒՀԻ Ա. ՊՈԼԵԱՆ՝ գուստը արքու- նի վառօդապետ բարեյիշատակ Տատեան Ա- ռաքել պէյի (որդի բարեյիշատակ Տատեան Յովհաննէս պէյի) և կողակից արքունի ճար- տարապետ Պալեան Սարգիս պէյի), որոյ կեն- դանութեանը ատեն յայտնած փափագին հա- մեմատ ունեցածները իր մահուանէն ետքը ծախուելով՝ իր անունով կառուցուած է Պէշիկ- թաշի մէջ Մարդունեան վարժարանը :

ՅԱԿՈԲ ՆԵՐՍԻՍԵԱՆ (Միքրիհիսարցի) որ իր անձնականէն 2000 ոսկի ծախք ընելով կառու- ցած է իր հայրենիքին մէջ գեղեցիկ վարժա- րան մը: Այս անձը հարուստ չէր և մեռաւ աղքատութեամբ :

ՅՈՎՀԱՆՆԵՖ ԻԶՄԻՐԵԱՆՅ, որ իր կենդանութեանը տարեկան 120 ոսկի եկամուտ բերող գումար կտակած է, որոյ կէսը Ա. ՄԵՌՐՈՎԵԱՆ մըցա-


նակին յատկացեալ է և կէսն ալ կարնոյ աղ- ջկանց վարժարանի վարժուհւոյ ամսականին:

ՄԻՔԱՅԵԼ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՅԱԿՈԲԵԱՆ Եղբարք, որ Սամաթիոյ Ա. Գէորգ Եկեղեցւոյ վերաշի- նութեան համար 2000 ոսկիէ աւելի նուիրեցին և Միքայէլ Յակոբեան գլուխ կեցաւ շնուր- թեան գործին :

ԱԲԻԿ ԵՒ ՄՈՏԹԵՈՍ ՈՒԽԱՆԵԱՆ Եղբարք, որ Սկիւ- տարի Ա. Կարապետ Եկեղեցին՝ որ մեծ մասամբ այրեցաւ իրը տարի ու կէս առաջ՝ իրենց անձ- նականէն վերաշնուրցին :

ՀՈԳԱԲՈՐՉՈՒԹԻՒՆ Ա. ՓՐԿՉԵԱՆ Ա.ԶԳԱՅԻՆ ՀՅԻԱՆ- ԴԱՆՈՑԻ (Միքայէլ Յակոբեան, Պատրիկ Կիւլպէկ- եան, <sup>(1)</sup> և Տիգրան Կիւմիւշկէրտան) որ 1888 Օգոստ 17 ին ձեռնարկեց յիշեալ բարեպաշ- տական հաստատութեան ի հիմանէ վերաշի- նութեանը, գրեթէ ծախուց կէսն իրենց քսա- կէն նուիրելով և մնացածն ալ բարեսէր աղ- դայիններէ հանգանակելով:

Զերմապէս կը բարեմազմէենք որպէսզի Աղ- դային բարերարաց թիւն աւելնայ մեր մէջ ի միթարութիւն բազմակարոտ Հայ-ազգիւս :



<sup>(1)</sup> Յաղորդած է Պատրիկ Կիւլպէկեան իր հօրը մեծանուն Սերովիկ Կիւլպէկեանի :



ՄՄ Հայագիտական գրադարան



MAL001334

# ԳՐԱՏՈՒՆ

## Գ. ՊԱՂՏԱՏԵՂԱՆ

Կ. Պոլիս, Զարգարական, Յակոբեան խան. Թիւ 43

### ՑԱՆԿ ԳՐԵՆՈՅ

|                                                            | Դր.                 |
|------------------------------------------------------------|---------------------|
| Արքա Քօնսթանտին, լիպարանութիւն բոյկ. բարգ. Օր. Ե. Պ. Օժեան | 6                   |
| Աղօթազիրը, բա Ճամփարց. Հայոս Ս. Եկեղ. Յ. Ազ. Բն. Միքեան    | 15                  |
| Աղօթազիրը, փոքրապիր բա Ճամփարց. Հայոս Ս. Եկեղեցւոյ         | 3                   |
| Անկանոն Բայեր, Գոյդիերէն լեզուի. լիպարազմ. Յ. Ետիեսն       | 5                   |
| Առաջին Քրիս Գոյդիերէն ի Հայ բարգման բեսմթ. Յ. Պերպետեան    | 4                   |
| Առ աշխորդ Անգլիերէն լեզուի. լիպարազմ. . . . .              | 5                   |
| Առ ողջարանութիւն Ամուսնութեան, ըգրակազմ. . . . .           | 4                   |
| Արևելեան Ժողովրդային Եղանակ (Խոհիւ հոգուոյ)Յ. Վարդով       | 2                   |
| Բանալի Անգլիերէն լեզուի, Ա. Մասն . . . . .                 | 4. Պարտասարեան      |
| » » Բ. Մասն . . . . .                                      | 4. Պարտասարեան      |
| Բանալի, եւկու մաս ի միասին . . . . .                       | 9. Պարտասարեան      |
| Բառ գրուկ, Հայերէն ի Տաճերէն և ի Գոյդիերէն Ճ. Ա.           | 4                   |
| Բնայի Դիշերներ, լիպարանութիւն . . . . .                    | Ա. Հանեան           |
| Բնական Պատմութիւն, պատկերազարդ բարգմանութ. Մայսթեան        | 2                   |
| Գաղտնիք Հաւատաքնութեան, պատկ. բարգմանութ. Կ. Ա. Երիսենեան  | 12                  |
| Գեղագրութիւն (Հայերէն և Գոյդիերէն գրոց) . . . . .          | 3                   |
| Գրանի Բառարան Գոյդիերէն ի Հայերէն լրակզմ. Ե. Տեմրենիպաշեան | 12                  |
| Գրաւան Հայկազն Մատկմանց, կիսալիպազմ. . . . .               | Ճ. Ա.               |
| Ըստոնելութիւնը Յուաներէնի, կիսալիպազմ. . . . .             | Յ. Էշիեան           |
| Ընթացք ի Գրոց բարգառ. Ա. Հայու . . . . .                   | Եղիշ. Վ. Դուրեան    |
| » » » Բ. Հայու լրակազմ. . . . .                            | Եղիշ. Վ. Դուրեան    |
| Ընթերցան պատկերազարդ, Բ. Ժայ կիսալիպազմ. Միքամեան          | 2                   |
| Թուարանութիւն, ընդունակ Հայու Ա. կիսալիպազմ. . . . .       | Ս. Միքայելեան       |
| Նոյն (800 եւես) . . . . .                                  | 20                  |
| Նոյն եւերգ Հայու առանձին . . . . .                         | 7                   |
| Թուոս Ազրար, Հայու Ա. ըրբակազմ. . . . .                    | Գ. Ե. Մոռանձեանց    |
| » » Հայու Բ. . . . .                                       | Գ. Ե. Մոռանձեանց    |
| Լոյս և Սօւերը, Քերուածք . . . . .                          | Մ. Անելեան          |
| Հազար և մի Առ արաւոր բանը, ըրբակազմ. . . . .               | Գ. Ար. Արքագործիք   |
| Համալուսազն Բառարան, խօսկցութեամբ . . . . .                | Ճ. Ա.               |
| Հաւանդին Բառեկամք, ըրբակազմ. . . . .                       | Տօֆ. Ա. Յ. Յակոբեան |
| Մանաւալ, ըրբակազմ. . . . .                                 | Գ. Ե. Մոռանձեանց    |
| Նարեկ, մեծապիր կիսալիպազմ. միջոկ գրու                      | 5                   |
| Նարեկ, փոքրապիր պատկերազարդ ուկեզօծ մասն գրու              | 10                  |
| Նոր Աշխարհագրութիւն, ի պէտ Ազգ. Գուրգան. Գ. Մ. Սալտեան     | 7                   |
| Նոր Դասագիրը Հայոց Պատմութեան. կիսալիպազմ. Մ. Գորսմաննեան  | 1½                  |
| Ուղմաս, փոքրապիր պատկերազարդ, կիսալիպազմ.                  | 4                   |
| Քեռականութիւն Գոյդիերէն, տեսուկան և գործ. Ե. Սուրահեան     | 3                   |
| Քեռականութիւն Հայերէն, գործնուկան, կիսալիպազմ. Ա. Առենեան  | 2                   |
| Քրիստոնէական Եսանիական, պատկ. ըրբակազմ. Խ. Ար. Լուսինեան   | 1½                  |
| Քրիստոնէական Եսանիական, պատկ. ըրբակազմ. Խ. Ար. Լուսինեան   | 7                   |
| Պատլիկ Սովորան Սէլիմայ Գ. մեծապիր, սպառլ                   | 20                  |
| Նոյն սինեան ըրբակազմ. . . . .                              | 40                  |